



«ԱՐՔԱՈՒՆ». ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ
ՄՈՆՈԴԵՐԵՆ ԱՆԿԱՆՈՒՄԸ
ՀԱՅ ՔԱՂԿԵԴՈՆԱԿԱՆՆԵՐԻ
ԽՆԴՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌ

NICOLAS MARR

«ARK'AUN», APPELLATION
MONGOLE DES CHRÉTIENS EN
CONNEXION AVEC LE PROBLÈME
DES CHALCÉDONITES ARMÉNIENS

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌ

«ԱՐՔԱՈՒՆ». ՔՐԻՍՏՈՆՅԱՆՆԵՐԻ
ՄՈՆՂՈԼԵՐԵՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ
ՀԱՅ ՔԱՂԿԵԴՈՆԱԿԱՆՆԵՐԻ ԽՆԴՐԻ
ԱՌՆՁՈՒԹՅԱՄԲ

ՄԵՍՐՈՊ ԱՐՁ. ԱՇԾԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ

149



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES

149

ԵՐԵՎԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

2016



11
August

ՀՏԴ 94(179.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Մ 300

**ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ**

Ռուսերենից հայերեն թարգմանեցին

Է. Մ. Շիրինյանը, Ա. Մելքոնյանը, Գ. Սարգսյանը, Մ. Մամյանը

Ռուսերենից ֆրանսերեն թարգմանեց Ս. Ն. Մուրավյովը

համագիր՝ Է. Մ. Շիրինյան

ՄԱՌ- ՆԻԿՈՂԱՅՈՍ

Մ 300 «ԱՐՔԱՈՒՆ». ՔՐԻՍՏՈՆՅԱՆՆԵՐԻ ՄՈՆՂՈՒԼԵՐԵՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ՀԱՅ ԲԱՆԿԵ-
ԴՈՆԱԿԱՆՆԵՐԻ ԽՆԴՐԻ ԱՌՆՁՈՒԹՅԱՄԲ/ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌ: Ռուսերենից
հայերեն թարգմանեցին՝ Է. Մ. Շիրինյանը, Ա. Մելքոնյանը, Գ. Սարգսյանը, Մ. Մամյանը:
NICOLAS YAKOVLEVITCH MARR, ARK' AUN, L'APPELLATION MONGOLE DES
CHRETIENS EN CONNEXION AVEC LE PROBLEME DES CHALCEDONITES ARMÉNIENS,
Par S. N. Mouraviev.- Եր.:
Պատմության ինստիտուտ, 2016.- 256 էջ:

Գրքում ներկայացված է Նիկողայոս Մառի կարևոր և ծավալուն հոդվածներից մեկը՝ «Архаин, монгольское название христиан в связи с вопросом об армянах-халкедонитах» (Византийский временник, СПб., 1905, т. 12, вып. 1-2, стр. 1-68), հայերեն և ֆրանսերեն թարգմանությունները՝ ընդարձակ ներածությամբ, ծանոթագրություններով և ջանկերով: Դատելով հոդվածի խորագրից՝ կարելի է ենթադրել, որ այս հետազոտությունը վերաբերում է մոնղոլերենում «արքաուն» բառի կիրառմանը որպես քրիստոնյաների՝ մոսուլիոնացիներին հայ թողնականների, անվանում: Հիմնարար այս աշխատությունն մեզ, սակայն, լավագույնս պարզաբանված են հայագիտությանն ու վրացագիտությանն առկալող բազում հարցեր, այդ թվում՝ նաև վիճելի և անլուծելի թվացող խնդիրներ:

Մասնավորապես, հետաքրքրական են Տայք և Կղարջք գավառների, ինչպես նաև հայ ջաղկիսյանականների վերաբերյալ Ն. Մառի պիտարկումները, որոնք իխմուլած են տալուրնույթ և տարալեզու բազմազան աղբյուրների վրա:

Առաջին անգամ թարգմանվելով՝ Ն. Մառի այս հետազոտությունը կարող է մեծ հետաքրքրություն ներկայացնել հայագետների, վրացագետների, բյուզանդագետների, արևելագետների և ընդհանրապես Քրիստոնյա Արևելքի մշակույթով հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 94(179.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-860-36-7

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2016
© Է. Մ. Շիրինյան, 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	V
ԱՌԱՋԱՐԱՆ	XIII
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	XIX
ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ՝	
«Արքաւուն». քրիստոնյաների մոնղոլերին անվանումը հայ քաղկեդոնականների խնդրի առնչությամբ	1
ՖՐԱՆՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ՝	
ARK‘AUN, APELLATION MONGOLE DES CHRÉTIENS EN CONNEXION AVEC LE PROBLÈME DES CHALCEDONITES ARMÉNIENS	103
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	193
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԱՆԿ	194
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԱՆԿ	206
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԱՆԿ	214

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

2016 թ. հունիսի 22-24-ը Հայաստանի Բյուզանդագիտական ուսումնասիրությունների ազգային կոմիտեի նախաձեռնությամբ, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի և ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի մասնակցությամբ կայացավ «Պատմական Տայք. պատմություն, մշակույթ, դավանանք» խորագրով միջազգային գիտաժողովը:

Գիտաժողովի շրջանակներում նախատեսվում էր մեկ հատորով հրատարակել 20-րդ դարի նշանավոր կովկասագետ Նիկողայոս Մառի «Արքաուն. քրիստոնյաների մոնոդլերեն անվանումը հայ քաղկեդոնականների խնդրի առնչությամբ» վերնագրով աշխատության հայերեն և ֆրանսերեն թարգմանությունները և բաժանել գիտաժողովի մասնակիցներին: Թեև թարգմանական աշխատանքներն արդեն ավարտվել էին և գիրքը պատրաստ էր, սակայն տպագրության գործընթացն ինչ-ինչ պատճառներով հետաձգվեց և ահա այսօր սույն հրատարակությամբ ընթերցողի դատին ենք հանձնում Նիկողայոս Մառի բացառիկ աշխատության հայերեն և ֆրանսերեն թարգմանությունները՝ ներածությամբ և ծանոթագրություններով:

Նախքան խնդրո առարկա թարգմանությունների մասին խոսելը, հարկ էմ համարում երկու խոսքով անդրադառնալ «Պատմական Տայք. պատմություն, մշակույթ, դավանանք» մեզանում եզակի գիտաժողովի անցկացմանը և արդյունքներին: Դատելով գիտաժողովի վերնագրից՝ կարելի է մտածել, որ այն նվիրված է մեկ պատմական

նահանգի, այն է՝ Տայքին: Այս թեման, սակայն, իր մեջ ներառում է չափազանց լայն խնդիրներ, որոնք վերաբերում են թե՛ պատմական անցյալին և թե՛ մեր օրերին, մասնավորապես ազգային ինքնագիտակցության և դավանանքի փոխազդեցությանը, այլ կերպ ասած՝ հայի այն տեսակին, որն այս կամ այն պատճառով Հայ Առաքելական եկեղեցու դավանանքին չի պատկանում:

Գիտաժողովին մասնակցեցին բազմաթիվ ճանաչված գիտնականներ Հայաստանից և արտերկրից՝ Ֆրանսիայից, ԱՄՆ-ից, Ռուսաստանի Դաշնությունից, Միացյալ Թագավորությունից, Իտալիայից, Հունաստանից, Նիդերլանդներից: Գոհունակությամբ հարկ է շեշտել, որ գիտաժողովն աչքի ընկավ բեղմնավոր աշխատանքով և կառուցողական քննարկումներով: Պետք է նշել, որ մեծ հետաքրքրություն ցուցաբերած և հայտ ներկայացրած որոշ մասնագետներ չկարողացան մասնակցել գիտաժողովին՝ նախօրոք տեղեկացնելով այդ մասին:

Որոշ չափով անսպասելի էր հարևան Վրաստանի գիտնականների բացակայությունը, ովքեր մասնակցության ցանկություն էին հայտնել և անգամ իրենց զեկուցումների հիմնադրույթներն էին ուղարկել, բայց առանց որևէ բացատրության այդպես էլ չժամանեցին: Մինչդեռ այս ոլորտում ծառայած բազում հարցերի լուծումը, կարծես թե պետք է որ հետաքրքրեր հենց վրաց մասնագետներին, ովքեր վերջին մի քանի տարիների ընթացքում մեծ ուշադրություն են հատկացնում այս թեմային: Այս առումով ողջունելի են նրանց նախաձեռնությունները և աշխատանքները, ովքեր ոչ միայն Տայք և Կղարջք նահանգների հարցերին նվիրված տարեկան ժողով են գումարում¹, այլև այդ խնդիրներով զբաղվող մի ամբողջ ինստիտուտ են հիմնել:

¹ Հետաքրքրական է նշել, որ այդ գիտաժողովների աշխատանքային լուծումներն են թուրքերենը, վրացերենը և անգլերենը:

Մյուս կողմից, ցավալի է, որ այս տարածքները հոչակելով միայն վրացականացված անվանումներով՝ Տառ-Կլարջետի, միանգամայն անտեսվում է պատմական այն իրականությունը, որ նախկինում առնվազն մինչև Ը-Թ դարերը, դրանք եղել են հայկական և կոչվել են Տայք ու Կղարջք: Ավելին, Տայքին և Կղարջքին նվիրված վրաց-թուրքական տարեկան կազմակերպվող գիտաժողովներում պարզապես արգելվում է այդ տեղանունների հայկական ձևերի օգտագործումը, ինչի պատճառով և մերժվում է հիմնադրույթների ընդունումը²: Հիմնականում խոսքը վերաբերում է հայ մասնագետներին, որովհետև նրանք են օգտագործում խնդրո առարկա տեղանունների այս սկզբնական ձևերը, մինչդեռ հայկական աղբյուրներին ոչ ծանոթ օտարերկրյա գիտնականներից շատերն անգամ չեն ենթադրում, որ գոյություն ունեն նաև այս տեղանունների հայկական տարբերակները (ինչի մասին շատերը խոստովանեցին մեր գիտաժողովի ժամանակ):

Տեղանունների մասին խոսելիս այս համատեքստում հարկ է նշել, որ այս չափազանց կարևոր թեմային այսօր պատշաճ ուշադրություն չի հատկացվում: Ափսոսանքով պետք է նաև ասել, որ վերոնշյալ գիտաժողովի ընթացքում՝ թե՛ զեկուցումներում և թե՛ քննարկումներում, շատ քիչ անդրադարձանք տեղանունների պատմական և սկզբնական ձևերի կարևորագույն խնդրին: Ընդհանրապես ոչ միայն այս պարագայում, այլև պատմական տարբեր երկրների, բնակավայրերի, վանքերի մասին խոսելիս, պետք է օգտագործվեն այն տեղանունները, որոնցով նշվել է տվյալ տարածքը հետազոտության մեջ արծարծվող դարաշրջանում: Համենայն դեպս, թվում է, որ ի

² Այս մասին տեղեկացանք Թրիլիսիում սույն թվի սնտեմբերին կայանուլիք Տայք և Կղարջք գավառներին նվիրված գիտաժողովի կազմվող միտինգի նրբեք հայ մասնակիցներին ուղղված նամակից (որը կայող ենք տրամադրել ցանկացողներին):

տարբերություն զրոսաշրջային ուղեցույցների կամ հանրամատչելի հողվածների և ուղեցույցների, գիտական ուսումնասիրություններում նման մոտեցումը պետք է կանոն լինի: Մի՞թե անհեթեթություն չէ գրել կամ զեկուցել Ե կամ Թ դարի իրողությունների մասին և վկայակոչել այս կամ այն վայրի այժմ արդեն ձևափոխված՝ արդի անվանումը: Մի՞թե այդ դեպքում չի խախտվում նաև պատմական ճշմարտացիության սկզբունքը: Եվ արդյոք դա շատ լավ մշակված, բայց գիտնականի համար ծուղակային քաղաքականություն չէ՞:

Թերևս հարկ չկա ավելի մանրամասն բացատրել, թե որքան անհրաժեշտ և կարևոր է տեղանվան ճիշտ օգտագործումը: Բերենք միայն մեկ-երկու ցայտուն օրինակ հենց հայկական՝ Տայք ու Կղարջք և վրացական՝ Տաո-Կլարջետի նույն տեղանունների տարաբնույթ արծարծումից. վերը նշված պարագաներում փաստորեն, նեղ մասնագետ չլինելով և տեղանվան սկզբնական ձևի չիմացության պատճառով, գիտնականը չի կարող ճիշտ՝ պատմական տեղեկատվություն ստանալ՝ այս դեպքում այն մասին, որ ժամանակին այդ տարածքները հայկական են եղել (ինչին ականատես եղանք Տայքին նվիրված գիտաժողովի ժամանակ): Երկրորդ, որ այդ տեղանունների նախնական ձևերի օգտագործումը կարող է քաղաքականացվել և պատճառ հանդիսանալ գիտնականի իրավունքի ոտնահարմանը, նրա կամքի ճնշմանը և իրենց կամայական տեսակետների թելադրմանը, ինչպես դա փաստորեն արվում է Տայքին և Կղարջքին նվիրված վրաց-թուրքական պարբերաբար կազմակերպվող գիտաժողովներում:

Թեմային չառնչվող, սակայն շատ խոստուն մեկ այլ օրինակ վերաբերում է հենց մեզ. այսպես՝ երբեմն մենք ինքներս էլ չենք անդրադառնում, որ *Ղարաբաղ* ասելով, որոշ չափով կորցնում ենք մեր Արցախը: Այս ամբողջը գալիս է նաև մեզ ասելու, որ այսօր շատ կարևոր և օգտակար է, միգուցե անգամ հրամայական է հումանիտար գի-

տուությունների տեսանկյունից հատուկ գիտաժողովներ (և միգուցե անգամ հատուկ կոմիտե) կազմակերպել տեղանունների պատմական և սկզբնական ձևերի, դրանց օգտագործման և այս հարցի հետ առնչվող բազում այլ խնդիրներ քննարկելու և դրանց լուծումը գտնելու համար:

Թվում է, որ վրաց և թուրք գիտնականների կազմակերպած միջազգային գիտաժողովներն ունեն հստակ քաղաքական կողմնորոշում ու միտված են Տայքը և Կղարջքը ներկայացնել որպես զուտ վրացական միավորներ, մինչդեռ այդ նահանգներում պահպանվել է ազդեցիկ հայկական հետք ոչ միայն այն ժամանակներից, երբ դրանք Հայաստանի մաս էին կազմում, այլև հետագայում, երբ դարձան Վրաստանի, իսկ մի մասն էլ Թուրքիայի տարածքներ: Տայքին և Կղարջքին վերաբերող պատմական, մշակութային և դավանաբանական հարցերն ուսումնասիրելիս, չի կարելի սահմանափակվել միակողմանի տեղեկություններով, որովհետև դա նշանակում է մեղանչել պատմության և գիտության դեմ: Միայն աղբյուրների՝ լինեն դրանք հայկական, հունական, թե վրացական, համապարփակ և լուրջ գիտական վերլուծությամբ, առանց պատմական տվյալների կամայական աղավաղումների հնարավոր է հասնել խնդրահարույց բազում հարցերի պարզաբանմանը:

Հայաստանի մասնակցությունը նման խնդիրների քննարկմանը ոչ միայն ցանկալի, այլև անհրաժեշտ պետք է համարել, որովհետև բազում են այն հարցերը, որոնք կարելի է լուծել միայն միասնական ուժերով՝ զուտ գիտական հողի վրա հիմնված համագործակցությամբ: Հենց այդ պատճառով է, որ այս միջազգային գիտաժողովի խորհրդանիշ, ինչպես նաև սույն գրքի կազմի համար ընտրվել է Իշ-

խանի վանքի³ Գուրգենի մատուռ-եկեղեցու (1006 թ.) բարավորի լուսանկարը⁴, որտեղ առկա են և՛ հայերեն, և՛ վրացերեն արձանագրություններ, որոնք վկայում են Տայքում այս ժողովուրդների երկուստեք ներկայության մասին մինչև 1915 թ. Հայոց ցեղասպանությունը:

Հարկ է շեշտել, որ այսօր հայ-վրացական գիտական ուսումնասիրությունների ոլորտում առկա համագործակցությունը բավարարչէ, մինչդեռ երկու կողմերն էլ միայն կշահեին դրա առավել ակտիվ դառնալուց: Ընդ որում բոլորիս էլ քաջ հայտնի է, որ խոսքը չի վերաբերում միայն Տայք և Կղարքք նահանգներին կամ քաղկեդոնական հայերին, այլ բազում պատմաբանասիրական, աղբյուրագիտական, աստվածաբանական ու արվեստագիտական ինդիվիդուալներին: Դրանցից մեկն է օրինակ՝ Ժ-ԺԲ դարերի Սև լեռան վանքերի տարածքում, որն այդ ժամանակ, ըստ որոշ պատմաբանների, Կիլիկիայի հայկական պետության մաս էր կազմում, հայերի և վրացիների (ինչպես նաև այլ ազգերի՝ հույների, ասորիների, լատինների) գիտական բուռն գործունեությունը: Սա զարմանալի և հետաքրքրական երևույթ է, որն արժանի է ոչ միայն հատուկ գիտաժողովի նյութ լինելու, այլև գիտնականների խմբային ուսումնասիրությանը (սույնը կարելի է ասել, ի դեպ, նաև վրացական վանական միաբանությունների գործունեության մեջ հայ քաղկեդոնականների ներդրումը հետազոտելու վերաբերյալ): Այս դեպքերում և՛ հայկական, և՛ վրացական նյութերը մեծապես կօժանդակեին միմյանց: Ի միջի այլոց, Ն. Մառի ներ-

³ Իշխանի վանքի մասին մանրամասնում է հենց Ն. Մառը սույն հոդվածում, նշելով, որ վանքի Մարտ տաճարը է դարձում կառուցել է Ներսես կաթողիկոսը, և ինչպես տեղեկանում ենք Գրիգոր Խանձեղցու վրացական վերքից, այդ շրջանում եպիսկոպոսն այս վանքը ծաղկում է ապրել: Լինելով երանկի Ներսես կաթողիկոսի նստավայրը, լստ նույն վրաց վարքագրի, վանքն այնուհետ երկար տարիներ լքված է մնացել, մինչև Ը-Թ դարերում Սուրբ Սաբբասի կողմից վերանորոգվելը, բայց արդեն որպես վրացական վանք, իսկ հետագայում էլ դարձել է վրաց նախկուրտսի նստավայր (Մառ, Արքատն, էջ {22}):

⁴ Այս բարավորն օգտագործել ենք նաև հատվածաբար գիտաժողովի տարբերունչանի (լոգոյի) և ձևավորման այլ աշխատանքների համար, իսկ ներկայացված գրքի շատիկին՝ տեղադրել ենք նույն բարավորը հայնկային անդրադարձով:

կայացվող ֆունդամենտալ աշխատությունը մեծապես կարող է նպաստել ինչպես նշված, այնպես էլ բազում այլ խնդիրների լուծմանը և այս ուսումնասիրության դաշտում նոր մոտեցումների ներգրավմանը:

Պատմական Տայքին նվիրված միջազգային այս գիտաժողովի կարևորությունն այն էր, որ դրա շրջանակներում քննարկվեցին հարցեր, մասնավորապես հայ քաղկեդոնականների մշակույթին նվիրված, որոնք շարունակ անտեսվել և ցայսօր էլ անտեսվում են, ինչի արդյունքում մենք կորցրել և կորցնում ենք մեր մշակութային պատմության մի լայնածավալ շերտ: Հարցը խճողված է նաև այն իրողությանմբ, որ դեռևս խորհրդային շրջանում Հայաստանում այս տարածքներին վերաբերող ուսումնասիրություններ կատարելն արգելքների էր հանդիպում:

Վնիտիեյով մեր խոսքը՝ ցանկանում ենք հայտնել մեր երախտագիտությունը նախ և առաջ Ն.Ս.Օ.Տ.Տ. *Գարեգին Բ* Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ով առաջինը հավատաց այս նախաձեռնության անհրաժեշտությանն ու կարևորությանը և աջակցեց գիտաժողովի կազմակերպմանը: Հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը «Հայագիտական հետազոտությունների ազգային ընկերակցությանը»՝ «Վարդանանց ասպետներ»-ի համատեղ գործակցությամբ (The National Association for Armenian Studies and Research –NAASR, the «Knights of Vartan» Fund for Armenian Studies, jointly administered with NAASR), առանց որոնց հովանավորության այս գիտաժողովը հազիվ թե իրականանար: Մեր շնորհակալական խոսքն ենք ուղղում նաև ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեին մեր առաջարկած համաժողովն ընտրելու համար, ինչպես նաև Հայաստանում Իտալիայի պատվավոր հյուպատոս Անտոնիո Մոնտալդոյին, ով օգնեց մեր հյուրերին կեցության հարցում այս գերձանրա-

բեռնված օրերին (սկստի ունեմ Հոռմի Ֆրանցիսկոս պապի այցը Հայաստան):

Խորին երախտագիտություն ենք հայտնում նաև ՀՀ Մշակույթի նախարարությանն, ի դեմս նախարար տիկին Հասմիկ Պողոսյանի, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրենին՝ Աշոտ Մելքոնյանին, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Պավել Ավետիսյանին, որոնց շնորհիվ կարողացանք իրագործել Ն. Մառի վերոնշյալ աշխատության հայերեն և ֆրանսերեն թարգմանությունները և հրատարակել սույն գրքով:

Շնորհակալություն ենք հայտնում նաև այն բոլոր կազմակերպություններին և անհատներին, որոնք պատրաստակամորեն օժանդակեցին այս ձեռնարկին: Մասնավորապես պետք է նշեմ Բյուզանդագիտության հայկական ազգային կոմիտեի բոլոր անդամներին, հատկապես Լևոն Չուգասյանին, որը մեծապես նպաստեց այս գրքի տպագրմանը:

Վերջում մեկ անգամ ևս ցանկանում եմ շնորհակալություն հայտնել բոլոր զեկուցողներին և մասնակիցներին այս կարևոր գիտաժողովում իրենց լուրջ ներդրելու համար, ինչպես նաև նրանց, ովքեր անշահախնդրորեն ամեն ինչ արեցին գիտաժողովի կայացման համար:

Է. Մ. Շիրինյան

ԱՌԱՋԱԲԱՆ

Սույն առաջաբանում հարկ համարեցինք որոշ բացատրություններ տալ ներկայացվող հայերեն և ֆրանսերեն թարգմանությունների, դրանց հեղինակների և նրանց կիրառած մոտեցումների, ինչպես նաև որոշ տեխնիկական հարցերի վերաբերյալ: Հայերեն թարգմանության աշխատանքները հիմնականում կատարել են Մաշտոցի անվան Մատենադարանի «Հին բնագրերի ուսումնասիրման» բաժնի աշխատողները՝ Արմինե Մելքոնյանը, Մարի Մամյանը, Էլյա Սարիքեկյանը, Էռնա Մանեա Շիրինյանը և Գոհար Սարգսյանը (որն այժմ իր թեկնածուական ատենախոսությունն է ամբողջացնում է Լուվեն-լա-Նյուվի համալսարանում):

Ֆրանսերեն թարգմանության խիստ կարևոր գործն ստանձնեց Սերգեյ Նիկիտիչ Մուրավյովը⁵: Հետաքրքրական է, որ խնդրո առարկա աշխատության մեջ ինչպես 20-րդ դարի սկզբում, այնպես էլ հարյուր տարի անց՝ 21-րդ դարում, իրենց մասնակցությունն են ունեցել փաստորեն միևնույն Մուրավյովների ընտանիքի անդամները: Առաջինը՝ պատմաբան, բանաստեղծ, ուխտավոր և ճանապարհորդ, բազում գրքերի հեղինակ՝ Անդրեյ Նիկոլաևիչ Մուրավյովն է, հայտնի Մուրավյով հինգ եղբայրներից մեկը: Նրա շնորհիվ է, որ մեզ է հասել հետագայում թերևս կորած մի արձանագրություն, որում պահպանվել է «արքայուն» բառի գործածության ևս մեկ դեպք, որից և օգտվել է Նիկողայոս Մառը սույն հոդվածում: Դատելով Անդրեյ

⁵ Սերգեյ կամ Սերժ Մուրավյովը ծնվել է Ֆրանսիայում, ռուս միգրանտի ընտանիքում, և նրա համար թե՛ ֆրանսերենը, թե՛ ռուսերենը մայրենի լեզուներ են: Բացի այդ՝ նա տիրապետում է նաև եռվեզան օգտագործված լեզուներից շատերին:

Մուրավյովի մատենագրական ժառանգությունից՝ նրան հետաքրքրել են թե՛ Հայաստանը, թե՛ Վրաստանը, որոնց վերաբերյալ նա գրել է եռահատոր ուսումնասիրություն⁶:

Իսկ մեզ ժամանակակից Սեդժ Մուրավյովը՝ հայունի դասական բանասեր է և ի թիվս այլ թեմաների զբաղվում է մասնավորապես Հերակլիտեսի գործունեությամբ: Ս. Մուրավյովը պատրաստել և հրատարակել է անտիկ դարաշրջանի հույն փիլիսոփայի երկերի պատահիկների և դրանց հիշատակությունների համապարփակ դիվանը (կորպուսը): Նա երկար տարիներ զբաղվել է նաև հայ գրերի ստեղծման թեմայով՝ առաջարկելով իր ուրույն վարկածն այդ խնդրի վերաբերյալ:

Վերադառնալով խնդրո առարկա հողվածի հայերեն թարգմանությանը՝ նախ նշեմ, որ այն բավականին բարդ էր հետևյալ պատճառներով. ա) Մառի գրվածքներին հատուկ՝ գաղափարների հագեցվածությունը, գրեթե յուրաքանչյուր նախադասությունում, բ) հողվածի յուրահատուկ ոճը և դրան գումարած նախահեղափոխական շրջանի ոուսերենը, գ) օգտագործված են ինչպես մեռած, այնպես էլ արդի լեզուներ՝ հունարեն, լատիներեն, ասորերեն, հայերեն՝ թե՛ գրաբար, թե՛ աշխարհաբար, վրացերեն, արաբերեն, հին սլավոներեն, հին ոուսերեն, անգլերեն, գերմաներեն, իտալերեն, ֆրանսերեն⁷, դ) աղբյուրների թերի հղումները, ե) հողվածի մեծ ծավալը:

Թարգմանությունը կատարելիս աշխատել ենք հնարավորինս մոտ մնալ բնագրին, որի արդյունքում, թերևս փոքր-ինչ տուժել է հայերենը: Հետևելով Նիկողայոս Մառին՝ այս կամ այն հղումը տեղադրել ենք բուն տեքստում, սակայն տարակուսանք առաջացնող դեպքե-

⁶ Муравьев А. Н., Грузия и Армения, СПб., 1848, т. I, 393; т. II, 331; т. III, 315 История и христианская культура Закавказья. Записки путешественника.

⁷ Ծնորակությունամբ նշենք, որ ասորերեն, վրացերեն, արաբերեն բառերը շարվածքի մեջ են ներմուծել Գոնար Մարգսյանը, Արփինե Մարյանը և Մովսես Խենյոն:

րում, ստիպված ենք եղել խախտել հեղինակի սկզբունքը և պարզաբանումներ անել կամ լրացնել հղումը, որպեսզի այն ընկալելի դառնա: Կան դեպքեր, երբ այդքան էլ հասկանալի չէ, թե ինչ հրատարակության մասին է խոսքը, օրինակ. «Շ դարում Էրեթիայում քաղկեդոնականությունը վերջնականապես հաղթեց: Վրացական տարեգրությունների համաձայն (հրատ., էջ 197=թարգմ. Brosset, I, էջ 279)...» (Մառ, Արքաուն, էջ (7)): Նման դեպքերում առաջարկել ենք մեր ենթադրությունը կամ պարզաբանումը բացը լրացնելու համար:

Մեր ավելացրած փոփոխությունները, լինեն դրանք պարզապես հավելումներ կամ ծանոթագրություններ ու թարգմանություններ, ներառել ենք ձևավոր փակագծերի մեջ և նշել համապատասխանաբար՝ (... - Մ. Շ.) և (- թարգմ. Մ. Շ.): Նույն այս փակագծերի մեջ են զետեղված Գոհար Սարգսյանի երկու ճշգրտումները: Իսկ Ս. Մուրավյովի ծանոթագրություններից հետո նշված է՝ NdT (=note du traducteur):

Ն. Մառի կողմից օգտագործված լեզուների բազմազանությունը ևս բավական շատ խնդիրներ առաջացրեցին և ոչ միայն վերը նշված պատճառով. հաճախ այս կամ այն օտարալեզու բառը պարզապես սխալ է գրված (ինչը, թերևս, սպրդել է տպագրության ժամանակ) կամ սխալ է հասկացված և թարգմանված հենց հողվածագրի կողմից: Ասվածը մասնավորապես վերաբերում է այն հատվածներին, որոնք Ն. Մառը մեջբերել է Նիկոն Սկեռնցու գրվածքների սլավոներեն թարգմանությունից: Դրանք ասես հին սլավոներենի ու հին ռուսերենի խառնուրդ են և թերևս այդ պատճառով բավականին սխալաշատ են: Սկզբում, երբ հայտնաբերեցինք նման իրողությունը, կարծեցինք, որ կարելի է մեջբերել այդ հատվածների հունարեն տեքստը, որն արդեն հրատարակել էր Ն. Ադոնցը⁸: Հունարեն և

⁸ Ադոնց Ն., Հայ-ձաբերի ծագման մասին, Երկեր, հտ. Ա, Երևան, 2006, էջ 535-546, հմմտ. ЖМП, 1911, стр. 238-249, арм. перевод см. ՀԱ, 1912, стр. 257-271:

սլավոներեն տեքստերի բաղդատությունը, սակայն, բացահայտեց, թե որքան շատ են այս հատվածում տարընթերցումները (իրականում սլավոներենը կարելի է անգամ խմբագրություն անվանել, որն իր հերթին կարծես թե ձևափոխվել է նաև յուրաքանչյուր ձեռագրային ընտանիք ներկայացնող գրչագրում): Մրան պետք է հավելել այն փաստը, որ Ն. Մառը քաղել էր այս մեջբերումները հիմնականում մեկ ձեռագրից, իսկ որոշ տարընթերցումներ էլ՝ մեկ այլ գրչագրից, ինչպես հենց ինքն է նշում⁹: Հավանաբար, Ն. Մառի խնդրո առարկա հոդվածի սլավոներեն հատվածներում առկա այդ սխալները սերում են հենց այն ձեռագրերից, որոնցից օգտվել է Ն. Մառը, սակայն առանց ճշտելու այդ ընթերցումներն ըստ նշված գրչագրերի: Դրանք ստուգելու հնարավորությունը մենք չունեինք, ուստի ուղղումներ անելու իրավունքն էլ չվերապահեցինք մեզ: Այս պատճառով է, որ որոշեցինք չմիջամտել և ներմուծել սլավոներեն տեքստն ինչպես որ կա, իսկ որոշ դեպքերում էլ պարզապես դիմել նմանահանության (ֆալսիֆիկե) տարբերակին: Հիմնականում Ն. Մառին ենք հետևել նաև մեջբերումների լեզուների պարագայում, օրինակ՝ եթե տեքստը գրաբարով է՝ մենք նույնպես բերել ենք այդ տարբերակը, եթե ոչ՝ թարգմանել ենք աշխարհաբար և գրաբարը մեջբերել տողատակում: Ինչ վերաբերում է այլալեզու բառերի կամ հատվածների թարգմանություններին, ապա Ն. Մառը սովորաբար դրանք թարգմանում է նախորդող կամ հաջորդող նախադասության մեջ՝ նա պարզապես բառացիորեն թարգմանում է դրանք, բայց առավել հաճախ նախապատվությունը տալիս է նկարագրողական բացատրությանը: Այս դեպքերում (որոնք, ի դեպ, գերակշռող են) ավելորդ ենք համարել տալ առանձին թարգմանությունը, իսկ թարգմանության կամ նկա-

⁹ «Նա օգտվել են Լույսնբրախն հանրային գրադարանի 1397 թ. ձեռագրից (П = Пергамт 33) ... որոշ տարընթերցումներ, վերցված կոմս Թ. Ա. Տոլստոյի հավաքածուի մի ձեռագրից, այժմ՝ Լույսնբրախն հանրային գրադարան», Март Н. Я., Арк аум..., стр. 33: XVI

րագրողական բացատրության բացակայության դեպքում, հնարավորինս լրացվել է խմբագրի կողմից: Հիմնականում այդ թարգմանություններն արված են գրաբարից, հունարենից, լատիներենից, հին սլավոներենից և մեկ-երկու եվրոպական լեզվից:

Հարկ է նշել նաև, որ Ն. Մառի աշխատությունների արխիվային նյութերում պահպանվել և մեզ են հասել սույն հոդվածի վերաբերյալ նրա ծանոթագրություններն ու հավելումները: Դրանցից պարզվում է, որ Ն. Մառը հետագայում մտադիր էր շարունակել այս թեման և ընդլայնելով խնդրո առարկա հոդվածը՝ վերահրատարակել այն, օգտագործելով հավելված տեղեկությունները և կատարելով որոշ ուղղումներ: Արխիվային այդ նյութերն ավելի քան կես դար առաջ գտել էր Պ. Մուրադյանը: Դրանք հրատարակվել են երկու անգամ. առաջինը՝ առանձին հոդվածով, իսկ երկրորդը՝ հետամհու լույս տեսած նյա աշխատությունների ժողովածուում¹⁰: Ներկայացվող հրատարակության մեջ, սակայն, որոշեցի չընդգրկել այդ հատվածները, նախ և առաջ, որպեսզի առավել ակնառու լինի տեքստի պատմությունը ու հնարավորինս չմիջամտել և մոտ մնալ սկզբնական բնագրին: Երկրորդ՝ որպեսզի հայերեն ու ֆրանսերեն թարգմանությունները շատ չտարբերվեն միմյանցից: Մինևսյն ժամանակ կարևորագույն որոշ ուղղումներ հաշվի ենք առել՝ ներմուծելով դրանք միայն խմբագրի կողմից արված ծանոթագրություններում:

Նշենք նաև, որ թարգմանվող բնագրի էջերը պահպանել ենք թե՛ հայերեն և թե՛ ֆրանսերեն թարգմանություններում՝ փոխանցելով դրանք քառակուսի փակագծերի մեջ:

¹⁰ Мурадян П. М., Неопубликованная статья Н. Я. Марра об «Аркауне» (К столетию со дня рождения академика П. Я. Марра), Известия Академии Наук Армянской ССР, 1964, 12, стр. 56–57=Мурадян П. М., Кавказский культурный мир и культ Григория Просветителя, Ереван, 2012, стр. 290–292.

Գրքի վերջում զետեղված են Էյյա Սարիբեկյանի և Մարի Մամ-
յանի կազմած օգտագործված գրականության, ինչպես նաև անձնա-
տունների, տեղանունների ցանկերը (որտեղ նշված են թե՛ ոուսերեն
բնագրի և թե՛ հայերեն թարգմանության համապատասխան էջե-
րը): Ցանկերում (ինչպես և այլուր) հիմնականում պահպանվել է
բնագրի ուղղագրությունը: Անձնանունների ցանկում նույնանուն
անձերը թվարկված են ժամանակագրական կարգով: Բնագրում
բացակայող և լրացված անձնանուններն ու տեղանունները ցանկե-
րում շեղագիր են ներկայացված:

Ամփոփելով՝ ցանկանում ենք շնորհակալություն հայտնել Նազե-
նի Ղարիբյանին (ով սրբագրել է ֆրանսերեն թարգմանությունը),
ինչպես նաև Վարդան Դերիկյանին, Ալեքսան Հակոբյանին սույն
տեքստը կարդալու և օգտակար նշումներ կատարելու համար՝ մեզ
վերագրելով տեքստում առկա բոլոր հնարավոր սխալները կամ բաց-
թողումները:

Է. Մ. Շիրինյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1905 թ. լույս տեսած Նիկողայոս Մառի «Արքաուն. քրիստոնյաների մոնղոլերեն անվանումը հայ քաղկեդոնականների խնդրի առընչությամբ» (Март Н. Я., Аркаун. монгольское название христиан в связи с вопросом об армянах-халкседонитах, Византийский врсменник, СПб., 1905, т. 12, вып. 1-2, стр. 1-68) հոդվածի ընտրությունը «Պատմական Տայք. պատմություն, մշակույթ դավանանք» միջազգային գիտաժողովի շրջանակում երկու լեզվով թարգմանելու և տպագրելու համար իհարկե պատահական չէր և պայմանավորված էր մի քանի պատճառներով:

Նախ՝ հայագիտությանը և վրացագիտությանը վերաբերող բազում հարցեր, այդ թվում նաև կնճռոտ և անլուծելի թվացող խնդիրները լավագույնս պարզաբանված են հենց այս հոդվածում: Երկրորդ՝ ռուսերեն հին ուղղագրությամբ գրված (ինչը, թերևս, որոշ հայագետների համար այս աշխատանքին ծանոթանալու դժվարություն էր հանդիսանում) կարևորագույն այս հոդվածը երբևիցե այլ լեզուների չի թարգմանվել: Երրորդ՝ սույն աշխատությունը դժվարըմբռնելի է անգամ ռուսերենով և ոչ միայն հին ռուսերենի և հեղինակին բնորոշ վերամբարձ լեզվի, այլև տարաբնույթ և տարալեզու (մոտ տասնմեկ լեզվով) աղբյուրներից վկայակոչված հատվածների գիտական բարդ քննարկման պատճառով:

Որպես մեկ այլ պատճառ կարելի է մատնանշել նաև այն փաստը, որ Ն. Մառն ազգությամբ վրացի էր (մոր կողմից, իսկ վաղամեռիկ հայրը շոտլանդացի էր) և մեծացել էր վրացական միջավայրում, ուստի և նրա ասածները չեն կարող մեկնաբանվել որպես ազ-

գայնամուկական հայանպաստ մոտեցումներ. ամբողջ իր գործունեությանմբ նա ապացուցել է, որ գիտությանը նվիրված իսկական գիտնականի համար գիտական ճշմարտացիությունը և ստուգությունն ավելի բարձր է, քան ազգային, բարեկամական, ընկերական կամ այլ հարցերը:

Ներկայացվող հոդվածի արժանիքները, որոնք շատ ու շատ ավելին են քան թվարկվածները, համոզեցին մեզ, որ այս աշխատությունն անհրաժեշտ է թարգմանել և ոչ միայն հայերեն, այլև եվրոպական լեզուների, ինչը և որոշվել էր հրատարակել վերոնշյալ գիտաժողովի շրջանակներում:

Նորարար ու ապշեցուցիչ թե՛ ծավալով և թե՛ բովանդակությամբ Նիկողայոս Մառի քննարկվող աշխատությունը, թեև գրվել է ավելի քան 100 տարի առաջ, սակայն այսօր էլ չափազանց արդիական է: Հեղինակի կողմից այստեղ արծարծած հարցերից շատերը՝ որպես առանձին խնդիրներ, արժանի են հատուկ ուսումնասիրության: Ինչպես նշում է հենց ինքը Ն. Մառը, սույն հոդվածը հարցեր բարձրացնող և լուծումներ առաջարկող աշխատանք է, որը միտված էր հրավիրելու գիտնականների ուշադրությունը բազում խնդիրների վրա, որոնցից շատերն ավաղ այդպես էլ մնացել են դեռևս չլուծված և չպարզաբանված: Ի դեպ, նման մոտեցմամբ Ն. Մառը մեկ անգամ ևս հաստատում է այն թեզը, որ ճիշտ հարցադրում անելը մեծ արվեստ է և խորը գիտելիքներ է պահանջում: Ինչպես նշվեց վերը, հեղինակը հենց ինքն էր մտադիր վերահրատարակել այս հոդվածը՝ համալրելով նորահայտ նյութերով:

Արդ, տեսնենք, թե որոնք են Ն. Մառի խնդրո առարկա հետազոտության մեջ արծարծվող գլխավոր հարցերը: Անշուշտ, բոլոր խնդիրների թվարկումը բազմաթիվ էջեր կգրավեր: Այստեղ, պարզապես ցույց տալու համար Ն. Մառի կողմից առաջ քաշված խնդիրների բազմազանությունը, խորությունը և հագեցվածությունը, կնեղկա-XX

յացվեն միայն հողվածի առաջին քսան էջերում զետեղված քննարկվող հարցերը: Այսպիսով, հողվածում ակնարկված և քննարկված թեմաներն են. քաղկեդոնականությունը Հայաստանում, Հայոց ազգային եկեղեցին և մշակույթն այդ համատեքստում, Ը դարում դավանաբանական տարածայնությունների սրացումը քաղկեդոնականությունը չընդունող և ընդունող հայերի միջև, դավանաբանական զարգացումների և փոփոխությունների հետ սերտաճած Տայք և Կղարջք գավառների պատմությունը միջին դարերում և այդ տարածքների հետագա ճակատագիրը: Հեղինակն անդրադառնում է Թ դարի սկզբի մեկ այլ ճակատագրական պահի, երբ քաղկեդոնական հայերը վրացիների և հույների օգնության շնորհիվ գրավել էին հյուսիսարևմտյան Հայաստանը՝ Տայք և Կղարջք գավառներով հանդերձ, ու տարածքի տիրող իշխանները՝ Արտանուջի Բագրատունիներն արդեն քաղկեդոնականներ էին, ինչը ևս նպաստում էր քաղկեդոնականության հաղթանակին: «Քննարկվում է քաղկեդոնականության թափանցումը նաև Սյունիք՝ Վրաստանի և Աղվանքի ճանապարհով, Աղվանքի վրացականացված մասի ժողովրդագրական փոփոխությունները, Բագրատունյաց թագավորական տան քաղկեդոնականացնելու փորձերին վերաբերող տեղեկությունները, Խառանի եպիսկոպոս Էպիկուրայի կամ Թեոդոր Աբուքուրայի այցը Հայաստան և Աշոտ իշխանի ներկայությամբ տեղի ունեցած նրա դավանաբանական բանավեճի հակասական արտացոլումը վրացական և հայկական աղբյուրներում, տեղեկություններ Միջագետքի Նանա կամ Նոննոս ասորի սարկավագի և Աբուքուրայի հետ ունեցած բանավեճի մանրամասնությունների մասին, Նոննոսի գրչին պատկանող Հովհաննու Ավետարանի մեկնության կարևոր նախաբանի քննարկումը և դրա ռուսերեն, ցավոք, ոչ ճշգրիտ թարգմանությունը: Արժարժվում են քաղկեդոնականության դեմ պայքարում հայերի և հակոբիկյանների հարաբերությունները, քաղկեդոնականության պայքարից հաղթանակած դուրս եկած Հայոց

եկեղեցին և դրա պատճառով կրած աստվածաբանական ընկալումների փոփոխությունները, քաղկեդոնական և հակաքաղկեդոնական հայերի ազգային գիտակցությունը, հայ քաղկեդոնականների ապագայնացումն ու ծուլումը վրացիների, հույների և ասորիների հետ, և դրա պատճառով Վրաստանի մշակութային կյանքի և տարածքների հարստացումը՝ Տայք և Կղարջք շրջաններով, հայ քաղկեդոնական Գրիգոր Բակուրյանի և Բուլղարիայում գտնվող Պետրիցոնի Բաշկովո վանքի հետ կապված բազմաթիվ հարցականներով խնդիրները և այլն: Փաստորեն քսան էջի սահմաններում քսանից ավելի հարցեր են արծարծված: Ավելին, թվարկված բոլոր խնդիրները կարևոր են և ոչ միայն հայ և հարևան, այլև այս իրադարձությունների մեջ ներգրավված մյուս ժողովուրդների պատմությունը ճիշտ լուսաբանելու համար:

Աշխատության հետագա շարադրանքը ևս բազմաթիվ ուշագրավ տեղեկություններ է պարունակում, որոնք նույնպես մի շարք կարևոր և խճճված հարցեր են արծարծում: Այսպես օրինակ՝ հողվածագիրն անդրադառնում է պավլիկյանների պատմությանը՝ ջանալով այն տեղադրել նաև քաղկեդոնականների խնդիրների ուսումնասիրման համատեքստում: Հետաքրքրական են նաև բոգոմիլներին վերաբերող նյութերը և նկատատուները:

Հայագիտության ոլորտին առնչվող այստեղ առկա խնդիրներից շատերը մեզանում սակավ կամ գրեթե ուսումնասիրված չեն: Նման իրողությունը պայմանավորված էր սկզբում դավանաբանական պատճառներով, իսկ հետագայում՝ հսորհրդային Միության վարած քաղաքականությամբ: Մինչդեռ Ն. Մառի դիտարկումները և առաջարկները կարող են օժանդակել իրար այդքան նման, բայց այնքան միմյանցից տարբերվել ցանկացող երկու հարևան ժողովուրդների միջև եղած վիճարկելի մշակութային հարցերի լուծմանը՝ լինեն դրանք այբուբենի, գրվածքների կամ հուշարձանների տեսքով, մա-XXII

նավանդ որ վերջիններից շատերը չեն գտնվում ո՛չ Հայաստանի, ո՛չ Վրաստանի այժմյան տարածքներում: Հավատացած ենք, որ այդ հարցերի միասնական հետազոտությունից կշահեն և՛ դրանց հետ կապված ժողովուրդները, և՛ նրանց մշակույթը:

Մասնավորապես հետաքրքրական են Ն. Մառի՝ Տայք և Կղարջք գավառների, ինչպես նաև հայ քաղկեդոնականների վերաբերյալ դիտարկումները, որոնք հիմնված են տարաբնույթ և տարալեզու բազմազան աղբյուրների վրա: Այս խնդիրները, կարծես թե դուրս են մղում աշխատության վերնագրում իսկ հայտարարված հիմնական թեզը՝ «արքաուն» բառի գործածությունը որպես քրիստոնյաների՝ մասնավորապես հայ քաղկեդոնականների անվանում մոնղոլերենում: Նշված հարցերի ուսումնասիրությունը չափազանց կարևոր է, քանի որ դրանք իրապես «նույնիսկ մասնագետների շրջանում, շղարշված են կարծրացած կարծիքների պատճառով, որոնք հաճախ ազգային կամ դավանաբանական նախապաշարումների արդյունք են», ինչպես իրավամբ նկատում է Ն. Մառը (Մառ. Արքաուն, էջ [1]):

Մեր ուշադրության կենտրոնում հիմնականում լինելու է Մեծ Հայքի տասնչորսերորդ Տայք նահանգը, որն ընդունված էր անվանել նաև Խորագույն Հայք (Armenia Profunda) և այդտեղ բնակվող այսպես կոչված քաղկեդոնական հայերը: *Քրիստոնեական աղբյուրներում, բացի հայկական բնագրերից, Տայք տեղանունը վկայված չէ և ոչ մի այլալեզու բնագրում: Այս տեղանունը հունարեն վերարտադրությամբ պահպանվել է միայն հայ-քաղկեդոնական հայտնի՝ «Narratio de rebus Armeniae» («Պատմություն Հայաստանի իրադարձությունների մասին»¹¹) սկզբնաղբյուրի մեջ: Նման բնույթի մի քանի*

¹¹ Աշխուրհաբար թարգմանությունը կատարել է լուսանոցի Հր. Բարթիկյանը՝ «Narratio de rebus Armeniae» հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի կայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, հայ-քյուզանդական հետազոտություննր, հուն. Ա. «Աճմյան մատենաշար» Գ՛/1, Երևան, 2002, էջ 97–110: «Narratio de rebus Armeniae» տեխնիկական Հր. Բարթիկյանը թարգմանում է որպես «Պատմություն հայոց հարցի մասին»:

բնագրերի (օրինակ՝ Փոտ պատրիարքի «Թուղթ առ Ջաբարիայ» կամ Արսեն Սափարացու «Վրաց և հայոց բաժանման մասին») հետ այս աղբյուրը, պատմագրության և պատմության հայեցակետից շատ կարևոր նշանակություն ունեն, քանի որ դրանցից ուշագրավ, զանազան ոլորտներ լուսաբանող տեղեկություններ կարելի է քաղել: Պատմության ճիշտ ըմբռնման համար կարևոր փաստեր և բազմաթիվ մանրամասնություններ պարունակող այդ վկայությունները վերաբերում են ոչ միայն Հայոց, այլև ընդհանրապես արևելյան եկեղեցիներին, որոնք՝ ելնելով իրենց դավանաբանական կողմնորոշումից՝ հաճախ լռության են մատնել, կամ՝ զանց են առել, կամ էլ անգամ ոչնչացրել են նման տվյալները:

Արդ, միայն հունարենով մեզ հասած «*Narratio de rebus Armeniae*» երկում մասնավորապես ասվում է. «Այն ժամանակ էր, որ հերետիկոս Աբրահամ կաթողիկոսը ստիպեց Հովհաննեսի կողմակից եպիսկոպոսներին նզովել Քաղկեդոնի ժողովը, հակառակ դեպքում հեռանալ Հայաստանի շրջաններից: Վերջիններս չհամաձայնեցին և նրանցից ոմանք անցան Տայք, ոմանք հոռոմոց երկիրը և վախճանվեցին օտարության մեջ»¹²: Հունարեն բնագրում ունենք *Táris*¹³, որն արտացոլում է. իհարկե, «Տայք» հայկական տեղանունը: Սա, բնական է, քանի որ Է դարի հենց սկզբում գրված *Narratio*-ում չէր էլ կարող օգտագործվել այլ տեղանուն, հարցն այստեղ պարզապես այդ եզրի հունարեն ձևով վկայակոչված լինելու մասին է:

Հիմք ընդունելով պատմական աղբյուրների տվյալները՝ կարելի է ասել, որ մինչև Ը-Թ դարերը, խոսել Տայքի մասին և վկայակոչել այս տեղանվան վրացականացված ձևն առնվազն անհասկանալի է

¹² Ասրթիկյան, «*Narratio*...», էջ 107:

¹³ G. Garitte: *La Narratio de rebus Armeniae*. Édition critique et commentaire. Series: Corpus Scriptorum Christianorum Orientalium, Subsidia 4; Corpus Scriptorum Christianorum, 132. Louvain, 1952. § 115.

հետևյալ պատճառներով. գրեթե մինչև Է դարը Տայքը եղել է լիովին հայկական տարածք (Դ-Է դարերում եղել է Մամիկոնյան իշխանական տոհմի կալվածքը), իսկ 591 թ.՝ Հայաստանի երկրորդ բաժանման արդյունքում, ի թիվս այլ տարածքների անցել է Բյուզանդական կայսրության տիրապետության տակ: Հենց մեր հոդվածագիրը՝ Ն. Մառը, թեև ավելի շատ օգտագործում է այս տեղանվան վրացականացված ձևը (որովհետև հիմնականում խոսում է ավելի ուշ շրջանների մասին), սակայն մեջքերում է նաև հին՝ հայկական տարբերակը, օրինակ. «Այդ ժամանակ (Թ դարի սկզբին – Մ. Շ.) հյուսիսարևմտյան Հայաստանը Կղարջք (Կլարջեթիա) և Տայք (Տառ) գավառներով արդեն նրանց ձեռքում էր» (Մառ, Արքաուն, էջ 161):

Կովկասյան տարածաշրջանի պատմության և մշակույթի համար Տայքը նշանակալից դեր է ունեցել: Լինելով մշակութային կարևոր կենտրոններից մեկը՝ այստեղ է ձևավորվել հոգևոր կյանքի առանձնատուկ մի միջավայր. ինչին նաև մեծապես նպաստել է վանականության շարժումը, որն այստեղ ծաղկել է դեռևս Է դարում և սերտորեն առնչվում է Ներսես Գ Տայեցու (Իշխանեցու) (641-661) անվան հետ: Թ դարում այդ շարժումն է՛լ ավելի է զարգանում իշխան Ներսեսի՝ որդի Գրիգոր Խանձոտելիի կամ Խանձոտեցու շնորհիվ: Տայքի աշխարհագրական դիրքը՝ այստեղով անցնող՝ դեպի Տրապիզոն տանող գլխավոր մայրուղին, ինչպես նաև Բյուզանդիայի հետ ունեցած քաղաքական ու մշակութային կապերը ևս նպաստում էին նահանգի զարգացմանը: Անշուշտ, Տայքի յուրահատուկ և ինքնատիպ մշակութային նկարագիրն առաջին հերթին պայմանավորված էր տաշածքի բնակչությամբ:

Հիմնականում դրանք քաղկեդոնական հայերն էին, որոնց անվանում են նաև երկաթնակ, հունադավան հայեր կամ՝ հոռոմներ և ծաթեր: Այս բոլոր անվանումները, ի դեպ, որոշ չափով թերի են ուղղալիս՝ հույների, վրացիների, ասորիների դավանանքն ընտրած

հայերի դավանական պատկանելիությունը սահմանելու համար, բայց որովհետև Ն. Մառի սույն աշխատության մեջ հիմնականում օգտագործված է հենց այս եզրը, մենք նույնպես կիրառում ենք այն:

Քաջ հայտնի է նաև, որ Տայքի անջատումը Հայաստանից պայմանավորված էր ոչ միայն աշխարհաքաղաքական հանգամանքներով, այլև դավանաբանական պատճառներով. դառնալով հայ քաղկեդոնականության խոշոր կենտրոն և ունենալով զարգացած մշակույթ, հայ քաղկեդոնականները նախընտրեցին փոխել իրենց ազգային պատկանելիությունը, բայց ոչ դավանանքը: Նրանք անցան ուղղափառների կամ հունադավանների կողմը, իրենց հետ տանելով նաև ինդրո առարկա տարածքները, որոնք արդեն կրում էին հարուստ մշակութային ժառանգություն:

Համենայնդեպս, կարելի է ասել, որ Զ դարից ի վեր դավանաբանական հարցերն առաջնային տեղ էին գրավում ամենուրեք, հատկապես Հայաստանում: Իսկ Տայքի պարագայում այդ հարցերն է՛լ ավելի սրված էին: Արդյունքում, այստեղ ազգային պատկանելիությունը ոչ միայն սերտաճեց դավանանքի հետ, այլև մարդիկ տնով-տեղով՝ իրենց պատկանող տարածքներով, փաստորեն, հրաժարվեցին իրենց հայրենիքից՝ նախընտրելով ապրել և գործել դավանակից երկրի կազմում: Ի դեպ, այսպես պատահեց նաև Բյուզանդիայում ապրող հայերի մեծ մասի հետ: Այսինքն, կարելի է ասել (և ինչպես դա ամրապնդվում է նաև Ն. Մառի ինդրո առարկա հոդվածում բերված տեղեկություններով), որ Տայք և Կղարջք գավառները հենց նման ճակատագրի արժանացան, որովհետև այդտեղ ապրող հայերի դավանափոխությունը զանգվածային բնույթ էր կրում:

Քաղկեդոնական հայերի սովոր զանգվածի առաջացման և գոյության հարցը որոշ գիտնականներ մեկնաբանում են որպես Բյուզանդիայի կողմից հատուկ ճնշման քաղաքականության արդյունք՝ պարտադրված դավանափոխություն: Մյուս մասնագետները, որոնց

թվում առաջին հերթին հենց Ն. Մառն է, համարում են, որ դրա պատճառները շատ ավելի խորն են¹⁴: Նշված երկու կարծիքներն էլ համոզիչ են թվում: Ն. Մառը, խոսելով «անկեղծորեն և ինքնակամ քաղկեդոնական դարձած» հայերի զանգվածի մասին, ասում է, որ այդ եղելությունն «ավելի հին ավանդույթներ ուներ և պայմանավորված էր ավելի բարդ պատմամշակութային պատճառներով», սակայն չի բացատրում, թե որոնք էին դրանք:

Ըստ իս, այդ երևույթը սերտորեն կապված է ազգային ինքնագիտակցություն և դավանանք փոխհարաբերության բարդ խնդրի հետ, որը մեզանում գոյություն է ունեցել դարեր շարունակ և ցայսօր էլ առկա է: Տվյալ պարագայում, վերն ասվածը թերևս կարելի է բացատրել քաղկեդոնական հայերի նախնական (պրիմիտիվ) քրիստոնեության գաղափարախոսությանը «նվիրվածությամբ», տարվածությամբ: Այդ գաղափարախոսության համաձայն, ինչպես նշում է Պողոս առաքյալը, չէին ճանաչում «ո՛չ հրեա, ո՛չ հեթանոս»: Այդ ժամանակ էր, որ անտիկ շրջանից սերող անծանոթին ուղղված կաղապարային հարցումների՝ «ո՞վ ես», «ծնողներդ ո՞վքեր են», «հայրենիքդ ո՞րն է» պատասխանները փոխարինվեցին քրիստոնեականով. «Քրիստոնյա եմ, Բարձրյալն է իմ հայրը, իսկ հայրենիքս՝ երկնային արքայությունն է»¹⁵:

Կրոնն ամեն ինչից բարձր դասելու, քրիստոնեությանն անմնացորդ նվիրվելու գաղափարախոսությամբ տարված հայ քրիստոնյա-

¹⁴ Տե՛ս Մառ, Այբբույն, էջ [29], ծն. 2. «Այստեղ ես չեմ շոշափում Ինճիճյանի այն կարծիքը, որ հնում հայերի քաղկեդոնական լինելը յացառառվես հույների քաղաքական ճնշումների կամ էլ հունական դավանանքն ընդունելու միջոցով հույների մեծաբանն արժանանալու առանձին անհետևների փառախորության հետևանք էր (նշվ. աշխ., էջ 304): Այս սովորային երևույթների առկայությունը ես չեմ բացառում, սակայն տվյալ պահին ինձ հետաքրքրում է հայերի այն հատվածը, որն անկեղծորեն և ինքնակամ դարձավ քաղկեդոնական, ինչն ավելի էին ավանդույթներ ուներ և որոշմամբ ավորված էր ավելի բարդ պատմամշակութային պատճառներով, քան Բյուզանդիայի քաղաքական ճնշումը կամ հայերի միջից առանձին բանասերլուները ու փեսասերների ջանքերը»:

¹⁵ Ավելի մանրամասն տե՛ս Շիրիյան Է. Մ., Քրիստոնեության տարածման և ամրապարկման սուսնճանախոսությունները. «Տարեգիրք» Ա, ԵՊՏ Աստվածաբանության ֆ-ու. Երևան, 2006, էջ 98-105:

ների օրինակները, հատկապես Փոքր Հայքում, մեզ հայտնի են պատմությունից, օրինակ՝ «Եվստրատիոսյանց» վկաները, որոնց մեծ մասը հայեր էին (ընդ որում դա վկայված է ոչ թե այս վկաների վարքի հայերեն թարգմանության մեջ, այլ Սիմեոն Մետափրաստեսի կողմից): Որպես կանոն, նրանք կրում էին հունական անուններ, բայց ունեին հայկական անուններ ևս. հենց Եվստրատիոսի անունը Հուսիկ էր: Դա թերևս պայմանավորված էր նրանով, որ հայերը դեռևս չունեին իրենց մատենագրությունը, ուրույն քրիստոնեական մշակույթը և, Արևմուտքում քրիստոնեականի ու հունականի, իսկ Արևելքում էլ քրիստոնեականի և ասորականի միջև կարծես թե հավասարության նշան էր դրվում:

Կարելի է առարկել, որ Է դարում սա արդեն վաղուց անցած եղելություն էր, սակայն հաշվի առնելով հայերի ավանդապահությունը և վաղ քրիստոնեության շատ ու շատ մոտեցումներից կառչելը, այս տեսակետը, թերևս, այնքան էլ վիճելի չի թվա: Որոշ չափով նման մտայնությունը կապված էր նաև այդ ժամանակ առկա դավանաբանական լարվածության, ինչպես նաև շատ քրիստոնյաների փնտրչուտուքների հետ, որի արդյունքում շատերը կարծես թե ելք էին գտնում ավելի մաքուր և պարզ նախնական քրիստոնեության կանոնների, ապրելակերպի մեջ: Թերևս դրանով կարելի է նաև բացատրել, որ սկսած Է դարից այս տարածքում վանական շարժումը մեծ թափ հավաքեց և բազում վանքեր կառուցվեցին, մասնավորապես Ներսես Շինարարի կողմից:

Ըստ որում զարմանալին այն է, որ թե՛ քաղկեդոնական և թե՛ ոչ քաղկեդոնական հայերի համար հարազատ էր նախնական քրիստոնեության գաղափարախոսությունը և դրան շատ մոտ կանգնած Հայոց եկեղեցու վաղ շրջանի ուղղվածությունը: Անսպասելիորեն նրանք մեղադրում են մեկմեկու հին հայկական արժեքներին դավաճանելու մեջ: Քաղկեդոնական հայերը նույն ոգևորությամբ էին ընդունում և XXVIII

մեծարում Գրիգոր Լուսավորչին, Սահակ Պարթևին և Մեսրոպ Մաշտոցին: Հայոց գրերը և վաղ շրջանի հայ մատենագրությունը նույն-չափ սրբազան էր նրանց համար:

Փաստորեն ստացվում է, որ նրանք հրաժարվում էին իրենց ազգային պատկանելիությունից, բայց ոչ իրենց ազգային մշակույթից և առաջին հերթին՝ իրենց գրից, այբուբենից: Սա չափազանց հետաքրքրական երևույթ է, որը կապված է ընդհանրապես գրի և գրականության հանդեպ հայերի ունեցած վերաբերմունքի հետ¹⁶: Դրա արդյունքում է, որ մեզանում գրվում էին չափածո ստեղծագործություններ, որոնցում Հայոց այբուբենի յուրաքանչյուր տուտ անձնակա-նացված խոսում է իր մասին¹⁷, ձեռագրերն անշունչ առարկաներ չէին (և չեն) համարվում, մարդկանց պես դրանց համար գլխահարկ էին հավաքում և ազատում գերությունից (Գագ ամրոցի բնակիչների փրկագին տալը թե՛ Վանական Վարդապետի և թե՛ գերված ձեռագրի համար), հաճախ ոչ միայն իրենց, այլև հարազատների կյանքն էին վտանգում գրչագիրը փրկելու համար (Մեծ Եղեռնի ժամանակ Մշո Ճառընտիրի փրկումը երկու կանանց կողմից): Թերևս նույն այս համատեքստում պետք է տեղադրել նաև այսպես կոչված հայատառ թուրքերենի երևույթը:

Ասվածին կարելի է հավելել մեկ այլ ուշագրավ եղելություն. փաստորեն դավանաբանական հողի վրա իրենց հայրենակիցներից անջատված քաղկեդոնականներն այնուամենայնիվ նույնպես ընդու-նում էին հայերին որպես մեղադրանք առաջադրվող *Երևբարբյանի*

¹⁶ Այս մասին ավելի մանրամասն տե՛ն Shirinian E. M., «The Letter of Love and Concord», Armenian book-printing in Italy. 500th Anniversary of Armenian Print – Bologna, University of Bologna, 2016, p. 14-25:

¹⁷ Տե՛ն Դավիթ Անևադթին վերագրվող հանելուկները, օրինակ՝ ՄՄ, ձև. 3931, 388ու. ՄՄ, ձև. 9071, 15բ-16ու, ՄՄ, ձև. 2679, 154 ու, ՄՄ, ձև. 126. 176բ. ՄՄ, ձև. 1869, 1ու: Հմմտ. նուև: Մնացավանյան Ա., Հայ միջնադարյան հանելուկներ, Երևան, 1980. Էջ 171, Դերիկյան Վ., Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, մասն IX, Երևան, 2012. էջ 5-8:

տնօրինական հավելվածը՝ «...որ *խաչեցար* վասն մեր,...»: Հենց այս պատճառով է, որ դեռևս պաղեստինյան վանքերում հայ քաղկեդոնականներից պահանջվում էր *Երեքսրբյան*-ը երգել հունարենով, որպեսզի չգայթակղվեն ավելացնել «*խաչեցար*»-ը: Այս հարցը, ի միջի այլոց, հետաքրքրական է նաև այն առումով, որ Ն. Մառը թե՛ այս և թե՛ այլ հոդվածներում անդրադառնում է դրան՝ նշելով, որ իրականում ինդրո առարկա հավելումը կիրառվել է նաև նախաքաղկեդոնական եկեղեցում և այն ոչ թե նորամուծություն է, այլ վաղ, նախնական եկեղեցուց է մնացել, որը պահպանվել է որոշ եկեղեցիներում:

Հետաքրքրական են նաև Ն. Մառի տեղեկություններն ու մտորումները Ներսես Գ Իշխանեցի կամ Տայեցի կաթողիկոսի վերաբերյալ՝ մասնավորապես նրա շինարարական գործունեության, ինչի պատճառով էլ կոչվել է նաև Շինարար: Ի դեպ, թե՛ աղբյուրներում և թե՛ արդի ուսումնասիրություններում Ներսես Տայեցու նվիրյալ քաղկեդոնական լինելը կարծես թե կասկած է հարուցում. նրա կողմնորոշումը բնորոշելիս, օգտագործվում են ավելի չեզոք բառեր՝ «քաղկեդոնականությանը հարող», «համակրում էր» և այլն: Որքանով կարելի է դատել նրա մասին պահպանված տեղեկություններից՝ ավելի հավանական է, որ Ներսես կաթողիկոսը նախնական քրիստոնեության անարատ ու հստակ գաղափարների և վանական ժուժկալության շատագույն էր: Համենայնդեպս, նա եռանդուն պայքար էր մղում «քաղկեդոնականների երկաթնակ քրիստոսաբանությանը շատ մոտ» (Մառ, Արքաուն, էջ [4]) նեստորականության դեմ, որն այդ ժամանակ բավականին ուժեղ էր Հայաստանում:

Ն. Մառն անդրադառնում է նաև Ներսես Շինարարի՝ իր ծննդավայրում՝ Իշխան գյուղում (դրա համար էլ Ներսես Գ Իշխանեցի է նաև անվանվում) կառուցած եկեղեցուն: Փաստելով, որ վանքի Մայր տաճարը է դարձում կառուցել է Ներսես կաթողիկոսը՝ նա նշում է, որ այդ շրջանում հայկական այս վանքը ծաղկում է ապրել՝ լինելով XXX

երանելի Ներսես կաթողիկոսի նստավայրը: Հետագայում այն երկար տարիներ լքված է մնացել, մինչև Ը-Թ դարերում վերանորոգվել է Սուրբ Սաբբասի կողմից արդեն որպես վրացական վանք, իսկ այնուհետ՝ դարձել է վրաց եպիսկոպոսի նստավայր (Մառ, Արքաուն, էջ [22]): Ուշագրավն այն է, որ այս ամենը պահպանվել է Տայքի և Կղարջքի վրաց վանականության կյանքը վերականգնելու համար մեծ գործ արած Գրիգոր Խանձտեցու վրացական վարքում: Ժ դարում Գեորգի Մերչուլեի հեղինակությամբ հայտնի այս վարքը¹⁸ չափազանց հետաքրքրական և արժեքավոր տեղեկություններ է պարունակում հայերի վերաբերյալ: Գրիգոր Խանձտեցուն կոչելով «Անապատի աստղ» վրաց վարքագիրը փառաբանում և բարձր է գնահատում Ներսես Տայեցուն և նրա գործունեությունը: Այս աղբյուրը ևս փաստում է, որ վերջինիս մեծ ներդրումը Տայքի և Կղարջքի մշակութային կյանքի զարգացման մեջ, չի սահմանափակվել միայն նրա շինարարական գործունեությամբ¹⁹:

Գրիգոր Խանձտեցու վարքի ուսումնասիրությունից հայագետներն էլ կարող են օգտակար նյութ քաղել մասնավորապես տվյալ

¹⁸ Ի դեպ, մինչև ԺԹ դարի վերջը, վրացագետները չգիտեին անգամ, թե ով է այն սուրբը, ում հիշատակը Վրաց եկեղեցին տանում էր Խոկտեմբերի 5-ին, մինչև 1902 թ. Նիկողայոս Մառը հայտնաբերեց այդ վարքի ձեռագիրը, իսկ ևևտո՝ 1911 թ. Խրատարակեց այն ժողովրդին թարգմանությամբ:

¹⁹ Ի գուր չէ, որ Ներսես կաթողիկոսը սյուրացվել է Վրաց եկեղեցու կողմից և նրա հիշատակի օրը, ինչպես և Գրիգոր Խանձտեցունը նշվում է Խոկտեմբերի 5-ին: Ահառասնքով պետք է նշենք, որ այսօր այդ հիշատակն ամեն կերպ նսնմուցվում է, օրինակ՝ Ներսեսի կառուցած կամ նրա հիմնած ոճին հետևող եկեղեցիները զուտ վրացական են հռչակվում: Իշխան վանքի դեպքում, թերևս վերը նշված աղբյուրի շնորհիվ է, որ վրացիները չեն կարող այն զուտ վրացական ներկայացնել, ինչպես շատ այլ Խոչարձանների դեպքում: Այս պարագայում էլ, սակայն, հարկ է նշել, որ վանքի նախնական արևմտալեզու նախորդելով վրացի մասնագետները երևանակալում իսկույն ևնք ընդմիջարկում են, որ այն նրկար կյանք չի ունեցել և անմիջապես քանդվել է, ավերակ մնալով 200 տարի կամ, որ «Իշխանի» վանքը կառուցվել է հայկական վանքի փրատակների վրա կամ պարզապես ասվում է, որ նմանատիպ նմուշներ կան նաև Հայաստանում: Այսինքն, բոլոր դեպքերում ժխտվում է հայկականի ներկայությունն այսօրվա Խոչարձանում, իսկ թե ինչ է անում բարսալորի վրայի հայերեն վիմագիրը (վրացերեն արձանագրության կողքին) ևսճախ անտեսվում է:

դարաշրջանում և խնդրո առարկա տարածաշրջանին վերաբերող իրենց հետազոտությունների համար: Բոլոր դեպքերում, մենք՝ հայագետներս, Տայքում հայերի գործունեության ուսումնասիրության առընչությամբ պետք է ավելի լուրջ ուշադրություն հատկացնենք վրացերեն գրվածքների ներգրավմանը:

Նմանապես կարևոր է նաև Եվթիմիոս Զիգաբենուսի տրակտատի ուսումնասիրությունը, որում տեղ գտած բոգոմիլների աղանդին վերաբերող մի մաս Ն. Մառը հայտնաբերել էր վրացերեն թարգմանությամբ, ինչը հավանաբար արվել է Պետրիցոնի վանքում՝ Բուլղարիայում:

Ուշադրության է արժանի նաև Ն. Մառի ենթադրությունն առ այն, որ հունարեն դպրությունն իմացող հեղինակները կամ թարգմանիչները պետք է որ քաղկեդոնականներ լինեին: Նման մոտեցումն արդարացված չի թվում հետևյալ պատճառներով²⁰: Նախ և առաջ հենց հույները ժամանակի և գաղափարախոսության պահանջով մերժեցին հույն փիլիսոփաների գործերը. Ե-Զ դարերում Հռոմում ու Բյուզանդիայում ամուր հաստատված և հաղթանակած քրիստոնեությունը այլևս ջատագովության կարիք չուներ: Ընդհակառակը, հարցեր առաջացնող և պատասխաններ պահանջող փիլիսոփայությունը կարող էր առաջ քաշել նոր խնդիրներ, հատկապես հաստատված Հավատո հանգանակի երկբայությունը քննարկելիս: Թերևս այս պատճառով էր, որ 529 թ. Հուստինիանոս կայսեր հրամանագրով փակվեց Աթենքի նորալատոնական դպրոցը: Սակայն նորալատոնա-

²⁰ Շիրինյան Է. Մ., Քրիստոնեական վարդապետության անտիկ և հիլինիստեպիան տարրերը (Խալկեդկան և հունական՝ դասական և բյուզանդական, աղբյուրների բաղադատությամբ), Երևան, 2005, էջ 42-70, 112-188, նույնի՝ Հայ-բյուզանդական փիլիսոփայական առնչությունների վեցերորդ դարում: Մատենադարան Մաշտոցի անվան երևմտագրերի գիտահետազոտական ինստիտուտի հիմնադրման և ինստիտուտի ղեկավարի Նվերված գիտաժողովի թեզիսներ, Երևան, 2009, էջ 41-45: Նույնի՝ Փիլիսոփայական երկերի և տարրերի օգտագործումը Հայաստանում, «Հայագիտության արդյի վիճակը և նրա զարգացման հիշատակարանները», Երևան, 2004, էջ 498-512:

կանության իրական անկումը վերագրվում է 640 թ., երբ սկսվեցին արաբների հարձակումները:

Այս պարագայում հենց արևելյան՝ հակաքաղկեդոնական եկեղեցիներն էին, որ փիլիսոփայական երկերի կարիքն ունեին: Ջ դարում սակայն, երբեմնի նշանավոր, բայց երկար դավանաբանական տրոհումներից թուլացած Աստիոքի ու Աղեքսանդրիայի եկեղեցիներն անկում էին ապրում: Հավանաբար, դա այն պատճառներից մեկն էր, որ փիլիսոփայության համար այդ շրջանում պարարտ հող ստեղծվեց Հայաստանում: Արդյունքում ուշ անտիկ փիլիսոփայությանը վերաբերող՝ ուշադրության արժանի բազմաթիվ տեղեկություններ թարգմանաբար հասան մեզ: Ավելին, մեզանում ստեղծվեցին Հունաբան և Ասորաբան դպրոցներ, որոնց գործունեությունը, ինչպես նաև Ե դարից սկսած Հայաստանի մշակութային զարգացումը ծրագրված է թվում Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի կողմից: Նման միտք արտահայտել է դեռևս Ֆ. Ֆինկը²¹, նրա հետ համաձայնել է Լ. Տեր-Պետրոսյանը²²: Կարծում եմ, Հայոց եկեղեցու լայնածավալ գործունեությունը ծրագրված էր՝ պայմանավորված դավանաբանական ու քաղաքական խնդիրներով²³: Դրանց լուծմանը մեծապես կարող էին նպաստել փիլիսոփայական աշխատությունները: Այդ մասին է խոսում նաև այն փաստը, որ մեզանում հայտնվեցին Դավիթ Անիադթի, Կեղծ Ջենունի, Անանիա Շիրակացու երկերը, ինչպես նաև փիլիսոփայական թեմաներին վերաբերող մեկնությունները: Նկատենք նաև, որ Նմանօրինակ գրվածքները Ջ դարից սկսած բացակայում են հունական, լատինական, ասորական կամ վրացական աղբյուրներում:

²¹ Fink F. N. Geschichte der armenischen Literatur/ Geschichte der christlichen Literaturen des Orients. Leipzig, 1907. S. 75 -130.

²² Ter-Petrosian L., Ancient Armenian Translations, New York, 1992, p. 61.

²³ Շիրվինյան Մ, Քրիստոնեական փարիլապևսության ... Էջ 101-104:

Արդ, հարց է ծագում, ինչպես այս ամբողջի հետևում կարող էին կանգնած լինել քաղկեդոնական հայերը: Մեզ չեն հասել քաղկեդոնական շատ գրվածքներ, սակայն թվում է, որ դրանք ավելի պատմական կամ դավանաբանական բնույթի պետք է որ լինեին: Իհարկե, ես չեմ ժխտում, որ կան բացառություններ. «ինչպես՝ Կարինի եպիսկոպոս քաղկեդոնական Թեոդորը, ով անվանվում է «փիլիսոփայապետն» (Մառ, Արքան, էջ [28]), բայց դրանք ընդհանուր նկարագիրը չեն փոխում:

Կասկած է հարուցում նաև Ն. Մառի միտքն առ այն, որ «վաղ շրջանի հայ մեծագույն փիլիսոփաները կամ կասկածվում էին քաղկեդոնականությանը հարելու մեջ, ինչպես օրինակ Հովհաննես Օծնեցին, կամ իրականում քաղկեդոնական էին, ...»: Թվում է, որ Մառը պարզունակ կերպով հունական կրթություն ստացածներին, հունարեն իմացողներին հակված է քաղկեդոնական համարել: Հենց այս բերված օրինակը բնորոշ ապացույցն է դրա, քանզի հայտնի է, որ Հովհաննես Օծնեցին քաջատեղյակ լինելով հունական դպրությանը ընդգծված հակաբյուզանդական կողմնորոշում ուներ. ընդհանրապես նրա ամբողջ գործունեությունը փաստում է, որ նա քաղկեդոնական չէր կարող լինել:

Ասվածը չի նշանակում, որ քաղկեդոնականների մեջ բացակայել են փիլիսոփաները. այդպիսիներն իհարկե եղել են, բայց հաճախ Բյուզանդիայի սահմաններից դուրս կամ գավառներում: Օրինակ, արդյոք զարմանալի չէ, որ Է-Ը դարերի բյուզանդական աստվածաբան, իմաստասեր, «եկեղեցու հայրերի» շարքը եզրափակողը, ինչպես հաճախ հորջորջում են նրան, Հովհան Դամասկացին՝ Մանսուր մականվամբ (որի գործունեությանը ևս անդրադարձել է Ն. Մառը սույն հոդվածում) ապրել և ստեղծագործել է Բյուզանդական կայսրության սահմաններից դուրս՝ խալիֆայության տարածքում: Ի դեպ, նրա գրվածքներում նկատելի է նորալատոնականների, Դավիթ Ան-XXXIV

հաղթի փիլիսոփայական-տրամաբանական երկերի ազդեցությունը: Նա հետագայում դարձել է վանական և մահացել է Երուսաղեմի մոտ գտնվող Սուրբ Սաբբասի մենաստանում:

Ժ դարում Բագարատ Մամիկոնյանը հունարեն բնագրից կատարել է Հովհան Դամասկացու «Տրամաբանություն» («Դիալեկտիկա») աշխատության համառոտ թարգմանությունը, որը միջնադարյան Հայաստանում, ի թիվս այլ գործերի, օգտագործվել է նաև որպես տրամաբանության ձեռնարկ: Ամբողջական երկը թարգմանել է ԺԳ դարում Սիմեոն Պղնձահանեցին և, ուշագրավ է նշել, որ թարգմանությունը կատարվել է արդեն վրացերենից:

Հետաքրքրական է նաև, որ Ն. Մառը համոզված է հայերի՝ միաբնակությանը հարելու հարցում, ինչն ավելի շուտ հայերի նկատմամբ ոռոսների՝ հույներից ժառանգած վերաբերմունքի հետևանք է: Համարելով հայերին հերձվածող, ոռոսները հետաքրքրական մի սահմանում ունեն մեր դավանանքի համար, այն կոչվում է՝ «армянская прелесть», ինչը նշանակում է «հայկական գայթակղություն» (прельщать – գայթակղել բառից): Ն. Մառը, իհարկե աստվածաբան չէր, որ կարողանար կողմնորոշվել նուրբ դավանաբանական՝ այն էլ Հայ եկեղեցու քրիստոսաբանությանը վերաբերող հարցերի մեջ, սակայն տվյալ դեպքում խուսքը պարզապես սխալ թարգմանության մասին է (Մառ, Արքաուն, էջ [12], ծն. 20):

Ի դեպ, վերը նշված ոռոսական վերաբերմունքը հայկական դավանանքի հանդեպ, ակնհայտ է նաև Նիկոն Սկլեռնցու սլավոնական թարգմանությունը պարունակող ձեռագրից, երբ ոռոսերեն տեքստում առկա են ոչ բարյացակամ արտահայտություններ հայերի վերաբերյալ, մինչդեռ հունարեն բնագրում դրանք բացակայում են (Մառ, Արքաուն, էջ [36]):

Նիկողայոս Մառի սույն հոդվածն իրապես մեծ նշանակություն ու արժեք ունի: Տեղեկություններով հարուստ, գաղափարներով հա-

գեցած այս գործը նման է մի «անտակ հորի», որից դեռևս շատ ու շատ հետաքրքրական տեղեկություններ, բայց նաև խնդիրներ կհանվեն: Թվում է, որ Մառի գործունեությունը ցայսօր ինչ-ինչ պատճառներով դեռևս ըստ արժանվույն չի գնահատված²⁴: Նրա հայտնաբերած և հրատարակած անծանոթ բնագրերը միայն (օրինակ՝ Գրիգոր Խանձտեցու հույժ ուշագրավ վարքը, բոգոմիլների աղանդի վերաբերյալ վրացերեն տեքստը և այլն) բավական են Ն. Մառին բացառիկ գիտնական համարելու համար, էլ չենք խոսում այն դեպքերի մասին, երբ լուծումներ է տվել իրենից առաջ և ոչ մեկի կողմից չբարձրացրած խնդիրներին (օրինակ՝ նույն խնդրո առարկա քաղկեդոնական հայերի հարցը):

Ամփոփելով, նշենք, որ գովելի է, որ Վրաստանում զարգանում է հայագիտությունը, իսկ վրաց գործընկերների տարեցտարի ավելացող նախաձեռնությունները նախանձելի և ուրախալի են: Միաժամանակ չենք կարող լռության մատնել այն փաստը, որ թե՛ տարածքային և թե՛ մշակութային առումներով մեզ ամենամոտ ժողովուրդը դարձել է շատ «հեռավոր»: Մինչդեռ երկու կողմերի մասնագետներն էլ պետք է հիշեն, որ Տայքին և Կղարջքին (ինչպես նաև բազում այլ հարցերին) վերաբերող պատմական, մշակութային և դավանաբանական հարցերն ուսումնասիրելիս, լոկ միակողմանի տեղեկություններով սահմանափակվելը՝ լինեն դրանք միայն հայկական, հունական, թե վրացական, հանգեցնելու է ոչ թե համապարփակ և լուրջ գիտական վերլուծության, այլ պատմական տվյալների աղավաղման, կամայական ենթադրությունների առաջարկման:

Վերջում ցանկանում եմ անդրադառնալ նաև մեզանում բավականին տարածված և շատերին մտահոգող մի հարցի. որքանով էր

²⁴ Թեև նրա կյանքի և գործունեության մասին կան առանձին ակադեմիկոսների: Миханкова В. А., «Николай Яковлевич Марр. Очерк его жизни и научной деятельности», 1949, Մառը և հայագիտության հարցերը, Ը. Ն. Առաքելյան և ուրիշ., Երևան, 1968: XXXVI

ճիշտ հակադրվել մեծամասնությանը, մտնելով բոլոր այդ դավանաբանական վեճերի մեջ, ինչը նշանակում էր նաև դիմակայել ազգային եկեղեցու, այսինքն՝ նաև ոչ քաղկեդոնական հայերի նկատմամբ եղած անբարյացակամ (եթե չասենք ավելին) վերաբերմունքին: Երբեմն հնչում է այն կարծիքը, որ միզուցե պետք էր, որ մենք էլ ժամանակին «կողմնորոշվեինք» և վրաց եկեղեցու նման միաձուլվեինք և դառնայինք կայսրության գաղափարակից ու գաղափարախոս: Այդ պարագայում երևի հնարավոր լիներ անգամ խույս տալ ինչ-ինչ արհավիրքներից:

Դա, գուցե և, իրագործելի էր, սակայն այդ դեպքում, ինչպես հենց Ն. Մառն է նկատում «...հայ հակաքաղկեդոնական եկեղեցու ազգայնացման հետ կապված, քաղկեդոնիկ միջավայրում հակառակ երևույթն է տեղի ունենում, այն է՝ ապազգայնացումը, որը հայ ժողովրդին թե՛ քանակական, թե՛ բարոյական հսկայական վնաս է հասցնում» (Մառ, Արքաուն, էջ [16-17]): Հոդվածագիրը նշում է նաև. «Հաղթանակից հետո հայ հակաքաղկեդոնական եկեղեցու ազգայնացումը մեծ առաջընթաց ապրեց» (Մառ, Արքաուն, էջ [16]):

Մինչ այդ պահը քաղկեդոնական հայերը հակաքաղկեդոնականներից պակաս ազգասեր և հայրենասեր չէին: Այս առումով հատկանշական է, որ քաղկեդոնականները, հարձակվելով հակաքաղկեդոնականների վրա, վերջիններիս մեղադրում էին նաև հայկական ազնվականության նշանակության խափանման մեջ, ինչն այդ ժամանակ հավասարազոր էր ազգային գիտակցության բացակայությանը» (Մառ, Արքաուն, նույն տեղում):

Միևնույն ժամանակ բյուզանդական աղբյուրներից տեսանելի է, որ և՛ վրաց, և՛ հայ քաղկեդոնականները կայսերական բացառիկության գաղափարները կրող հույների կողմից մի տեսակ «թերի» քաղկեդոնականներ էին համարվել, ինչը պարզ երևում է Նիկոն Սևեռն-

ցու այս ու այն կողմ ուղարկված նամակներից, որոնցում երբեմն ապարդյուն, ջանում էր համոզել որ այս քաղկեդոնականները մեզ նման են, մեր եղբայրներն են: Բյուզանդիայի համար հայ քաղկեդոնականներն այնուամենայնիվ մնում էին մի ժողովրդի մաս, որի մեծամասնությունը չէր ընդունել քաղկեդոնականությունը: Իսկ վրացիները՝ թերևս կասկած էին հարուցում այն պատճառով, որ մինչև Է դարի սկիզբը կիսում էին հայ եկեղեցու գաղափարախոսությունը և վրացերենով էին կատարում եկեղեցական արարողությունները:

Քաղկեդոնականությունն ընդունելու դեպքում, թվում է, որ հայ մշակույթը կկորցնեք այն համամարդկային և համաքրիստոնեական արժեքները, որոնք ձեռք էր բերել և պահպանել իր համառության և նույն գաղափարախոսական հարթակի վրա մնալու սկզբունքների շնորհիվ: Այդ դեպքում, ամենայն հավանականությամբ, մենք կգրկվեինք մշակութային ինքնատիպ բազում տարրերից, չէինք ունենա վաղ քրիստոնեական ժամանակներից պահպանված բուն հայկական կամ թարգմանված աղբյուրներ, մասնավորապես փիլիսոփայական երկերի և մեկնությունների տեսքով, և մեր գրականության վերելքն էլ թերևս Ե դարի փոխարեն կսկսվեր ԺԱ դարից, ինչպես դա կատարվեց մեր հարևան վրաց ժողովրդի հետ:

Է. Մ. Շիրինյան

«Արքաուն». քրիստոնյաների մոնոլոլերեն անվանումը հայ քաղկեդոնականների խնդրի աննշությամբ¹

*«Եթէ որ կամիցի գիտել ինչ, չես կու գիտաց՝
որպէս արժան է գիտել» (Ա Կորնթ. Ը 2)*

Բաժնի ուշադրությունը կցանկանայի հրավիրել քրիստոնյաների՝ մոնոլոլերեն *արքաուն* կամ *էրբէուն* անվանման առաջարկվող մի բացառության վրա: Մա, թերևս, մի ամփոփ ծանուցում կարող էր լինել, սակայն վարկածը հիմնավորելու համար պետք է անդրադառնալ քաղկեդոնական հայերի մի շերտի առկայությանը: Առհասարակ հայ քաղկեդոնականների մասին պատկերացումը նույնիսկ մասնագետների շրջանում շղարշված է կարծրացած կարծիքների պատճառով, որոնք հաճախ արդյունք են ազգային կամ դավանաբանական նախապաշարումների: Հայ ազգային եկեղեցին՝ առաքելական ու հին՝ և՛ էությամբ, և՛ իր հիմնական ավանդույթներով, ոչ վաղ անցյալում թյուրիմացաբար սկսեց անվանվել «Հայ գրիգորյան»: Զգտելով պահպանել իր ինքնությունությունը՝ Հայոց եկեղեցին ծայրահեղության հասնող վերաբերմունք է դրսևորում իր ազգային բնույթի հանդեպ (որև, իրոք, այժմ ծայրաստիճան բնորոշ է նրան), ջանալով այն չափից ավելի վաղնջական դարձնել: Այս ուղղության առավել հայտնի ներկայացուցիչը՝ ժամանակակից աստվածաբանության լավագույն գիտակ, պրոֆ. Ա. Հառնակի աշակերտ հայր Կարապետ Տեր-Մկրրտչյանը, իր եկեղեցին ազգային է համարում, կարելի է կարծել, ծագումից ի վեր: Պավլիկյաններին նվիրված գերմաներեն իր ատենախո-

¹ Ձևկուցումն քննարկվել է Ռուսական կայսերական կնագիտական ընկերության արևելյան բաժնի 1904 թ. նոյեմբերի 25-ի նիստում և ներկայացվում է ամենշուն լրացումներով:

սության մեջ նա գրում է. «Հայ եկեղեցին ի սկզբանե ծագել է իբրև ինքնուրույն, ազգային [էջ 2] եկեղեցի միանգամայն այլ քաղաքական և մշակութային պայմաններում, քան մեծ կաթողիկե եկեղեցին»²: Նույնպիսի չափազանցված մոտեցում են ցուցաբերում նաև «մեծ կաթողիկե» (իմա՝ ընդհանրական – Մ. Շ.) եկեղեցու անդամները՝ թե՛ հռոմեական, թե՛ հունական, բայց արդեն հակառակ բովանդակությամբ: Այդ կողմից ժխտվում է Հայ ազգային եկեղեցու կազմավորման պատմական, իրատեսական հիմնավորումը՝ համարելով այն որպես հայերի հետագա սերունդների «չար» կամբի կամ էլ ասորի ուսուցիչների «կործանարար» ազդեցության հետևանք: Նրանց կողմից Հայոց եկեղեցին ի սկզբանե ներկայացվում է նախ կաթողիկ, քաղկեդոնական, իսկ ոմանց կողմից՝ նույնիսկ պապական: Երկու տեսությունների դեպքում էլ հայ քաղկեդոնականները դադարում են իրական դեմք լինելուց. նրանք կամ մերժվածներ են, կամ՝ վաղանցիկ տխուր ստվերներ, կամ էլ հսկա-ուրվականներ՝ երևակայական կերպարանքով: Բավարար ուշադրություն չի դարձվում այն հանգամանքին, որ ինչ-որ ժամանակ քաղկեդոնականությունն ու հակաքաղկեդոնականությունը հավասարապես գոյություն են ունեցել հայ հասարակության մեջ: Անկասկած, հայ մատենագրության մեջ արտացոլված են եղել ոչ միայն հակաքաղկեդոնական, այլև քաղկեդոնական եկեղեցական հայացքներ: Մինչդեռ կան հիմքեր, որոնք թույլ են տալիս հստակ հարց բարձրացնել առ այն, որ հայերն ունեցել են քաղկեդոնական գրականություն, որն, ըստ երևույթին, չէր սահմանափակվում զուտ հակաճառական և դոգմատիկ-աստվածաբանական երկերով: Հայերենից վրացերեն կատարված թարգմանություններն ստիպում են կարծել, որ դրանք վերաբերում են ոչ միայն հայերի և վրացիների

² « Die armenische Kirche aber ist von Anfang an als eine selbständige, nationale entstanden, in ganz anderen politischen und kulturellen Verhältnissen als die grosse katholische Reichskirche » (Paulikianer, Leipzig, 1893, S. 55).

միության վաղ շրջանին, այլև հետագա ժամանակներին, երբ թարգմանություններն արվում էին, ըստ երևույթին, հայ քաղկեդոնական գրավոր հուշարձաններից: Դատելով որոշ փաստերից՝ այս հայկական տեքստերը, հավանաբար, առանձնանում էին լեզվական որոշակի յուրահատկությամբ: Հնարավոր է, որ հայկական վաղ մատենագրության հուշարձանների վերաբերյալ ուշադիր, անկանխակալ մոտեցման արդյունքում կբացահայտվի, որ դրանց շարքում պահպանվել են նաև հայ քաղկեդոնականների գրական գործերը: Անտարակույս, ուշ շրջանի հայկական տարբեր ժողովածուների մեջ ակնհայտ քաղկեդոնական տարրերի ի հայտ գալն ավելի տրամաբանական է բացատրել հայերենով քաղկեդոնական գրավոր հուշարձանների առկայությամբ: Ապրելով մի ժամանակաշրջանում, երբ մայրենի լեզվով յուրաքանչյուր տեքստ համարվում էր Հայ ազգային եկեղեցու հուշարձան, այս ժողովածուների կազմողներն իրենց նպատակների համար կարող էին «բարեխիղճ մոլորությամբ» [3] օգտվել նաև հայերեն գրված քաղկեդոնական աղբյուրներից: Այս կերպ է, որ Գրիգորիոս պապի և Գերմանոս պատրիարքի պես ուղղափառ քաղկեդոնականները հեշտությամբ կարող էին սպրդել հայոց սրբերի դաս՝ արժանանալով Հայ եկեղեցու ուղղափառ վարդապետի պատվին և հիշատակվել հայկական Հայսմավուրքներում՝ յոթերորդ հակապատկերամարտական ժողովի համատեքստում, որն, ի դեպ, հաստատում է նաև Քաղկեդոնի ժողովը (տե՛ս Չամչյան, II, էջ 486–487): Հիմքեր կան պնդելու, որ Հայ ազգային եկեղեցու հուշարձաններում, հավանաբար, հայ քաղկեդոնական գրականությունից քաղված նման վերապրուկներն ավելի շատ են, քան Մ. Չամչյանն է մատնանշել:

Մեր նպատակը Հայաստանում քաղկեդոնական շարժման ծագմանն անդրադառնալը չէ: Սույն զեկույցի համար բավական է նշել որոշ դրսևորումներ, որոնք առհասարակ վկայում են հայ քաղկեդո-

նականների վիճակի մասին և նպաստում նրանց՝ ըստ խմբերի դասակարգմանը: Այդ երևույթները հնարավոր է քննարկել միայն այն պահից, երբ Հայաստանում քաղկեդոնականությունն արդեն պատմական իրողություն էր, առավել ևս այն ժամանակ, երբ հակաքաղկեդոնականությունն ու քաղկեդոնականությունը համագոյակցում էին Հայաստանում որպես քիչ թե շատ հավասար և պայքարող երկու կողմեր: Ավելորդ չէ նկատել, որ քաղկեդոնականության հաջողության համար, ըստ էության, արդեն պարարտ հող էր նախապատրաստված ժամանակին Հայաստանում բարգավաճած նեստորականության կողմից, որն, ըստ երևույթին, ներթափանցել էր նաև Վրաստան, հավանաբար, ասորի հայրերի միջոցով: Անկասկած, Հայաստանում նեստորականներն ուժեղ էին, և նրանց ամուր հիմքերը փորձում էին խարխլել ոչ միայն հակաքաղկեդոնականները, այլև քաղկեդոնականները, ինչպես օրինակ քաղկեդոնականությանը խիստ հարող կաթողիկոս Ներսես Շինարարը (1902 թ. *Ճամփորդության ընթացքում Սինայում և Երուսաղեմում Ի. Ա. Ջավախուլի համագործակցությանը կատարված աշխատանքների վերաբերյալ նախնական հաշվետվություն*, էջ 18–19)³: Այսուհանդերձ, [4] քաղկեդոնականների

³ շերջնրա Այրարատ ամսագրի էջերում (1905, փետր., էջ 181–202) նրապարզակամ, ըստ խորագրի՝ «Հոսմնագիտների բարենորոշտ Կոստանդինի Լեյսեր Դ տարում» տեղի ունեցած *Դվինի ժողովի Կանոններ*-ի եամարարիակ նրատարակությունը ևս մի վկայություն է ներկայացնում Ներսես կաթողիկոսի կայսերական քաղկեդոնական ուղղությանը ևսարևու վերաբերյալ: Դա աուլացուցվում է նայա և առաջ ևամտոնքստում աղկա նկատառումների միջոցով. այսպես՝ 192-րդ էջում տավում է, որ սույն նկեղնցական կանոնադրությունը պետք է վավերական եամարվի Նոսրովի և Ներակլնսի ժամանակներից: Այստիսով այս ևույարժանը եանյիսանում է Եզր կաթողիկոսից սկիզբ առած և, ի միջի սայոց, Ներսեսի օրաք ներուզա գարգացում ապլած նկեղնցական հասարքի արուսուսությունը: Ինչպես վկայված է վերնագրում, ևույարժանը գրված է հենց Ներսես կաթողիկոսի կամքով: *Կանոնների* բուն էություն մասին իրական պատկերացում կտամլու ևամար պետք է սպասել դրանք նրատարակված նրիտասարդ գիտնական Ս. Թ՝ Տիգրանյանի ևնսագրություններին: Տեքստը ևնաբանություններ չի պարունակում: Պարսկերեն «ալալար» (184,3) բառը, որն ակնևայտղուն ևամարանում է որպես ևոնաբան դարոցի նորույունություն, թալիանցել է Եղիշնի գրվածքներ և ևայ մատնագրություն (ևամտ. վրուցներն՝ Յոյճճճճ): Նույրան նոր է եին ևեղևական ևույարժաններում ալկի քիչ ևայունի պարուկական ծագում ունեցող «գնկար» բառը (100,126՝ ծջճճճ): Ինչ-ինչ սրստնաներով նրա-

երկաբնակ քրիստոնաբանությունն, իհարկե, շատ մոտ էր նեստորականությանը: Բացի այդ, պետք է հաշվի առնել, որ դեռևս Զ դարի նեստորականության մեջ նկատվում է բյուզանդական դավանանքի հետ մերձենալու միտում (Labourt J., *Le christianisme dans l'empire perse sous la dynastie Sassanide* (224–632). Paris, 1904, p. 266): Նեստորական եկեղեցում նման բարեփոխիչ է հանդիսանում կաթողիկոս Մար Աբան կամ Մարաբան (Labourt J., նշվ. աշխ., էջ 267, 268), նույն Մարաբան, որի հետ ես նույնացրել եմ այն Մարաբային⁴, որի պատմական երկը հատվածաբար պահպանվել է արաբերենով, և որը հեղինակություն էր հայ Ասանուն պատմիչի⁵, ինչպես նաև Մովսես Խորենացու համար (Марр Н., *Арабское извлечение из сирийской хроники Марибаса*, Зап. Вос. Отд., XIV, стр. 091):

տարակույցուն մեջ պտեարենված չէ: Ինչ ողորագրությունը՝ *աւն՝ օ*-ի փոխարեն, իսկ բարդ բառերում նրկծախ *է*-ի փոխարեն նախապատկությունը տրված է միանշյուն (անաթթոնգ) *է*-ին իրեղգծումը մերև է– Մ. Ը.} (184,3 սգատուաւ գրված հատվածն ուղղված է խորագրի կողմից, քանզի բուն տնքստում թյուրիմացութար գրված է. «է նրկծախի փոխարեն նախապատկությունը տրված է միանշյունին»)։ Ինչպես օրինակ *որդգրութիւն* բառի մեջ, ընդ որում առանց հետեւումականության, քանի որ որաշ դնւթքրում ետնդլաում է նաև *է*-ն, ինչպես օրինակ՝ *բարենկուրենումը* (183,34): Ինչպիսի, կամ վիճարկելի դնւթքր, նրք կրտուարակիլը կարազ է առաջնորդվել այսպես առած ետուաթյութար կամ էլ այս կամ այն ձևի նկատմամբ անձնական նախընտրությամբ, և պետք է մտածել, որ հենց այդ պատճառով մեր կրտուարակիչն ընտրել է, օրինակ, *զնրջն* փոխարեն *զնադրն-ի* (190,122), առաջին ևս *կայսրի-ի* (180,2) փոխարեն ստորակրան *կայսրի-ր*: Առավել վտանգավոր է, ինչն ինչպես լեռնա *կայտորիկու-ի* (181,6) փոխարեն *կայտորիկու-ին* նախապատկություն տալը: Անկասկած, պետք էր նախընտրել *կանոնն* (180,1) ձևը՝ վկայված թնկուզ և ուշ շրջանի մի ցուցակում, որն այնուամենայնիվ ավելի համահունչ է ետմատնքստին և որը ետվակնում է լինել է դարի բնագիր: այն էլ հունարան դպրոցի ներկայացուցչի գրչին պատկանող: Առավել անհասկանալի է, թե ինչու հենց նույն տնքստում *յորտնայցէ*-ն տնղը զիջել է *յորտնայցէ* ձևին: Ել վերջուպես տարրական քերականության արտգ անտեսմամբ կարող եմ բացատրել ինչ բնագրում *Ներսիսի* (181,6) ձևի հատնակիլը *Ներսիսի* փոխարեն, ինչն ետյիական տնքստում նման խոսակցական ձևով պրտուանյովիլը կախարաբզոր է, նրք թուս դասակրանի կրտուարակության մեջ *ուրջօ*-ի փոխարեն գրվել *ուրջօ*: Մ. Ը. Տրքունյանը տնքստի վերականգնումը (տն՝ էջ 180) նախնապարել էր հայր Մխիթարին, սովալն ինչ կայսրենի տարրական պատմական քերականությունը չվնոր է անտեսվել հայերեն բնագրերի կրտուարակիչների կողմից:

⁴ {Այսպես յօրինակին – Մ. Ը.}:

⁵ {Իմա՝ Սիբեոսի – Մ. Ը.}:

Միաժամանակ անհրաժեշտություն չկա անդրադառնալու Հայաստանում հակաքաղկեդոնականության ծագմանը կամ էլ բացահայտելու դրա բովանդակությունը: Թյուրիմացությունից խուսափելու համար կցանկանայի միայն պարզաբանել, որ հայ հակաքաղկեդոնականությունը չուներ միայն բացասական կողմ, այն է՝ Քաղկեդոնի ժողովի մերժումը, այլ ուներ նաև դրական կողմ՝ Հայաստանի հին քրիստոնեական տեղական եկեղեցու առանձնահատկություններով պայմանավորված: Այս դրական առանձնահատկությունները վերաբերում էին շատ ավելի վաղ շրջանին, [5] քան Հայաստանում քաղկեդոնական խմորումների սկզբնավորումը և նույնիսկ մինչ Քաղկեդոնի ժողովի տարին: Այս իմաստով Հայաստանում հակաքաղկեդոնականությունն ընդամենը պայմանական եզր է՝ կրոնական շարժման մի անվանում, որն ուներ ավելի լայն և իր արմատներով դեպի ժամանակի խորքերը ձգվող խնդիրներ, քան այն հարցերը, որոնք բարձրացվեցին Քաղկեդոնի ժողովի ընթացքում: Իհարկե, քաղկեդոնական բոտն վեճերի ժամանակ կարգախոս էր հանդիսանում վիճահարույց ժողովի դրույթների վերաբերյալ այս կամ այն մոտեցումը: Ավելին, հայկական վաղ եկեղեցու ավանդած առանձնահատկություններն այդ շրջանում այս կամ այն կողմից սկսեցին մեկնաբանվել և նույնիսկ վիճարկվել նոր լուսի ներքո՝ ելնելով Քաղկեդոնի ժողովի նկատմամբ հստակ վերաբերմունքից: Ամեն դեպքում հայ հակաքաղկեդոնականության խմորումը, որը զուտ եկեղեցական ընդվզում էր, դուրս է Քաղկեդոնի ժողովի իրողությունից: Այս խմորումը Հայաստանում երբեք չկորցրեց իր նշանակությունը, և հիմնականում հենց այն դարձավ հայ եկեղեցու առանձնահատուկ զարգացման աղյուր, առանձնահատուկ ոչ միայն հույն ուղղափառ և նեստորական, այլև հակորիկյան եկեղեցիների համեմատությամբ՝ անկախ վերջինիս

հետ ունեցած ավելի բարեկամական և հաճախ էլ շատ մտերիմ հարաբերություններից:

Ը դարում հայերը տակավին ներքին անզիջում գոյամարտ էին մղում: Թերևս կար մի ճգնաժամային պահ, երբ առկախ էր այն հարցը, թե ով պիտի հաղթեր՝ հայ քաղկեդոնականները, թե՛ հայ հակաքաղկեդոնականները: Իհարկե, երկու կողմերն էլ կիրառում էին հնարավոր բոլոր միջոցներն իշխանությունը ձեռք բերելու համար. այսպես՝ նրանք օգտագործում էին ոչ միայն հայերի, այլև օտարերկրացի համախոհների ուժերը: Օտարները պատրաստակամորեն տրամադրում էին իրենց օգնությունը: Ավելին, և՛ քաղկեդոնական, և՛ հակաքաղկեդոնական օտարերկրացիները հետաքրքրությամբ էին հետեվում պայքարին՝ սպասելով որևէ կողմի հաղթանակին: Նրանք ոչ միայն պատրաստ էին արձագանքել եկեղեցական գործերում իրենց հայ համախոհների օգնության կոչերին, այլև ինքնակամ եռանդուն և անմիջականորեն մասնակցում էին բուն պայքարին: Այս հանգամանքը, սակայն, չպետք է անդրադառնա իրականության վերաբերյալ մեր մոտեցմանը, այն է՝ Հայաստանում խնդրո առարկա մաքառումն ընթանում էր հենց հայկական միջավայրում, տեղում առկա երկու կողմերի հայկական ուժերի գործադրմամբ, իսկ օտարները՝ լինեին հույներ, վրացիներ, թե ասորիներ, հանդիսանում էին պարզապես այս կամ այն կողմի դաշնակիցը, երբեմն հույժ օգտակար, նույնիսկ գորեղ, սակայն, այնուամենայնիվ, դաշնակից, բայց ոչ մի դեպքում նախաձեռնող:

Եթե պայքարը գլխավորապես ընթանար միայն հակաքաղկեդոնական հայերի և քաղկեդոնական ոչ հայերի միջև, [6] ապա անհրաժեշտ կլիներ բացատրել բուն Հայաստանում ստեղծված հայերեն ինքնուրույն մի շարք գրվածքների առկայությունը՝ ի պաշտպանություն հակաքաղկեդոնական տեսակետի: Հանգամանալից առարկությո-

յունները, յուրաքանչյուր հարցի՝ քաղկեդոնականների առաջադրած նրբին մշակումը և արտահայտման բուն եղանակը բավարար են ենթադրելու, որ եթե քաղկեդոնականությունը Հայաստանի «թշնամին» էր, ապա այդ թշնամին տևից էր: Նման տպավորություն են թողնում, ի միջի այլոց, Խոսրովի Թարգմանչի հակաճառական երկերը՝ հրատարակված Գարեգին վարդապետ Հովսեփյանի կողմից (Վաղարշապատ, 1903):

Այս բնագիրն ակնհայտորեն փաստում է, որ Հայաստանում Ը դարում հակաքաղկեդոնական եկեղեցին ծանր վիճակում էր: Այն վկայում է ոչ միայն հաղթանակի և պարտության ճգնաժամային պահի, այլև հակաքաղկեդոնականների՝ փոխգիջումների գնալու համաձայնության, ասել է թե՛ իրենց կիսով չափ պարտության մասին: Ինչպես հայտնի է քաղկեդոնական աղբյուրներից, Հայաստանում հակաքաղկեդոնականների և քաղկեդոնականների շահերի համընկնումի հարցը բազմիցս բարձրացվել և դրական լուծում է ստացել անգամ (եկեղեցական) ժողովների մակարդակով: Այս դեպքում, սակայն, հատկանշական է հակաքաղկեդոնական Խոսրովիկի խոստովանությունն առ այն, որ ինքը կարծես թե զիջելու և ընդունելու էր քաղկեդոնականի առաջարկած փոխգիջման պայմանները (էջ 6): Խոսրովիկին՝ հակաքաղկեդոնականության այդ «դժնեա» ջատագովին այս քայլին կարող էր դրդել միայն այն գիտակցումը, որ Հայաստանում քաղկեդոնականության դեմ պայքարն այլևս ուժերից վեր էր. թվում էր, որ հայ քաղկեդոնականներին անհնար էր ջլատել:

Նման մեկ այլ ճգնաժամային պահ է գրանցվում Թ դարի սկզբին: Այդ ժամանակաշրջանում հայ քաղկեդոնականների դիրքերը Հայաստանում այդքան էլ կայուն չէին, քանզի նրանք դեռևս պայքարում էին իշխանության համար: Այդ ժամանակ հյուսիսարևմտյան Հայաստանը Կղարջք (Կլարջեստիա) և Տայք (Տաո) նահանգներով ար-

դեն նրանց ձեռքում էր: Հայերի մեջ քաղկեդոնականության տարածմանը ջերմորեն աջակցում էին ոչ միայն հույները, այլև վրացիները: Արուստուջի Բագրատունիները՝ տարածքի տիրող իշխանները, արդեն քաղկեդոնականներ էին, ինչը պակաս չէր նպաստում այդ տարածքում քաղկեդոնականության լիարժեք հաղթանակին:

Քաղկեդոնականությունն սկսել էր թափանցել նաև Սյունիք՝ Վրաստանի և Աղվանքի ճանապարհով: Աղվանքում ևս թափ էր առնում քաղկեդոնականների և հակաքաղկեդոնականների միջև պայքարը, ընդ որում կողմերից և ոչ մեկը չէր նպաստում աղվանական ազգային շահերին. քաղկեդոնականությունը ճանապարհ էր հարթում վրացիների, իսկ հակաքաղկեդոնականությունը՝ հայերի իշխանության համար: Աղվանքի արևմտյան մասը՝ այսպես կոչված [7] վրացական Աղվանքը, իրապես վրացականացվեց. դա հենց Էրեթիա հին շրջանն է, որը հետագայում մտավ Կախեթիայի կազմի մեջ: Սակայն նաև այստեղ՝ Էրեթիայում, գաղութացման ընթացքում վրացիներին նախորդել էին հայերը, այնպես որ վրացականացվում էին հայերը, ավելի ստույգ՝ հայացած աղվանները, եթե անգամ հիմնվենք միայն Դավիթ Գարեջեցու վարքի վկայության վրա այդ ամբողջ տարածաշրջանի ազգագրական բնութագիրը պատկերացնելու համար, ինչպես դա անում է Բրոսսեն (*Hist. de la Georgie. Introduction, p. X*): Դավիթ Գարեջեցու վարքում (Վրաց. դրախտ, էջ 277) մանրամասնորեն նկարագրվում է «բարբարոս» Բուքաքարայի դարձի պատմությունը, որի հետ սուրբը հայերեն էր խոսում (Նոճեշրոճա ջնճոճ): Ժ դարում Էրեթիայում քաղկեդոնականությունը վերջնականապես հաղթեց: Վրացական տարեգրությունների համաձայն (հրատ., էջ 197=թարգմ. Brosset, I. p. 279⁶)՝ մինչև այդ, այսինքն՝ նախքան Իշխանիկի թագավո-

⁶ (Մա սույն հրատարակության *Առաջաբանում* նկարագրված դեղրևից է. նոր պորթլանդ կարմի է ներառյրնլ, որ խոսքն աշտոնլ նեճույալ նրատարակություննրի մասին է. Մնկթսնթ-թնկ Լ., Վրաց աղբյուրննր հայաստանի մասին, հատոր Ա (Ե-ԺԲ

րելը, նախորդները (տարածաշրջանի բնակիչները) հերետիկոս (հակաքաղկեդոնական) են եղել. Իշխանիկը էրիստավաց էրիստավ Գուրգենի զարմիկն էր. և նրա մայրը՝ թագուհի Դինարան, նրանց ուղղափառ հավատքի (քաղկեդոնականության) դարձրեց: Սակայն նման հանկարծակի դարձն անհասկանալի է, եթե այստեղ քաղկեդոնականությունը նախկինում տարածված չլիներ: Վրացական տեղեկության մեջ առավել հետաքրքրականն այն է, որ Ժ դարում այս տարածքի իշխանը կրում էր զուտ հայկական անուն՝ Իշխանիկ: Հարյուր տարի անց՝ Դավիթ Շինարարի օրոք, քաղկեդոնականության հաղթանակով Էրեթիան մեկընդմիջտ անցավ Վրաստանի կազմի մեջ (հրատ., էջ 242= թարգմ. Brosset, I, էջ 356): Աղվանքի արևելյան, ավելի ստույգ՝ հարավարևելյան մասը, հայկական աղբյուրների համաձայն, շատ ավելի վաղ անցել էր հայ հակաքաղկեդոնական եկեղեցու կողմը: Բայց և այնպես Է դարի վերջում քաղկեդոնականությունն այստեղ դժվար թե արմատախիլ եղած լիներ: Ճշմարիտ է, սակայն, որ հայերի հակաքաղկեդոնական կաթողիկոս Եղիայի դրդմամբ արաբական խալիֆը ձեռնարկեց իսկապես կոշտ, նույնիսկ դաժան միջոցներ: Աղվանքի քաղկեդոնիկ պատրիարք Ներսեսը շղթայակապ ուղարկվեց ուղղահավատների էմիրի մոտ (Հովհաննես կաթողիկոս, էջ 57⁷), ավելի ստույգ՝ դատապարտված էր այս արտաքսմանը, սակայն նախընտրեց շղթայակապ⁸ սովամահ լինել և շղթայակապ էլ թաղվեց (Մովսես Կաղանկատվացի, հրատ. Էմին, էջ 238): Բացի այդ՝ որոշված էր «...եթե ոք ի սոցանէ գտանիցի երկարնակ եղեալ՝ սրով և գերութեամբ սպառնեսցի» (Մովսես Կաղանկատվացի,

դար). Երևան, 1934, թարգմանությունը Brosset M., Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX siècle, Pbg., 1849-1858 – Մ. Ե.):

⁷ {Յովհաննու Կաթողիկոսի 'Կրտսխանանկերոցոյ Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեալ Մ. Էմին, Մոսկուա, 1853 – Մ. Ե.):

⁸ Էմինի թարգմանությունը ճշգրիտ չէ. «Նա չնաղթանալուց աղ և ութ օրից մահացու» (էջ 240): Հնագրում աաված Լ. «Այդ պատճառով նա ութ օր սնունդ չընդունեց և մահացավ»:

էջ 245): Վերջապէս Ներսէսին հաջորդած Աղվանքի Սիմեոն պատրիարքը՝ (8) հայոց կաթողիկոսի դրածուն, «այո պարկեշտ» կամ ինչպէս Էմինն է թարգմանում «հեզաբարո», պատվիրեց գետը նետել Ներսէսի հերետիկոսական, այսինքն քաղկեդոնական գաղափարներով լի գրքերի բոլոր արկղերը (Մովսէս Կաղանկատվացի, էջ 239): Սակայն աքսորներն ու գրաքննությունը կասկածելի միջոցներ են իրական համոզմունքների դեմ պայքարելու համար և հազիվ թէ կարող էին արմատախիլ անել աղվանների դավանաբանական այլախոհությունը: Խիստ կասկածելի է՝ արդյոք Ներսէսի գրքերի արկղերի հետ երկրում վերացան նաև բոլոր քաղկեդոնական երկերը: Նույնիսկ Սյունիքում ԺԴ դարի գրական հուշարձաններում և միգուցե նաև կենցաղում առկա էին քաղկեդոնականության վերապրուկները: Այլապէս դժվար է բացատրել Ստեփանոս Օրբելյանի գրվածքներում առկա մի շարք հունարեն եկեղեցական եզրերը, ինչպիսիք են՝ «էգոմոնոս», «կօն»՝ «իկօն»-ի փոխարեն, «փսաղտ»⁹, «մարտիրոլոգ», «տրապեզ» և այլն, որոնք հայերենում ի սկզբանե ունեին հնագույն իրենց համարժեքները: Ընդունելի չէ հրատարակիչ Շահնազարյանցի այն կարծիքը (I, էջ 329, նշ. 30), թէ պատմիչն այս հունաբանություններն օգտագործում է զուտ հունարենի իր իմացությունը ցուցադրելու նպատակով:

Հետագայում էլ՝ հենց արաբական տիրապետության ժամանակ, քաղկեդոնականությունը համեմատաբար արտոնյալ վիճակում էր: Ութերորդ հարյուրամյակի սկզբում հենց մուսուլմանական երկրում հայտնվում է արևելյան ուղղափառ քաղկեդոնականության այնպիսի

⁹ {Այս եւստիւածի ամբողջական մտքերումն է. «...գէկօսմն, որ է տնտես այլույեւտ գրէ էգոմոնոս. այլուր՝ կօն, որ կարծի լիննլ իկօն, այսինքն է սրտոկնր, և ուրնք փսաղտ, սրտութայիկ. յի՞նչ միտո այսպիսի ետպտանք տղայական. մի՞թէ սրտաւէին ի մեր լնգո նախապատիւ վարդապետ, տնտես, սրտոկնր, ստղմոսկրգու, զտազտնագիրք» (Պատմութիւն նահանգին Սիսական արարնու Ստեփաննոսի Օրբելյան արքեպիսկոպոսի Սիւննագ. հտ. Ա, հրատ. Կ. վրդ. Շահնազարնանց՝ միաբան Սրբոյ Էջմիածնի, Փարիզ. 1859, էջ 329) – Մ. Շ.}:

մի ռահվիրա, ինչպիսին Հովհան Դամասկացին է: Թ դարում քաղկեդոնականների նկատմամբ մուսուլմանների վերաբերմունքն արդեն փոխվում է սևս Դամասկոսից արևելք [՝ ընկած հատվածում]:

Այդ շրջանում հայ քաղկեդոնականները ջանում էին հաղթել հենց բուն Հայաստանում: Այդ հանգամանքով կարելի է բացատրել քաղկեդոնականների՝ Հայաստանում հաստատված Բագրատունյաց տան անդամներին իրենց կողմը գրավելու ձգտումը: Լինելով հակաքաղկեդոնական եկեղեցու անդամներ՝ հայ պատմագիրները սուղ տեղեկություններ են հայտնում և բնականաբար լռության են մատնում [՝ քաղկեդոնականությանը վերաբերող անցքերը], այնուամենայնիվ նրանք չեն լռում ամենալուրջ փորձերից մեկի՝ հայ Բագրատունյաց տունը քաղկեդոնականացնելու փորձի մասին: Մխիթար Այրիվանեցին 801 թ. իրադարձությունների վերաբերյալ գրում է. «Էպիկուրան փորձում էր Աշոտին քաղկեդոնական դարձնել, սակայն Բուրետ վարդապետն ուղարկում է իր սարկավագ Նանային, որը հաղթեց Էպիկուրային և մեկնեց Հովհաննու Ավետարանը»¹⁰:

[9] Մեկ այլ հայ պատմիչ՝ Վարդանը (Արևելցին – Մ. Շ.) (գլ. XLII, հրատ. Էմին, 1861, էջ 107–108, Մխիթարյանների հրատ., Վենետիկ, 1862, էջ 78) առավել մանրամասն է տեղեկացնում դարձի այդ փորձի մասին:

«Յաւորսն յայնսոսիկ գայր եպիսկոպոս մի՝ Ապիկուոայ անուն, առ Աշոտ և ջանայր դարձուցանել զնա յաղանդն Քաղկեդոնի, զոր լուեալ Բիրատ ոմն վարդապետ ի Միջագետս՝ առաքէ զսարկաւագն Նանայ, որոյ եկեալ մարտնչի ընդ Ապիկուոայ և յաղթէ նմա զօրու-

¹⁰ «Էպիկուոայ ջանայր զԱշոտ իշխանն քաղկեդոնիկ առնել. իսկ Բուրետ վարդապետն առաքեաց զՆանան սարկաւագ իւր, որ յաղթեաց Էպիկուոայ և մեկնեաց զԱւետարանն Յովհաննոս» (Պատկանով Բ., Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն ժամանակագրական, Ս. Պետ., 1867, էջ 68, Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց, Ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկուտ, 1860, էջ 53, Brosset, Histoire Chronologique par Mkhithar d'Atrivank, St.-P., 1869, p. 83):

թեամբ՝ Սուրբ Հոգույն: Եւ հալածէ զնա իշխանն և հաստատի ևս առսուել ի հաւատս սրբոյն Գրիգորի»¹¹:

Սուրբ Գրիգորի հավատամքի հակադրումը քաղկեդոնական դավանանքին ժամանակավրեպ (անախրոնիզմ) է, քանի որ ժամանակին քաղկեդոնականները հանդիսանում էին Սուրբ Գրիգորի նախանձախնդիր երկրպագուները¹²: «Записки Восточного Отделения»-ում («Արևելյան բաժանմունքի գրառումներում») հրատարակված Հայաստանի Լուսավորչի վկայաբանության արաբերեն տեքստը, որը զոյություն ունեցողների մեջ հնագույնն է, հավանաբար մեղքիտական կամ քաղկեդոնական գրավոր հուշարձան է:

Վարդանի հաղորդման մեջ կարևոր է Թ դարասկզբին Հայաստանում հակաքաղկեդոնականության ճգնաժամային վիճակի վերաբերյալ արձագանքը: Հակաքաղկեդոնական պատմիչը խոստովանում է, որ կար պահ, երբ անգամ ինքը՝ Հայոց Աշոտ իշխանը, համակված էր հակաքաղկեդոնականության ճշմարտացիության կասկածանքով կամ էլ, թվում էր, որ նա հեշտությամբ կտրվի քաղկեդոնական քարոզչությանը: Արևելքում քաղկեդոնական ուղղափառության հայտնի ջատագով, Խառանի եպիսկոպոս Էպիկուրայի կամ Թեոդոր Աբուքուրայի¹³ Հայաստան այցը վկայում է, որ տեղի քաղկեդոնականները պարարտ հող էին պատրաստել և հաղթանակի հույսեր էին տածում: Թե ինչ հաջողություն ուներ Աբուքուրան անձամբ Աշոտ իշխանի մոտ, հայտնի չէ: Վրացերենով պահպանվել է Աբու-

¹¹ {Մտավիւ ամբողջական կողմն է Մեծին Վարդանայ Բարձրաբերդցայ Պատմութիւն Տիկզերակաւն, կրատ. Էմին, Մոսկուտ, 1861, էջ 107-108: Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի լուսաբանելու ի շիննտիկ ի Սուրբ Ղազար, 1862, էջ 78 -Մ. Շ.}:

¹² Այս անախրոնիզմի առկայությունը Սեբեոսի Պատմության, մասնավորապես Երեսն կաթողիկոսին վերաբերող տեղեկության մեջ (կրատ. Պատմութեամբ, էջ 141, 142), կասկած է հարուցում նախ աստուծոյն հաղորդած այդ հատվածի փոփոխականության վերաբերյալ, որն ամենաանուստային էր թվում:

¹³ {Մա նույն վերը կիշատակված (Եպիկուրա, Ապիկուրա) անձն է. - Մ. Շ.}:

քուրայի բանավեճը ոմն հայի հետ¹⁴: Հուշարձանում առկա է թերևս հենց այդ դավանաբանական բանավեճի կանխակալ արտացոլումը, որը պետք է որ տեղի ունեցած լիներ Աշոտ իշխանի ներկայությամբ: Դատելով այս քաղկեդոնական աղբյուրից՝ հայը պարտվում է: Հակաքաղկեդոնական Վարդանի վկայության համաձայն՝ Աբուքուրային հաղթում է Նանա սարկավագը, և հետայնու Աշոտն արտաքսում է Աբուքուրային: Ամեն դեպքում չի կարելի չխոստովանել Աբուքուրայի հայաստանյան այցի կարևոր նշանակությունը, ինչը չէին հերքում նույնիսկ իրադարձության [10] ժամանակակից հակաքաղկեդոնականները: Ակնհայտ է, որ տեղի ներկայացուցիչներն անգամ չէին համարձակվում հանդես գալ հեղինակավոր Աբուքուրայի դեմ: Իսկ եթե համարձակվել են, պետք է ենթադրել, որ պարտվել են: Ժամանած հեղինակավոր անձի՝ Քաղկեդոնի ժողովի ջատագովի հետ մրցակցության համար հակաքաղկեդոնականներն ստիպված էին հրավիրել օտարերկրացու՝ Նանա սարկավագին Միջագետքից: Ցավոք, նրա՝ Աբուքուրայի հետ ունեցած բանավեճի բնույթի մասին կողմնակի տեղեկություն չունենք: Հայտնի է միայն, որ Նանան եղել է Հակոբիկյան եկեղեցու նշանավոր ասորի հակաճառող: Ասորական աղբյուրներից հայտնի է (Ռայթ Վ., Ասորական գրականության պատմության համառոտ ուրվագիծ, թարգմ. Կ. Ա. Տուրանա, իմք. Պ. Կ. Կոկովցով, Ս. Պետերբուրգ, 1902, էջ 145), որ իններորդ հարյուրամյակի առաջին կեսին Նոննուսը Մծբինում Հակոբիկյան եկեղեցու սարկավագապետ դարձավ այն բանից հետո, երբ նեստորական եպիսկոպոս Կիպրիանոսը 767 թ. միաբնակներին թույլատրեց նորից իրենց ենթակայության տակ վերցնել Սբ. Դոմիցիուսի (կամ Դոմետիոսի – Մ. Շ.) եկեղեցին: Նրան հիշատակում է նաև Բար-Հեբրեյը (կամ Բար-Հեբրեու-

¹⁴ «Երացիների շրջանում կրթության ստարածման կազմակերպության ձև. 51, թ. 67ա-68ա (ԹԻՖԼԻՍ):

սը - Մ. Շ.) որպես Փիլոքսենոս եպիսկոպոսի մեղադրող, ով Աբրահամ հակապատրիարքի կողմնակիցն էր և այդ իսկ պատճառով բանադրվել է 827 կամ 828 թվականին Ռասայնի ժողովի մասնակիցների կողմից (Bar-Hebraeus, *Chron. Eccles.*, I, 363, S. O., II, 346, col. 1): Գիտենք նաև, որ սա գտնվում էր Մծբինի բանտում այն ժամանակ, երբ գրում էր իր երկն ընդդեմ Մարգի եպիսկոպոս և Բեռ Գարմացի մետրոպոլիտ Թոմայի, ով գործում էր նեստորական կաթողիկոսներ Աբրահամի (837-850) և Թեոդոսիոսի (852-858) օրոք: Բացի այս չորս ճառերից բաղկացած հակաճառական գրվածքից՝ Նոննոսը գրել է նաև նույն ոճի բազմաթիվ նամակներ:

Հենց այդ Նոննոսին է, որ հայերը *Նանու* են անվանում: Դատելով Ռայթի կազմած ցուցակում առկա ձևերից՝ ասորերենում այս անունը հանդիպում է տարբեր կերպ (I. էջ 618՝ ܢܢܘ, ܢܢܘܘ և ܢܢܘܘܘ), այսինքն՝ Նանոս, Նոնոս և Նոնա. հայկական Նանա ձևը, ըստ երևույթին, պահպանել է մի նոր՝ չորրորդ ձև, որը հավանաբար գոյություն ուներ նաև ասորիների մոտ¹⁵:

Բրիտանական թանգարանի ձեռագրերի հիման վրա [*կազմած] Ռայթի ցուցակում (*Catalogue of Syriac Manuscripts in the British Museum*, 1871, II. p. 618-620) բոլոր վերոնշյալ երկերը համառոտ կերպով են նկարագրվում: Որքանով որ կարող ենք դատել այս նկարագրությունից, նրանցում մեր հարցի սունչությամբ չունենք և ոչ մի տեղեկություն: Այնուամենայնիվ, մեզ հետաքրքրող իրողությունները, հնարավոր է, որ բացահայտվեն Նոննոսի նամակներից մեկում՝ ուղղված ասանուն բարեպաշտ մի թղթակցի, ով հարց էր առաջադրել Բրիտանի երկու բնությունների վերաբերյալ (Wright, նշվ. աշխ., էջ 619, 3): [11] Այս հարցն առանցքային էր նաև հակաքաղկեդոնականների և քաղկեդոնականների միջև ընթացող վեճերում:

¹⁵ {Նույնին օգտագործել են ܢܢܘ բառի արևելյան ստորեմն պորտասանությունը - Մ. Շ.}:

Հայերենով պահպանվել է սարկավագապետ Նոննոսի գրչին պատկանող Հովհաննու Ավետարանի մեկնությունը: Դատելով նախաբանից՝ Նոննոսը կամ Նանան, ինչպես անվանում էին նրան հայերը, Հայաստանում նշանավոր էր նաև որպես մատենագիր:

Նախաբանի հետևյալ հատվածը հաստատում է Հայաստանում նրա հոչակավոր լինելը, ինչպես նաև մի շարք հետաքրքրական ակնարկներ է պարունակում Նոննոսի և Թեոդոր Աբուրգուրայի վիճաբանության մասին՝ առանց վերջինիս անունը նշելու: Հայ թարգմանչի կողմից գրված նախաբանում ասվում է¹⁶.

Քանզի այր ուն սարկասագասպեա գոլով. Նանայ անուանեալ. յոյժ հմուտ և վարժ սսորի դպրութեան. ստացող բոլորիցն ստաքինութեան պարկեշտ վարուք. մաքուր առ ամենայն մարմնական¹⁷ հեշտութիւնս. աղբերաբար ընկալեալ գշտրիս վարդասպետութեան ի Հոգոյն Սրբոյ ողղափառ հա-

«Որովհետև կար ասորական դպրությանը խիստ հմուտ և գիտակ մի այր՝ սարկավագապետ՝ Նանա անունով, ով պարկեշտ վարքով վաստակել էր բոլոր առաքինությունները, ով մաքուր էր ամեն տեսակ մարմնական հաճույքներից, առատորեն ստացել էր ուսուցանելու շնորհը Սուրբ Հոգուց՝ որպես առ Զրիստոս ող-

¹⁶ Բնագիրը պահպանվել է Էջմիածնի մի շարք ձեռագրերում: Նախաբանի ամբողջական տեքստը և Նանայի մեկնությունից արված մեջբերումները կառուարված են Էջմիածնի վանքի գրադարանի երկու թվագրված ձեռագրերից, որոնցից մեկը (A) 1308 թ. (թիվ 1347=Լար. 1311), իսկ մյուսը (B)՝ 1414 թ. (թիվ 1347=Լար. 1310): Իմ տրամադրության տակ են եղել նաև սարկավագապետ Սմբատ Տեր-Ալևերդյանի՝ իմ խնդրանքով սիրահոժար կատարած քաղվածքները: Այս աղբյուրն օգտագործել է նաև ժԸ դարի կայ պատմիչ մխիթարյան և Մ. Չամչյանը (Ա, էջ 441, 444): Մեջբերված հատվածում օ-ն ամենուր փոխարինում են *առ*-ով, իսկ *եւր*՝ *իւրով*՝ եւամստայն ինձ տրամադրված ձեռագրի: Բացարձակապես մերժում ևմ հետևյալ պահանջայ փոխառվանքը. *յերկուց*-ի (20) փոխարեն *յերկուս* AB, *թախանձեալ* (24) փոխարեն *նախանձեալ* B, *վասմամիտն* AB 54-55, *խօրութեան* B 72, *հեւտորն* B 83, *կրտադրուպեանս*-ի (99-100) փոխարեն *կրտադրուպեանս* B, *գիջաննյով*, այնուամենայն գրված էր *գիջանէր*-ի (108) փոխարեն *էր* B. *աննրկիտարար*-ի փոխարեն *աննրկիտարեր* B, իմա՝ *աննրկնիտարար* 113, *տիկնտրն* AB 125:

¹⁷ + աւար՝ մարմնական B.

Handwritten signature or stamp on the left margin.

աստի՛ն, որ ի Քրիստոս: Որ և
յանդիմանեալ զոմն եռեռի-
կոս. զայր պերճաբան և իմաս-
տասէր. Վանեալ հալածական
առնէր յաշխարհէս Հայաստա-
նեայց. որ երբեմն խոտորնակս
ուսուցանէր. յերկուս բաժանե-
լով զՔրիստոսի անբաժ միաու-
րութիւն. [12] որ յետ անքակ և
անշփոթ մարմնատրոթեանն:
Եւ հաստատէ վերասին զնոյն
ուղղափառ¹⁸, որ ի Քրիստոս
դասանութիւնն. մի յերկուց
բնութեանց խոստովանեալ
զաստուածականն բնու-
թեամբ. իսկ զնուստականն
կամասոր յանձնառութեամբ¹⁹:

Ձառ թախանձեալ մեծին
Բագարասայ. որ ի տանէն
Բագրատունեաց. այր յոյժ
բարձրագոյնս²¹ ստացեալ զա-
նուն. որ և պետ իշխանաց եր-

զավառ հավատի աղբյուր: Նա
էր, որ հանդիմանեց պերճաբան
փիլիսոփա ոմն հերետիկոսի և
հալածելով վնդեց Հայաստան
աշխարհից, քանզի նա ստահոդ
կերպով էր ուսուցանում՝ երկուսի
բաժանելով Քրիստոսի անբա-
ժան միությունը, որն անքակտելի
և անշփոթ մարմնացումից հետո
է: [12] Եվ նա նորից հաստատեց
նույն ուղղափառ դավանանքն ի
Քրիստոս՝ խոստովանելով երկու
բնություններից մեկը՝ աստվածա-
յինը՝ ըստ բնութեան, իսկ նվա-
տականը (մարդկայինը – Մ. Շ.)՝
ըստ կամավոր հանձնառության²⁰:

Հենց նրան ինդրեց Բագրա-
տունյաց տնից մեծն Բագարատը,
որը բարձր հոգակ էր վաստակել
և բարբարոս հագարացի ազգի
կողմից իշխանների պետ էր ան-
վանվում, կարծես թե դրանով

¹⁸ մարմնատրոթեանն: Եւ-ուղղափառ < A յերկուս.

¹⁹ իսկ- յանձնառութեամբ < B.

²⁰ {Այս եկեղեցիական իւստովածում արժարժվում է Հայ եկեղեցու դավանակրի եամար կարևոր՝ Քրիստոսի բնությունների եարցը: Ուշագրտւմ այն է, որ Ն. Մատր չի տեսնում այստեղ առիւտ աստվածային և մարդկային («նուստաժիտ») բնությունների քննարկումը, այլ ընկալում է շարադրանքը որպես միայն մեկ՝ աստվածային բնության մատնանշում, այսպիսով մեկ տնգամ ևս հաստատելով թյարիմացաբար տարածված այն մտտեցումը, որ Հայոց եկեղեցին նդւէ է «միաբնակ» դավանանքի կողմը: Հաշվի առնելով այս և այլ նման անճշտություններ՝ այստեղ տեքստը փոխադրելիս եիմնվել ենք գրաբար բնագրի, այլ ոչ թե Մատի թարգմանության վրա – Մ. Շ.):

²¹ գրաբարագոյն B.



բեան ի բարբարոս ազգէն հազարացոց անուանեալ, որպէս թէ այնու առաւել պատուի զնա արժանատր վարկուցեալ, գորոյ և զանցս անցիցն յիրում տեղոցն փոքր ինչ յիշատակեցուք: Եւ զի՛նչ արդեաւք իցէ արհնակ ինդրոյն, ստանալ նա զմեկնութիւն սրբոյ աստարանին Յոհանու²²:

Որոյ փոյթ ի մտի եղեալ վաղվաղակի ի ձեռն ուժգին պահոց և սղասից, ջան ոչ փոքր յանձին բերէ շրջագայութեամբ երից ամաց, յաճեալ ընդ անապատս յերկրին Միջագետաց, ուր և յուսայր իսկ զգիստ գրոց ուղղափառ վարդապետացն: Եւ հանդիպեալ ինդրոյն առաջնորդութեամբ վերին իննամոցն շարադրէ²³ համառատաբար ի բազմաց հասարելով մի ըստ միոջէ՛ ոճով զՄեկնութիւն Յոհանու²⁴ սրբոյ աստարանին, Փո[13]խաբերելով յասորի լեզոցոցն ի հազարական լեզու:

ավելի մեծ պատվի արժանացնելով նրան: Ստորև համառոտ կիիշատակեմ նրա եւտ պատաւած մի դրվագ: Եվ ի՛նչն էր նրա խնդրանքի էությունը, ստանալ Հովհաննեսի Սուրբ Ավետարանի մեկնությունը:

Եվ որոշելով հոգ տանել այդ մասին՝ նա, ջանք չխնայելով, շուտափույթ ձեռնամուխ է լինում պահքի և աղոթքների. շրջագայում է երեք տարի և թափառում Միջագետքի անապատներում, որտեղ հույս ուներ գտնելու ուղղափառ վարդապետների գրվածքները: Եվ նա հասավ նպատակին վերին (աստվածային) խնամքի առաջնորդությամբ և շարադրեց Հովհաննեսի Սուրբ Ավետարանի մեկնությունը՝ բազում [՝հեղինակներից] համակարգված կերպով համառոտաբար հավաքելով և [13] ասորերենից հագարերենի փոխադրելով:

Սակայն երբ հագարացիները հավիշտակեցին Հայոց մեծ, երևելի և վսեմամիտ իշխանին (Բագարատին), ով իր մեջ կրում էր հա-

²² {Այսպէս յօրինակին – Մ. Ը.}:

²³ շահադրէ՛ Ա:

²⁴ {Այսպէս յօրինակին – Մ. Ը.}:

Իսկ յորժամ ըմբռնեալ լինէր ի հազարական ազգէն մեծն և երևելին այն իշխանն հայոց վսեմամիտն. որ և զրովանդակն յանձին բերէր ոմնել զգիտութիւն. որ ի Քրիստոս հաստոցն. որ և նախանձ ոչ փոթրագոյն վասն Քրիստոսի միշտ յանձին կրէր կշտամբել և յանդիմանել զհերձուածողացն դասս. ոչ ինչ արութիւն քաջութեան այնուհետև ըստ արժանի իրոց մեծութեան երևեցոյց. այլ երազապէս ի վայր հոյովեալ յաստուածային բարձրագոյն հաստոցն զոր ոմնէր. զորեցաւ վաղվադակի ի վիհ անկանգնելի կորստեանն և ի բաց ընկնելով զորոշմ ուխտի ճշմարիտ հաստոցն. սուգ անհնարին բոլոր աշխարհիս Հայաստանեայց հասուցանէր. թէ պէտ և հրըշտակացաւ ի շեկիս մեր ի խորութեան սրտին հաստատուն պահելով զճշմարիտ հաստոցս դասանութիւնս:

Յայնմ ժամանակի ի ձեռն պատահման իմն զանձ գրոյս

վատքի ողջ գիտությունն ի Քրիստոս և ոչ պակաս նախանձանդիր էր ի Քրիստոս, միշտ հանձն էր առնում կշտամբել²⁵ և հանդիմանել հերետիկոսներին: (Բայց այս անգամ, հափշտակութիւնից – Մ. Շ.) հետո նա իր սեծութեան արժանի քաջութիւն չցուցաբերեց, այլ իր ոմնեցած աստվածային բարձրագոյն հավասարից արագորեն վայր գլորվելով՝ անմիջապէս ընկավ կորստյան անդամալի վիհը և դրժելով ճշմարիտ հավատքի ուխտի դրոշմը՝ Հայաստան աշխարհին մեծագոյն վիշտ պատճառեց, թեպէտ մեր ականջներին հասավ ավետիսը, որ սրտի խորքում նա հաստատուն է պահում ճշմարիտ հավատքի դավանութիւնը:

Այդ ժամանակ պատահմամբ այդ զանձը՝ (Նանայի) գրվածքը, հասնում է տեր Սմբատ Բագրատունուն, ով մեծ ուրախությամբ ստանալով՝ հրամայում է այն հագարերենից հայերեն թարգմանել՝ հաշվի չառնելով իմ սկարբութիւնը:

Եվ եթե այդ մեծ հոետորը, որ կատարյալ էր արվեստների և գի-

²⁵ {Ռուս.՝ «прораб» («ներկելով») – Մ. Շ.):

հասնայ լինի առ տէր Սմբատ
Բագրատունի. զոր ընկալեալ
ինդորեանք մեծաւ՝ հրասնայէ
փութով ի հազարացոցն ի
հայսկան վերաբերել լեզու. ոչ
ինչ ներելով իմոյ տկարու-
րեանս:

Այլ զոր մեծն այն հոռտորն.
կատարեալ յարունեստս և իմա-
ցականութիւնս. այնքան ջան
յանձին բերելով տաժանեցաւ.
ով ոք ոչ [14] զիմս աղարտեացէ
յանդգնութիւն մտաբերել ան-
գամ յայսքան բաճրագոյն
խորհուրդս: Զորոյ և ոչ զառա-
քինութիւն սոռնն պարտէ. Որ
յետ այնորիկ գործեցաւ. անյի-
շատակ թողու...

Սա ըմբռնեալ եղև ի մերում
իսկ ժամանակի ի հազարա-
կան ազգացն վասն նախանձու
որ ի նմանէ՝²⁶ բազմափայլ վար-
դապետութեան և ներհակս
միշտ առադրելոյն դնանի ի
բանդի հանդերձ որդուք ի-
րովք. որով բազում անգամ
բանս հրապտրականս առաջի
արկեալ հանդերձ յոքնագան

տության մեջ, այդքան ջանք թա-
փելով չարչարվեց, յորաքանչյու-
րը կարող է [14] ինձ անարգել
այսքան բարձրագոյն խորհուրդ-
ների մասին անգամ մտածելու
հանդգնության համար: Եվ այս
մարդու (Բագարատի - Մ. Շ.)
առաքինությունները, որոնք նա
հետո դրսևորեց, պետք չէ անհի-
շատակ թողնել:

Նա ձերբակալվեց հազարա-
ցիների կողմից մեր ժամանակնե-
րում՝ նրա՝ լուսավոր վարդապե-
տության նկատմամբ ունեցած
նախանձախնդրության և մշտա-
պես հակաճառական երկեր շա-
րադրելու պատճառով: Իր որդի-
ների հետ նա բանտ նետվեց: Մի
քանի անգամ նրան բազմազան
պարգևներով հրապտրիչ առա-
ջարկներ արեցին, սակայն նա

²⁶ ի նմանէ Ե.

պարզևառք. ոչ ինչ խոնարհեցոյց զանխոնարհելի խորհորդս մտացն որ ի Քրիստոս: Դարձեալ յայլ տեսալս²⁷ հնարից բերեալք լինէին սպանմամբ բանդից և կապանաց և պէսպէս տանջանաց. այլ ոչ ինչ զանգիտելով երբէք զիջանէր ի բարձրագոյն հաստոցն որ ի Քրիստոս: Եւ մնացեալ ի բանդի սնդ բազում ժամանակս ոչ միայն զինքն ամբողջ պահելով յանբիծ հաստան. այլ և բազմաց լինի առիթ փրկութեան աներկեղատրան ի բանդին. ուսուցանելով և հաստատելով ի հաստս Ամենատորբ Երրորդութեան:

Եւ յետ այսորիկ այսպէս եղերոյ հասեալ լինի զանձն²⁹ գրոյս այսորիկ առ Մարե[ա]մ Բագրատունի. Սինեաց տի-

չխոնարհեցրեց իր մաքի անխոնարհելի խորհուրդներն ի Քրիստոս: Դարձյալ այլատեսակ հնարքների դիմեցին՝ սպառնալով բանտով, կապանքներով և զանազան տանջանքներով, սակայն նա ուշադրություն չէր դարձնում և երբեք չէր հրաժարվում իր բարձրագույն հավատքից ի Քրիստոս...²⁸ Երկար ժամանակ մնալով բանտում՝ ոչ միայն ինքն անբասիր մնաց հավատքի մեջ, այլև առիթ դարձավ շատերի փրկության համար՝ բանտարկյալներին մշտապես աներկյուղ պահելով, ուսուցանելով և հաստատելով նրանց Սուրբ Երրորդության հավատքի մեջ:

Եվ սրանից հետո այնպես պատահեց, որ այս գանձը՝ (Նաւայի) գիրքը, հասավ Սյունյաց տիկին Մարիամ Բագրատունուն իր հոր՝ Աշոտի՝ Բագրատունի մեծ

²⁷ տեսակ Է.

²⁸ ԿՏ. Մարը եռանբնեում ավելացրել է «Նաւնո» անունը կամայայտար (քանզի իր օգտագործած բնագրում այդ բառը բացակայում է), ինչն առաջին իսկ հայագրից անտրամաբանական թվաց: Այս հատվածը մանրամասնորեն քննել է Ն. Ալիմյանը և նրա վերակազմած Նաւնա Ատրոս Հովհաննու Ավետարանի Մեկնության եպյկրեն թարգմանության ամբողջական Առաջաբանից (Մատենագրութեան Խնտագոսություններ: Քննություն և բնագրեր, Կ. Ներսէս Վ. Ալիմյան, Վիեննա, Վիեննա, 1922, էջ 148-153) սրբագ նրկում է, որ այստեղ խտրքը վերաբերում է ոչ թե Նաւնա Ատրուն, այլ Բագարատ Բագրատունուն, ով իր որդիների հետ միասին գերի էր բնկել և բանտ նետվել և ով քաջատնդյակ էր աստվածաբանական, կրոնական խնդիրներին (նույն տեղում, տե՛ս օրինակ էջ 138) – Մ. Շ.):

²⁹ զանձ Է.

կին. Ի ձեռն Աշոտոյ [15] հասր
խորոյ. մեծ և երևելի տեսուն
Բագրատունոյ իշխանաց¹⁰ իշ-
խանի: Իսկ երանուհոյս Սիւ-
նեաց տիկնոջ փոյթ ի մոտի
եղեալ վաղվադակի հրամա-
յնաց երկիցս անգամ փոխարե-
րել ի հայական լեզու առուջ-
նորդութեամբ վերին խնա-
մոցն:

և երևելի իշխանաց իշխանի միջո-
ցով [15]: Իսկ Սյունյաց երանելի
տիկինը մտադրվեց և անմիջա-
պես հրամայեց երկրորդ անգամ
այն հայերեն թարգմանել՝ վերին
(իմա՝ աստվածային) խնամքի
առաջնորդությամբ»:

Թ դարի սկզբում Հայաստանում աստվածաբանական մտքի ուղ-
ղության բնութագրման համար չափազանց հետաքրքրական է, որ
հայերը քաղկեդոնականության դեմ պայքարում ասես թաքնվում են
հակոբիկյան ջատագովի թիկունքում:

Մեր խնդիրը քննարկելիս ուշագրավ է, որ իրադարձության ժա-
մանակակիցը Վարդանի նման չի խոսում այն մասին, թե Նանան
հաստատեց Գրիգոր Լուսավորչի հավատքը, իսկ Թեոդոր Աբուքու-
րայի փախուստի մասին պատմում է որպես Նանայի ենթադրյալ
հաղթանակի բնական հետևանք. Նանան է, որ նրան փախուստի է
մատնում, այլ ոչ թե Աշոտ իշխանն է վտարում:

Ուշագրավ է, որ շուտով՝ Թեոդոր Աբուքուրայի՝ Հայաստան այ-
ցից հետո՝ հենց 821 թվականին, ըստ Մխիթար Այրիվանեցու վկա-
յության, *ճաղերի (ծոնդերի)*¹¹ մի ամբողջ շրջան անցավ քաղկեդոնա-
կաններին:

¹⁰ *Իշխանաց > B.*

¹¹ {Մխիթարոյ Այրիվանեցոյ, էջ 69 – «Յատուր տէր Դարթի Փարսման քանահայ Կա-
կտղոցի որոշեալ է ետոյց ի վիրս դարձոյց զԾոնդէացիսն այս է Ծոնդն, որ կան այժմ ի
հոռմն» – Մ. Շ.}:

Անտարակույս, անվիճելի է, որ հակաքաղկեդոնականությունը Հայաստանում հաղթող դուրս եկավ: Սկզբնական շրջանում դարերի խորքը գնացող զուտ եկեղեցական տեղական ավանդույթներով ապրող հակաքաղկեդոնական համայնքն աստիճանաբար վերածվեց Հայոց ազգային եկեղեցու:

Քաղկեդոնականության հետ կենաց ու մահվան հուսահատ գոյամարտից հաղթանակած դուրս եկած եկեղեցին, իհարկե, չէր կարող մնալ այն աստվածաբանական ընկալմամբ, որով նա պայքարի մեջ էր մտել: Բնականաբար, տևական մաքառման ընթացքում այն հասցրեց յուրացնել քաղկեդոնական որոշ տարրեր:

Նկատի ունենալ բնությունների մասին հայ հակաքաղկեդոնականների դատողությունները, որոնցում նկատվում է, որ նրանք քաղկեդոնական հայացքների ազդեցությամբ գիտակցաբար յուրացրել են Քրիստոսի մեջ երկու բնությունների առկայության և նույնիսկ հարաբերության բնույթի վերաբերյալ գաղափարները: Այդ հանգամանքը, սակայն, նրանց չէր խանգարում վերջնական արդյունքում հանգել մեկ բնության ուսմունքին: Այս մոտեցումն, ի միջի այլոց, առկա է նաև Խոսրովիկ Թարգմանչի երկերում: Հայտնի է, որ դեռևս Ջ դարում ընդհանրապես միաբնակ եկեղեցին [16] նույն կերպ փորձում էր քողարկել իրեն բնորոշ յուրահատկությունները³²: Այնուամենայնիվ, ուշագրավ կլիներ պարզաբանել աստվածաբանական մտածողության բոլոր այն հատկանիշները և նույնիսկ արտաքին հակաճառական միջոցները, որոնք, միգուցե չցանկանալով, սակայն գիտակցաբար Հայ ազգային եկեղեցին յուրացրել է հայ քաղկեդոնականներից:

³² « Le monophysisme au VI^e siècle s'affina singulièrement, au point qu'il devint difficile de le distinguer de l'orthodoxie autrement que par le refus d'admettre le concile de Chalcedoine et le « tome » de Léon » (Labourt J., Le christianisme dans l'empire perse sous la dynastie Sassanide, p. 266).

Հայաստանում, իհարկե, հաղթեց հակաքաղկեդոնական եկեղեցին: Միգուցե ավելի ճիշտ կլիներ ասել, որ հակաքաղկեդոնականությունը մնաց Հայոց եկեղեցում որպես սրբազան մասունք, իր անկախ զարգացման համար անցյալում մղած պայքարի վկա՝ հիմնված տեղական եկեղեցական ավանդույթների վրա: Հաղթանակից հետո հայ հակաքաղկեդոնական եկեղեցու ազգայնացումը մեծ առաջընթաց ապրեց:

Մինչ այդ պահը քաղկեդոնական հայերը հակաքաղկեդոնականներից պակաս ազգասեր և հայրենասեր չէին: Այս առումով հատկանշական է, որ քաղկեդոնականները, հարձակվելով հակաքաղկեդոնականների վրա, վերջիններիս մեղադրում էին հայկական ազնվականության նշանակության խախտման մեջ, ինչն այդ ժամանակ հավասարազոր էր ազգային գիտակցության բացակայությանը: Այս մեղադրանքը պահպանվել է Նույսիսկ հայ քաղկեդոնական աղբյուրների վրա հիմնված Թ-Ժ դարերի վրացական մի գրավոր հուշարձանում: Այդ գրվածքի հեղինակ Արսենիոս կաթողիկոսը (Жордания Т., Хроника I, стр. 326) գրում է. «Երբ պարսիկները տիրացան Հայաստանին պարսիկ մարզպանների մեղքով քրիստոնեական կարգ ու կանոնն անարգանքի ենթարկվեց, եկեղեցիների կառավարումը դադարեցվեց և հայ ազնվականությունը (ճճՆՆՅՐՏՕ) կորցրեց իշխանությունը, այդ ժամանակ կաթողիկոսներն ու եպիսկոպոսները հեռացան ճճՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԻԿ և պարսիկներից (իրենց հարազատ) ազնվականության դեմ ըմբոստանալու խրախույս ստանալով՝ սկսեցին ինքնուրույն վճարել գյուղական հարկերը (ԽՐՅՅՆ ՆՕՋՇԼՕՏՈՏՆՆ) և ամբողջ երկիրը վստահեցին եպիսկոպոսներին և քորեպիսկոպոսներին՝ որպես պարսկական թագավորության հպատակների...», «ազնվազարմ հայերը (ճՐՆՆՅՐՆԻ) գալիս էին եպիսկոպոսական պալատ, սակայն չէին

կարողանում ներս մտնել (ճճ ՅՅՅՅՅՅՅՅ յճճճ ՅՅՅՅՅՅՅՅ) և վերադառնում էին ամիթով՝ ասես պարսիկ մարգպանների արքունիքից»:

Ավելի ուշ, հայ հակաքաղկեդոնական եկեղեցու ազգայնացման հետ կապված, քաղկեդոնիկ միջավայրում հակառակ երևույթն է տեղի ունենում, այն է՝ [17] ապագգայնացումը, որը հայ ժողովրդին թե՛ քանակական, թե՛ բարոյական հսկայական վնաս հասցրեց:

Ելնելով այն հանգամանքից, թե ում էր պատկանում տվյալ տարածքը, հայ քաղկեդոնականներն սկսեցին ձուլվել վրացիների, հույների և ասորիների հետ: Հայ քաղկեդոնականների ապագգայնացման այս գործընթացի պատճառով Վրաստանը հարստացավ չափազանց բեղմնավոր՝ վրացիների մշակութային կյանքում հաճախ աչքի ընկնող երկու շրջաններով: Խոսքը Տայքի (Տաո) և Կղարջքի (Կղարջետի) մասին է: Ես նկատի ունեմ այս երկու շրջանները, քանի որ դրանց վերաբերյալ այժմ ունենք ոչ շատ, սակայն հատկանշական տվյալներ:

«Византийский Временник»-ում (1904, т. XI, приложение № 1) առաջին անգամ տպագրվեց մեզ համար չափազանց հետաքրքրական մի փաստաթուղթ: Այս բնագրի նոր հունարեն թարգմանությունը, որ արվել էր անանուն հեղինակի կողմից 1782 թ., դեռևս 1888 թ. հրատարակել էր Գ. Մուսեոսը (G. Musacus) (Γρηγόριος Πακουριανός, *Dissertatio philologica, Lipsiae, p. 157–210*), որի առավել կարևոր հատվածներում, սակայն, առկա են լուրջ անճշտություններ և անգամ աղճատումներ: Վավերական բնագիրը հրատարակել է վերափոխիչ (assumptioniste) հայր Լուի Պլոտին (Louis Petit) հետևյալ վերնագրով՝ *Тузковъ de Gregoire Pacourianos pour le monastere de Pêtritzos Băckovo en Bulgarie* («Բուլղարիայում գտնվող Պետրիցոնի Բաչկովո վանքի համար գրված Գրիգոր Բակուրյանի *Կանոնադրությունը*»): Հրատարա-

կիչը նախաբանում ներկայացնում է ուշագրավ փաստեր, որոնց մի մասին արդեն անդրադարձել էր Մուսետուր:

Հին հունարենով գրված բնագիրը վրացական Պետրիցոն վանքի կանոնադրությունն է: Վրացիների համար այս վանքն առանձնահատուկ է նրանով, որ այստեղ է գործել ԺԱ-ԺԲ դարերի վրացի մտածող, մի քանի փիլիսոփայական երկերի՝ այդ թվում նաև Պրոկղի *Շաղկապը աստուածաբանականք*-ի արժեքավոր մեկնության թարգմանիչ և հնարավոր է նույնիսկ հեղինակ, Իոանե Պետրիցոնցին: Հավանական է, որ այդտեղից՝ հենց Պետրիցոնից էր նաև վրացի վանական Դավիթ Պետրիցոնցին, որը 1030 թվին վանական Արսենիոսի համագործակցությամբ թարգմանել է եկեղեցու հայրերի երկերը՝ դատելով Գելատի վանքի մի ձեռագրի հիշատակարանից (Кондаков Н., Бакрадзе Д., Описание памятников древности в некоторых храмах и монастырях Грузии, СПб., 1890, стр. 54): Այս թվականը, եթե Բակրաձեն ճիշտ է կարդացել, վկայում է, որ մինչ այդ էլ վրացի վանականներ են եղել Պետրիցոնում, որը, ըստ մեզ հասած փաստաթղթի. հիմնվել է 1083 թվականին, երբ փաստորեն վերականգնվել է Պետրիցոնի վրացական վանքը և ընդունել նոր կանոնադրություն (հմմտ.՝ Цагарели, Сведения и пр., вып. III, стр. XII, прим.³³): Պետրիցոնի հռչակավոր վանքի հիմնադիրը՝ [18] նույնն է թե կանոնադրության հեղինակը, վրացական և հայկական աղբյուրներից հայտնի Գրիգոր Բակուրյանն է, ով բյուզանդական պատմության մեջ առավել հայտնի է որպես Ալեքսիսի գահակալության գործում գլխավոր դեր ստանձնած քաղաքական գործիչ, ով կայսրության տարբեր մասերում, հատկապես Բուլղարիայում խոշոր հողատարածքներ ուներ: Ժամանակին նա եղել է նաև Անի քաղաքի կառավարիչը: Այժմ մեզ հետաքրքրում է *Կանոնադրության* բուն տեքստը: Գրիգոր Բակուրյանի գրչին պատ-

³³ *Сведения о памятниках грузинской письменности*, т. I, вып. 3.

կանող այս կանոնադրությունից պարզ է դառնում, որ վրացական վանքի [*հոգևորականների կազմում], որոշակի նախապայմանով թույլատրվում էր բոլոր ուղղափառներին, այսինքն բոլոր քաղկեդոնականներին՝ բացի հույներից: 24-րդ հոդվածը նվիրված է եղբայրության մեջ հույներին չընդգրկելուն. «Περὶ τοῦ μὴ κατατάσσεσθαι Ῥωμαῖον πρεσβύτερον ἢ μονάζοντα, ἐν τῇ κατ' ἐμὲ μονῇ καὶ δι' ἣντινα τὴν αἰτίαν» («Իմ վանքում որևէ պատրվակով ցանկացած հոռոմի (իմա՝ հույնի) սարկավագ կամ վանական դառնալու արգելման մասին» - թարգմ. Մ. Շ.): Հույներին թույլատրվում էր ստանձնել միայն դպիրի պաշտոն (μόνον νοτάριόν τίνα εἰδότα γράμματα κτλ): Ներկայացվում է նաև պատճառը, թե ինչու է արգելվում հույների մուտքը եղբայրների շարք. «նրանք խարդավանող, շատախոս և ագահ են» (βίαιοι ὄντες καὶ περιλογοὶ καὶ πλεονέκται), հեշտությամբ կարող են գրավել վանքը, «որը, ինչպես գիտենք, հաճախ է պատահել մեր ազգի հետ պարզության և հնազանդ բնության պատճառով: Եթե դա (հույների նկատմամբ արգելքը) չլինի, մենք նրանց կհետևենք որպես ուսուցիչների և կհավատանք նրանց ապացույցներին» (οἷαπερ πολλάκις συμβεβηκότα εἶδομενεν τῇ ἡμετέρα φυλῇ ἐξ ἀπλότιτος καὶ γνώμης ἐπικούς. Εἰ δὲ μὴ τοῦτο ἦν, ἡμεῖς τούτοις τῇ πίστει ὡς διδασκάλους ἐπόμεθα, καὶ τοῖς ἐκείνων πειθόμεθα δόγμασι):

Հույների նկատմամբ արգելքի այս հիմնավորումները վկայում են, որ կանոնադրության համաձայն ցանկացած այլազգի ուղղափառ կարող էր ընդունվել վրացական վանք: Այնուամենայնիվ, այլազգին մուտքի թույլտվություն էր ստանում վրացական գիրն ու լեզուն իմանալու նախապայմանով: Այս դրույթը պարզորոշ արտահայտված է *Կանոնադրության* նախաբանում, որտեղ հիմնադիրն իր ստեղծած անվանում է «բոլոր ճգնողների և վրացերեն լեզուն ու գիրն իմացողների» վանք (πάντων τῶν μονάζοντων τὴν ἰβηρικὴν ἐπισταμένων γραφὴν καὶ

διάλεκτον³⁴): Միայլ կլիներ մտածել, թե նման պահանջը բխում էր այլ լեզուների նկատմամբ անհանդուրժողականությունից: Գրիգոր Բակուրյանը *Կանոնադրության* ԺԵ գլխում (էջ 34-35) գրում է. «Սրբազան պաշտոնը պետք է անշեղորեն մատուցենք՝ սիրով և հսկմամբ, օր ու գիշեր՝ Տիրոջ ողորմությամբ և յուրաքանչյուր լեզվին Փրկչի պարգևած շնորհով՝ համաձայն իրեն բնորոշ խոսքի (ἐκόστωι γλώσσηι κατά τὸν ἴδιον)»: [19] Պահանջն ակնհայտորեն արտահայտվում էր այլ կերպ ևս: Այն կարող էր բխել դիմորդի՝ քաղկեդոնական ուղղափառության մեջ հաստատուն լինելն ստուգելու ցանկությունից և այս առումով հայերի նկատմամբ հնարավոր անվստահությունից, քանի որ դրանից շատ առաջ միանգամայն կազմակերպված, իշխող Հայ ազգային եկեղեցին հակաքաղկեդոնական էր: Այդ նույն անվստահության պատճառով էր, որ նախկինում՝ դեռևս սյաղեստիկյան վանքերում հայ քաղկեդոնականներից պահանջվում էր *Երկարբայան*-ը³⁵ երգել հունարեն: Հնարավոր է նաև, որ վրացերենի իմացության պահանջն առաջադրվում էր՝ եկեղեցական ծիսակարգի միօրինակությունից ելնելով: Համենայնդեպս, հանգամանքներից պարզ է, որ նախ և առաջ պահանջվում էր վրացական ծիսական գրքերից օգտվելու կարողությունը: Հենց հիմնադրի կողմից ներդրումների, այդ թվում նաև տարբեր քարերով, մարգարիտներով և էմալապատ թանկարժեք ի-

³⁴ Մուսուսն իր ազատ թարգմանությամբ ամբողջովին խնդարյուրել է այս հատվածի իմաստը (էջ 157). «οἱ ὁποῖοι εἶναι Ἰβηρες (!) καὶ ἰνδοσκουσι καλῶς (!) τὰ ἰβηρικὰ γράμματα καὶ τὴν ἰβηρικὴν γλῶσσαν»:

³⁵ { *Երկարբայան*-ի տնօրինական հավելվածին՝ «...որ *խաչնցար* վասն մեր ...» Մասն ավելի մանրամասնորեն անդրադարձնում է ստորև (տե՛ս էջ [19]), ինչպես նաև հետագայում իր գրառումներում, որտեղ եմանավորում է, որ իրականում այս հավելումը կիրառվել է նաև նովասթողիկոնական եկեղեցում և, որ հայերի ծիսական ավանդության մեջ դառն թե նորամուծություն է. այլ վաղ, նախնական եկեղեցու մնացուկ, որը արահետանվել է որոշ եկեղեցիներում, տե՛ս Мурадян П. М., Неопубликованная статья П. Я. Марра об «Аркауне» (К столетию со дня рождения академика П. Я. Марра), Известия Академии Наук Армянской ССР, 1964, 12, стр. 51-53 (=Мурадян П. М., Кавказский культурный мир и Армения, вып. II, Ереван, 2012, стр. 283-286) - Մ. Ը. }:

րերի ցանկում (էջ 14 – δια διαφορον λιθων τε και μαργαρων και χρυσεισεως), իբրև հիմնական վավերական բնագրեր, հունարեն Ավետարանների հետ ներկայացվում է միայն վրացերենով գրվածները (και ιερα ευαγγελια κατα τε την ελλαδα φωνην και γραφην και την των Ἰβηρων):

Գիմորդների ծագման մասին հիմնադիրը ոչինչ չի ասում, քանի որ Պետրիցունի մենաստանում ճգնողների՝ «վրացերեն գիրն ու լեզուն իմացողների» շարքում կարող էին լինել և իրականում կային հայեր: Սա ակնհայտ է հետևյալ հանգամանքից. Պետրիցունի վանքի կանոնադրությունը եռալեզու էր՝ հունարեն, վրացերեն և հայերեն (էջ 56): Հիմնադիր Գրիգոր Բակուրյանի և Երուսաղեմի Եվթիմիոս⁶⁶ պատրիարքի ստորագրությամբ ամրագրված հունարեն տեքստը պետք է ծառայեր որպես պաշտոնական փաստաթուղթ, իսկ վրացերենը և հայերենը հունարեն չիմացող եղբայրների տեղեկատվության համար էին: Սա բացատրված է հենց հիմնադրի կողմից. «εγραφη δε ρωμαϊκόν, ἰβηρικόν και ἀρμενικόν διά τὸ τοὺς μοναχοὺς τῆς τοιαύτης μονῆς Ἰβηρᾶς τε τυγχάνειν και μὴ ἐπίστασθαι ρωμαϊκὰ γράμματα· ἀλλ' ὀφείλει μετέρχεσθαι τὸ τοιοῦτον τυπικόν διά τε τῶν ἰβηρικῶν και ἀρμενικῶν γραμμάτων· τὸ κῆρος δὲ τυποῦμεν ἔχειν τὴν ἐνταῦθα ρωμαϊκὴν ἅπασαν γραφήν»:

Այսպիսով, վրացիները, որոնք գիտակ չէին հունարենին, պետք է դիմեին վրացերեն և հայերեն տեքստերի օգնությանը:

[20] Հունարենին չտիրապետող վրացիների համար քավական կլիներ միայն վրացերեն տեքստը: Իսկ հայերենով ընդօրինակությունը պետք է որ նախատեսված լիներ միայն հայերի, ավելի ստույգ՝ հայ քաղկեդոնականների համար, որոնք ծագումով վրացիների հետ մեկտեղ իրենց միասնական դավանանքի պատճառով վրացիներ են

⁶⁶ Տե՛ս Սերգիյ վարդապետի «Արևելքի Հայսմավուրք» (Արмяне в Восточной П., էջ 689: 1105–1112, սովետյն եմմետ.՝ Լուի Պրետի (Louis Petit), նշվ. աշխ., էջ XVІІІ:

անվանված³⁷: Առաջին հայացքից կարող է թվալ, թե իմ մատնանշած պահանջը՝ այլազգիների համար վրացական գրի և լեզվի պարտադիր իմացությունը, վանքի հիմնադրման ժամանակ դեռևս բավարարված չէր. եղբայրների շարքում կային նաև հայ քաղկեդոնականներ, որոնք դավանանքի պատճառով վրացի էին անվանվում, և ովքեր կանոնադրության հայերեն տեքստի կարիքն ունեին: Արդեն պարզաբանվել է, որ այդ պահանջի համար լիովին բավարար էր վրացերենով ծիսական գրքերի իմացությունը. սակայն այս պահանջը բավարարող Պետրիցունի եղբայրության հայերը, որոնք, ըստ երևույթին, տիրապետում էին նաև կենդանի խոսակցական վրացերենին, առավել հմուտ էին հայ դպրության մեջ: Ի սկզբանե Պետրիցունի վանքի հայ քաղկեդոնականների շարքում այն անձը, ով փայլուն տիրապետում էր հայ գրին և բոլոր դեպքերում նախընտրում էր օգտագործել այն որպես իր համար ավելի սովորական գիր. պարզվում է՝ հենց վանքի հիմնադիր Գրիգոր Բակուրյանն է: Նա *Կանոնադրության* պաշտոնական հունարեն տեքստում ստորագրում է հայերեն տառերով: Այս հայերեն ստորագրությունը, որը հրատարակչի կողմից ներկայացված է հունարենով՝ ըստ Մուսեսուի հրատարակության, հոչակում է. «Ես՝ Գրիգոր Բակուրյանս, սեբաստոսս և Արևմուտքի մեծ կառավարիչս (դոմեստիկոսս), անձամբ ստորագրել եմ Պետրիցունի Սուրբ Աստվածամայր իմ սրբազան վանքի սույն տիպիկոնը»: Գրիգոր Բակուրյանը տիպիկոնի վերջաբանում հունարենով հատուկ նշում է, որ իր ստորագրությունը հայերեն է. «Και ύπεγράφη παρ' ἐμοῦ

³⁷ Բնրված քաղվածքում *Ίβηρας*-ին հաջորդող *τε*-ն ստիպում է ինձ առաջադրել նետևյալ վարկածային ուղղումը՝ *Ίβηρας τε* [**και Ἀρμενιονς*]: Սա, իհարկև, ավելի լուծելացնելը Պետրիցուն վանքում նա քաղկեդոնականների նշանակությունը: Մուսեսուի բնագրում (նշվ. աշխ., էջ 204) բացակայում է նաև *իրևրևիր* բառը. «ἐγράφη δέ, ὡς εἶπομεν, τὸ παρὸν τοπικὸν ῥωμαϊκόν, ἰβηρικόν καὶ ἀρμενικόν, ἐπεὶ οἱ καὶ οἱ καλόγηροι τοῦ μοναστηρίου δὲν ἠξέσπουον τὰ ῥωμαϊκὰ γράμματα»: Ընդհանրապես, ցանկալի լլիկներ իրապես պատրաստել Պետրիցունի տիպիկոնի քննական տեքստը:

τε αἰτοῦ τοῦ σεβαστοῦ Γρηγορίου καὶ μεγάλου δομεστικοῦ τῆς δούσεως τοῦ Πακουριάνου διὰ ἀρμενικῶν γραμμάτων».³⁸

Այսբանից հետո անհրաժեշտություն անգամ չկա մատնանշելու, որ Գրիգորի *յան*-ով վերջացող (Բակուրյան) ազգանունը հայկական է, և նրա հարազատները կրում են [21] հայկական կամ հին հայկական առօրյայում ավելի գործածական անուններ, ինչպես օրինակ՝ Աբաս, Վարդան:

Անհայտ է, որ վրացական Պետրիցոն վանքի հիմնադիրը քաղկեդոնական էր, արյունով և ծագումով՝ հայ: Այս առումով, անտարակոյս, ստույգ և ճշմարիտ է Աննա Կոմնենեի (Alex. II, 4 Bonnac, p. 96) վկայությունը Գրիգոր Բակուրյանի մասին առ այն, որ. «ἀνὴρ δὲ οὗτος μικρὸς ἦν δέμας κατὰ τὸν ποιητὴν, πλὴν ἀλλὰ μαχητὴς, γένους λαμπεροῦ Ἀρμενίων ὀρμώμενος»³⁹: Հայր Լուի Պըտին հայկական նշանավոր ազնվագարնության մասին վերջին հատվածը համարում է անստույգ, քանի որ հենց Գրիգորն իր մասին վկայում է, որ ինքը վրացական ազնվագարն ցեղից է (էջ 2 – τὴν γέννεσίν τε ἐκ τῶν ἐώϊων ἔχοντος ἐκ τῆς τῶν Ἰβήρων παμφοσεστάτης φύλης)⁴⁰: Սակայն այժմ մեզ համար պարզ է, թե Գրիգորի համար ինչ ծավալուն, գուտ մշակութային նշանակություն ունի «վրացի» բառը. ցանկացած հայ քաղկեդոնական, ով ավելի

³⁸ Ջարմանալի է, որ Ե. Լուի Պըտին Գրիգոր Բակուրյանին համարել է գուարյուն վրացի, և նրա հայերեն ստորագրությունը բացարձակապես տարանջատված չի առաջացրել: Մոսկոսը, եամմնայնդեպս հարցական նշան է դնում:

³⁹ {«Այս մարդը շուրթերով փոքր էր, բայց բազմատենչ էր և ծագում էր մի ազնվական հայկական ընտանիքից» – թարգմ. Մ. Շ.}:

⁴⁰ Պրոֆեսոր Յագարևիլին (Сведения о памятниках грузинской литературы. III, стр. XII, прим.) Պետրիցոն վանքի հիմնադիր Բակուրյան նորայուններին վրացի է անվանում «քստ բյուզանդական պատմիչների վկայությունների (Աննա Կոմնենեի)»: Չգիտեմ, թե ուրիշ ինչ այլ պատմիչների է ակնարկում Ա. Ա. Յագարևիլին, սակայն Աննա Կոմնենեն Բակուրյանին հայ է համարում, ինչպես այդն պարզ է մեջբերումից: Այնուամենայնիվ Ա. Ա. Յագարևիլին կամայականորեն ենթադրում է, թե Բակուրյանները «Ջան- Բակուրիան-Օրբելյանի իշխանական տոհմից են»: Վերջին ենթադրությունը Թ. Շորդանիան (Хрон., II, стр 155) փորձում է օտարել, սակայն հնարավոր է, որ Ա. Ա. Յագարևիլին ճիշտ է, միայն այն իմաստով, որ Բակուրիաններն ու Ջանբակուրիանները (Օրբելյանները) ծրարավորված են միևնույն իշխանական տոհմից:

է տիրապետում հայերենին, քան վրացերենին, ըստ իր պատկերացման, վրացի է՝ զտարյուն վրացուն հավասար: Նա վրացի է, քանի որ, ըստ Գրիգորի արտահայտության, դավանում է. «*τὴν ἀληθῆ καὶ ὀρθόδοξον πίστιν τῶν χριστιανῶν κατὰ τὴν παράδοσιν τοῦ τῶν Ἰβήρων γένους*»⁴¹ (էջ 8): Թեև «քրիստոնյաների ճշմարիտ և ուղղափառ հավատը, ըստ վրաց ազգի ավանդույթի» ամեն ինչում համաձայնում է հունականի հետ, ինչպես նշում է հենց ինքը՝ Բակուրյանը (էջ 8), այնուամենայնիվ նա իրեն ոչ թե հույն, այլ վրացի է համարում, քանի որ ծագում է մի շրջանից, որն, անկասկած, մի ժամանակ եղել է հայկական, սակայն Թ դարում գրեթե ամբողջովին վրացականացվել էր: Նկատի ունեմ Շորոխ գետի ավազանում գտնվող Տայքը և Կղարջքը, որտեղ Ը դարից ի վեր ուժեղանում էին Արտանուջի Բագրատունիները: Թե ովքեր էին այս շրջանի տեղաբնիկները, տվյալ դեպքում մեզ չի հետաքրքրում: Հավանաբար, լազական կամ մենգրեցյան որևէ ցեղ (լազերն ու մենգրելներն ազգակից են վրացիներին): Սակայն Է դարում երկիրը հայկական էր, համենայնդեպս հայկական բնութագիր ուներ, և, ըստ երևույթին, այստեղ ծաղկում էր [22] հայ քաղկեդոնականությունը: Դատելով Գրիգոր Խանձտեցու (կամ Խանձտելիի – Մ. Շ.) վրացական վարքից՝ այս շրջանում ծաղկում է ապրում Իշխանի հայկական վանքը, որն այդ ժամանակ «երանելի Ներսես կաթողիկոսի նստավայրն ու մայր տաճարն էր», այսինքն՝ հայտնի հայ կաթողիկոսի: Մայր տաճարը կառուցել է հենց ինքը՝ Ներսես կաթողիկոսը: Այնուհետ, ըստ վրաց վարքագրի, այն երկար տարիներ լքված է մնացել, մինչև Ը-Թ դարերում վերանորոգվել է Սուրբ Սաբբասի (Սավա-յի) կողմից, [*այս անգամ] սակայն որպես վրացական վանք, իսկ հետագայում էլ՝ վրաց եպիսկոպոսի նստավայր: Համաձայն վրացական

⁴¹ {«Քրիստոնյաների ճշմարիտ և ուղղափառ հավատն ըստ վրաց ազգի ավանդույթի» – թուրգմ. Մ. Շ.):

նույն աղբյուրի՝ այս ժամանակաշրջանում է սկիզբ առել նաև վրացական վանքերի շինությունը Տայքում և Կղարջքում: Վրացի վանականները հաստատվում էին լքվող հայկական վանքերում, որոնց մեծամասնությունը դեռևս պահել էր հայկական անվանումը, ինչպես՝ Իջխան, Շատրեբդ, Միջնաձոր և այլն: Եվ այս շրջանում՝ Թ, նույնիսկ Ժ դարում, վրացի վանականները շրջապատված էին թեպետ միադավան, սակայն, այլազգի՝ հայ բնակչությամբ և չնայած վրացիների քաղաքական տիրապետությանը՝ երկիրը վրացական անվանելու իրավունքը նրանք հիմնավորում էին այն փաստով, որ եկեղեցիներում ծիսակատարությունը վրացերենով էր կատարվում⁴²: Տեղի հայերը, լինելով քաղկեդոնական, աստիճանաբար ապագա այնպեղեցին և դարձան վրացիներ: Ժ դարում տարածքը հայերին վերադարձնելու փորձ կատարվեց՝ նրանց հակաքաղկեդոնական դարձնելու միջոցով, սակայն գործը ձեռնարկած Սոսթենես վարդապետը հաջողություն չունեցավ (Жордания Т., Хроника и пр., I, 1983, стр. 125): 1083 թվականին, երբ հաստատվում է Պետրիցոնի վանքը, այս տարածքի հայ քաղկեդոնականներն արդեն իրենց վրացի էին համարում, թեպետ դեռ պահպանում էին հայ դպրությունը: Նույն ժամանակում Տայքի ու Կղարջքի հայերը, ըստ երևույթին, տիրապետում էին խոսակցական վրացերենին, որը, բնականաբար, պետք է ներառեր տեղական հայերեն բառեր: Վրացերենում քաղաքացիության իրավունք ստացած հայերեն նման բառերի շարքում է *տանտտեր*-ը: Այն բառացի նշանակում է *տանտտեր* և իրականում [23] արտահայտում է այն հասկացություն-

⁴² Պորժնև այս նկրահանգումը հիմնավորել նույն *Վարք*-ի մեկ այլ հատվածով: Հիշատակելով Գրիգոր Լասնձտնցու աշակերտ մնձն Էփրևմի՝ «փրնց երկրին» բերած «բազում շնորհների» մասին, և որ Վրաստանում (Զարթլի) Էփրևմը մյոռնօրհենկրի կարգն է նստատառում, վարքագիրը պարզաբանում է. «Վրաստանն ընդարձակ երկիր է ետանդվում, այսինքն (այն ամբողջը), որտեղ վրացերենով պատարագ են մատուցում և ամեն տնանկի աղոթք կատարում, հունարենով արտասանվում է միայն «կիրին էլնյտն»-ը, որը վրացերեն նշանակում է «Տև՛ր, ողորմությո՛ւն արա», կամ «Տև՛ր, ողորմի՛ր մեզ» (Գրիգոր Լասնձտնցու Վարքը, վրաց. կրտտ., գլ. 43, 5-8):

նաձոր վանքերի սահմանները: Երկուսն էլ վրացական վանքեր են Կղարջքում: Օսլիզը գտնվում է կիրճի սկզբում, աջից կոթնած է Ճորոխի վտակ Իմերխև գետին. այն վաղուց հայտնի է:

Ինչ վերաբերում է Միջնաձորին, Բակրաձեն մեջբերված հոդվածում ենթադրում է, որ դրանում «թաքնված է վանքը, որը նախկինում հայտնի էր Պորտա կամ ավելի ճիշտ Բերթա անվամբ»: Սակայն Պորտան կամ Բերթան երկու տարբեր վանքեր են, և Միջնաձորը նրանցից ոչ մեկի հետ չի նույնանում: Միջնաձորի հմպտսխ.՝ Միձնաձորի՝ Կղարջքում վրացական վանքի աշխարհագրական դիրքը մանրամասնորեն պարզ դարձավ Գրիգոր Խանձտեցու՝ Երուսաղեմում հայտնաբերված *Վարքից*: [24] 1904 թվի ամռանն ինձ հաջողվեց գտնել նաև վրացական երբեմնի ամբողջովին գործուն վանքի ավերակներն Իմերխևի աջ վտակ Կարճխալկիի միջին հատվածում: Հետաքրքրական է, որ թեև Բագրատի հռչակագրում վրացական «մամա-սախլխ-ի»-ի փոխարեն առկա է հայկական «տանուտեր-ի»-ն, սակայն որպես ածանցավոր օգտագործված է «սամամա-սախլխո»-ն (Бакрадзе Д., стр. 21, 22=Т. Жордания, стр. 9,7):

Նույն հայերեն բառը հանդիպում է Սվանեթիի Կալսկ վանքի Թ-Ժ դարերի Քառավետարանի մի վրացական կցագրում: Քառավետարանը երբեմն պատկանել է Կորիդեո վանքին, որը Բրոսսեն սխալմամբ Սվանեթիում էր փնտրում (Note sur un manuscrit grec des quatre Évangiles, rapportés du Souaneth-Libre et appartenant au comte Panin, *Mel. asiat*, VI, p. 283–284): Ինչպես արդեն Բակրաձեն է մատնանշել (նշվ. աշխ., էջ 26–27), Կորիդեոն գտնվում է Բաթումի շրջանի Մուրգուլյան կիրճում, այսինքն կրկին Տայք-Կղարջքի շրջանում: Մեզ հե-

σγῆλλιον-ին և լատիններին sigellum-ին, տն՛ս II. Rapp Jr., *Studies in medieval Georgian historiography: early texts and eurasian contexts*, in *CSCO*, vol. 601, tomus 113, p. 416 – Գ. 11.):

տաքրքրող վրացական կցագիրը գրված է եկեղեցական գրով⁴⁴ (Բրոսսե, նշվ. աշխ., էջ 278): Նրանում առկա է ոչ միայն «տանուտերի»-ն (ՅՅԾԹ), այլև դրանից ածանցված վրացական վերջածանցով «տանուտորբա»-ն (ՅԾԹԾԹ ԹԾԾԾ): Այս փոխառյալ բառի վրացերեն կազմիչ վերջածանցի նման յուրացումն ավելի ուշ չէ, քան ԺԴ դարասկիզբը:

1904 թ. ամռանը Տանձուտ գյուղում ԺԴ դարասկզբին արված վրացերեն վիճակագրության հատված պարունակող մի բեկոր գտա, որը տեղադրված էր մզկիթի արտաքին պատերից մեկի մեջ: Վրացական այս արձանագրության մեջ հայտնաբերվեց իսկիոր առարկա բառի նույն «տանուտորբա» (ՅԾԿԾԹԹԾԾԾ) ածանցյալ ձևը:

Ակնհայտ է, որ այս հայերեն բառը հարազատ է դարձել տեղական վրացերենում, ավելին՝ միայն Տայք-Կղարջքի վրացերենում՝ ձեռք բերելով «քաղաքացիության» իրավունք: Հիմնականում հենց այդ պատճառով է, որ ես այժմ համարձակվում եմ պնդել, որ Գրիգոր Բակուրյանը՝ վրացական Պետրիցոն վանքի հիմնադիրը⁴⁵, եղել է տայք-կղարջքյան վրացիացած հայ քաղկեդոնականներից, քանի որ իրեն պատկանող Պետրիցոն վանքի կանոնադրության մեջ նա գրում է. «*κελλαρίτης, ὅς παρὰ τοῖς Ἰβηροσι τανουτέρες ὀνομάζεται*»⁴⁶ (գլ. VI, էջ 22)⁴⁷, իսկ «տանուտերի» բառը կիրառում էին միայն այն վրացիները, ովքեր, ինչպես մենք արդեն գիտենք, տայք-կղարջքցիներն էին. այսինքն՝ Տայք-Կղարջքի վրացիացած հայ քաղկեդոնականները: [25] Եվ այսպես, վրացիացած հայ քաղկեդոնականը բացառիկ իրավունքով Բուլղարիայում հիմնադրում է վրացական ուղղափառ մի վանք.

⁴⁴ {Այսինքն՝ «խուզուրի»-ով – Մ. Շ.}:

⁴⁵ Կամ էլ նորոգողն ու ընդլայնողը, տե՛ս էջ 17–18 {այսինքն՝ տե՛ս խնդրո առարկա՝ թարգմանավոր եղբոր՝ Մ. Շ.}:

⁴⁶ {«[վանքի տնտեսավարը, որին վրացիները «տանուտեր» էին անվանում» – թարգմ. Մ. Շ.}:

⁴⁷ G. Musacus, p. 187.

ինչը վկայված է պաշտոնական փաստաթղթի տվյալներով: Ինչպե՞ս կարելի է բացատրել այս և այլ արտոնությունները, մասնավորապես այն իրավունքը, որով արգելվում էր հույներին վանք մուտք գործել: Արդյոք նման բացառիկ արտոնություն ունենալու համար բավարար էին Գրիգոր Բակուրյանի միայն անձնական արժանիքները, որքան էլ դրանք բարձր լինեին: Իհարկե, վրացիները Բյուզանդական կայսրությունում հաճախ էին անկախության իրավունք ստանում իրենց վանքերում: Սակայն արդյոք չկային նրանց այդ իրավունքի հաստատմանն այս կամ այն դեպքում նպաստող տեղական հանգամանքներ: Օրինակ, արդյոք կայսերական քաղաքականությունը Պետրիցոսի վանքի հետ որևէ հույսեր չէ՞ր կապում այն դիտարկելով որպես գործակից Բուլղարիայի տեղական կյանքում ծագած մի ինչ-որ ցավոտ հարցի լուծման համար: Հիրավի, այսպիսի տեղական կնճռոտ հարցերից էր պավլիկյանների շարժումը. «Փիլիպոպոլսի շրջակայքի ամբողջ երկիրը ԺԱ դարում, - կարդում ենք Կ. Ի. Իրեչեկի *Բուլղարների պատմության* (ռուս. թարգմ. Ֆ. Կ. Բրունի և Վ. Ն. Պալաուզովի, 1878, էջ 281) մեջ, - լեփ-լեցուն էր հայերով, բոզոմիլներով և պավլիկյաններով»:

970 թ. Հովհաննես Ա Չմշկիկ կայսրը պավլիկյաններին բնակեցրեց Թրակիայում՝ Փիլիպոպոլսի մոտակայքում, որտեղ երաշխավորված էր նրանց ազատությունը: Այդուհանդերձ, դեռևս Ը դարի կեսերին Կոստանդին Կոպրոնիմոսն այստեղ բնակեցրեց նրանց դավասակիցներին, ինչը նպաստեց պավլիկյանների՝ Եվրոպա ներթափանցմանը և այստեղ նրանց ուսմունքի տարածմանը (Gibbon, *The Decline and Fall of the Roman Empire*, LIV, London, in «Chandos Classics», IV, p. 97, ֆրանս. թարգմ., Փարիզ, 1839, II, էջ 563): Ալեքսիոս կայսրը, սակայն, չէր հանդուրժում նրանց ներկայությունն անգամ այս տարածքներում: 1115 թ. նա ձմեռային կայան է տեղադրում Փիլիպոպոլսի

մոտակայքում, որպեսզի բռնությամբ ստիպի նրանց դարձի գալ ուղղադավանության: Մինևույն ժամանակ պավլիկյանների բնակատեղիի մոտակայքում հիմնվում է «ուղղափառությանն ու կայսերը հավատարիմ Ալեքսիոսի քաղաքը»: Ալեքսիոս կայսեր նման ծայրահեղ միջոցները բացատրվում էին նրանով, որ պավլիկյանները Նորմանական պատերազմի ժամանակ լքել էին կայսերական դրոշը (Gibbon, op. cit, p. 97-98 = ֆրանս. թարգմ., էջ 564, Բրոքհաուզ, Հանրագիտարանային բառարան, *պավլիկյաններ* բառի տակ): Անկախ այդ ամենից, կայսրը, սակայն, նրանց վերաբերում էր որպես սողկալի հերետիկոսների և երազում էր նրանց նգովման մասին (Gibbon, op. cit, p. 97, ino. 5 = ֆրանս. թարգմ., էջ 564, երկրորդ աղյուսակի ծան. 1):

Հենց այդ պատճառով է, որ ես բարձրացնում եմ հետևյալ հարցը. արդյոք հայ պավլիկյանների դեմ պայքարում աջակցություն չէր սպասվում հենց մեզ հետաքրքրող վրացական վանքից, որի եղբայրության թվում էին նաև հայ քաղկեդոնականները: Ստորև [26] հարկ է մեջբերել մի հույնի վկայությունն առ այն, որ այլադավան հայերի դեմ պայքարում հույներն իսկապես լավագույն միջոց էին համարում հայ քաղկեդոնականների ծառայություններից օգտվելը:

Մյուս կողմից վրացիները ևս, ըստ երևույթին, այստեղ, այլ ոչ իրենց հայրենիքում կարող էին բախվել *բոգոմիլների* աղանդի հետ, եթե, ինչպես հիմա է թվում, ճիշտ է այն միտքը, որ Հայաստանում ավելի ուշ շրջանի պավլիկյանները ձգտում էին դեպի այն շրջանները, որոնք սահմանակից չէին Վրաստանին: Բոգոմիլների աղանդի վերաբերյալ իմ հայտնաբերած վրացերեն տեքստը վերաբերում է այդ ժամանակաշրջանին: Այն Եվթիմիոս Զիգաբենոսի տրակտատի՝ մասամբ կրճատված թարգմանությունն է, որը հավանաբար արվել է

Պետրիցոնի վանքում Բուլղարիայում⁴⁸: Ի միջի այլոց, վրացիների և հայ քաղկեդոնականների շփումը Բուլղարիայի հետ, իր հետքն է թողել Գեորգի Հաղթող Ավվերդցու խաչի հրաշքի վերաբերյալ վրացական լեգենդի (ավանդության – Մ. Շ.) վրա՝ կապված մի պատանու հետ, ով վատ էր խոսում վրացերեն, քանի որ մեծացել էր հայերի մեջ⁴⁹:

Կային նաև հայ քաղկեդոնականներ, որոնք նույնքան սերտ հարաբերություններ ունեին անմիջապես հույների հետ, և այս շփումն ավելի հին էր ու առավել հղի էր հետևանքներով:

Քաղկեդոնականների ինքնավար համայնքի առկայությունը հայկական տարածքում պետք է որ հատկապես հետաքրքրական լինի բյուզանդագետների համար: Ցարգրադում (Կոստանդնուպոլսում) ևս, քաղկեդոնական ուղղափառությունը վճռորոշ պահերին հենց նման միջավայրից էր համալրվում նախանձախնդիր ջատագովներով: «Նիկիայում, Ստամբուլ-կապուսիի ու Գյուլ-կապուսիի միջև, աշտարակի պատի վրա», որ հայտնի էր «Արտավազդի աշտարակ» անվանք, մինչև այսօր էլ պահպանվել է հունական արձանագրություն Լևոն (Իսավրացի) և Կոստանդին կայսրերի՝ արաբների դեմ տարած հաղթանակների հիշատակությամբ: Արձանագրության մեջ նշվում է նաև Արտավազդը (Ἀρταβάσδος)՝ «ամենափառահեղ պատրիկն ու կյուրոպաղատը», ով մասնակցել է Նիկիայի մոտակայքի գործողութ-

⁴⁸ Տեքստը գտնվում է *Գրածնապարտիան տարածման հասարակական կազմակերպությունում*, № 51, թ. 78ա և կրդ.: Ես այս թարգմանությունը եսմնմատնել նմ եռնաբրն բնագրի հետ. թարգմտման արդյունքները քաղվածաբար սրատրատո են երատարուկության:

⁴⁹ «Սուրբ նահառակի այդ խաչը,- ինչպես ստվում է ԺԳ դարասկզբի այս ավանդության մեջ (Жордания Т., Хроники, II, стр. 117).- [նրել է:] կանուն Ալտվերդցի նախամարտիրոսի (Գ-կորգի): Այն կրաշագործեց մի կրիտասարդի Գանձակում (այժմ՝ Ելիզավետպոլ), ինչպես կհում Բուլղարիայում, որին նս տնակ նմ սևիպեան աշքեյավ, և ով ինձ սրտունց խիպեան երաշքի մասին և դրեց [խաչը] Ալտվերդիում, Սուրբ Մարտիրոսի դռների մոտ» և այլն:

յուններին «անձամբ, ինչպես կարելի է ենթադրել Թեոփանեսի վկայությամբ» (էջ 406⁵⁵): Եվ անհա Լևոն Իսապրացու մահից հետո (741 կամ 740) հենց այս հայի՝ Արտավազդի վրա են «սևեռվում ուղղափառ մեծամասնության հայացքները, նրան են հռչակում կայսր և նա է [27] վերականգնում պատկերների պաշտամունքը» (Успенский Т. И., *Две исторические надписи, Известия Русск. Археол. Института в Константинополе*, III, София, 1898, стр. 180–182 сл.): Հունասիրության (կամ հունարանության) հայ քաղկեդոնական համայնքի այս կենտրոնը գտնվում էր, ըստ երևույթին, Կապադովկիայի հարևանությամբ: Ընդհանրապես, Կապադովկիայի նշանակությունը հնագույն քրիստոնեական եկեղեցու համար հայտնի է բոլորին: Սակայն համաեկեղեցական կյանքում առկա կապադովկյան ավանդները պետք է որ ներառեին նաև հենց Կապադովկիա ներթափանցած հայ իրականության ինչ-ինչ տարրեր: Հունական եկեղեցու բազմաթիվ գործիչներ սերում էին Մերձկապադովկյան կամ Կապադովկյան Հայաստանից (Armenia Minor): Ստորև ներկայացվող զանազան վկայություններից, առանձնանում են «անապատի առաջնորդ» (*կինոբիարխս*) Թեոդոսիոս Մեծի (մհց. 11 հունվ. 529 թ.) և Սուրբ Սաբբասի (մհց. 5 դեկտ. 532) հոգատար հետաքրքրությունը հայ քաղկեդոնականների ճակատագրի հանդեպ, ինչը բացատրվում է նրանով, որ երկու սրբերն էլ ծագում են Կապադովկիայից, Թեոդոսիոսը՝ Գարիսսա գյուղից, իսկ Սաբբասը՝ Մութալասկիից: Թեոդոսիոսի իրավահաջորդը «ըստ առաջնորդության, հայազգի Սոփրոնիոսն էր՝ ծնունդով Սեբաստիային կից Ջոմերի բնակավայրից»: «Հովհաննես Լուսյացը (մհց. 7 դեկտ. 558 թ.) ծնունդով Հայաստանի Նիկոպոլիս քաղաքից էր»: Հենց ինքը՝ Եվթիմիոս Մեծը (մհց. 20 հունվ. 473 թ.) ծնունդով Հայաստանի Մելիտենե քաղաքից էր: Այս ամենն է, որ ռուս հայտնի գիտնականին ներշնչել է այն միտքը, որ «Կապադովկիան և Հայաստանը Ե և Զ

դարերի պաղեստինյան վանականների շարքերում ունեին հայտնի ու գգալի թվով ներկայացուցիչներ» և հենց այդ պատճառով էր, որ «հայ-կապադովկյան եկեղեցական որոշ կարգադրությունների փոխանցումը դեպի Պաղեստին, իսկ Պաղեստինից՝ Աղեքսանդրիա, Անտիոք, և վերջապես՝ Կոստանդնուպոլիս, միանգամայն հնարավոր էր»⁵⁰:

Հայագիտության տեսանկյունից ևս հունահայկական քաղկեդոնական աղերսները մեծ կարևորություն են ներկայացնում: Դրանք ընկած են Հին Հայաստանի «Sturm und Drang»⁵¹-ի դարաշրջանի ինչպես եկեղեցական, այնպես էլ մատենագրական բոլոր երևույթների հիմքում: Այդ աղերսները սերտորեն առնչվում են նաև հայ պատմագրական աշխատությունների ճշգրիտ լուսաբանմանը, որոնք գործածվում են բազմաթիվ հայագետների կողմից: Ի միջի այլոց, [28] միայն դրանց ճիշտ պարզաբանման դեպքում հնարավոր կլինի վերջնական եզրահանգում անել, մասնավորապես, պատմիչ Մովսես Խորենացու հետ կապված չարչրկված խնդրի վերաբերյալ:

Ինձ ավելի ու ավելի հավանական է թվում այն, որ հայ մատենագրությունը հունաբանության շարժման, եթե ոչ ծագման, ապա դրա խորացման և ամրապնդման համար պարտական է հենց հայ քաղկեդոնականներին, և որ գլխավորապես նրանք՝ հայ քաղկեդո-

⁵⁰ Болотов В. В., Михайлов день (Христ. Чтение, 1892, II, 620–621). Հանգուցյալ զիոնականը մասնավորապես ապացուցում էր Պալեստինիության տոնի հայկական ծագումը, որն, ըստ նրա, Կապադովկիա էր անցել հավանաբար Հաբաստանից: Մակույն, ինչպես կտնաննք, այս օրինակն այդքան էլ կամուսիչ չէ, իրերի փաստացի դասավորման, այլ ոչ թե այն պատճառով, որ «կասկածնի է, որ Հաբաստանն ամբողջ քրիստոնյա աշխարհին այդ հարցում օրինակ ճառայեր», ինչպես կարծում էր արք. Սերգիյը, ով սակավատեսակ էր եին հայերի քրիստոնեանշակությանին ներուծին (Πολυμύη δὲ βλαφελοκ βοροκα, 2-οε ηζδ., 1901, II, σπ. 313):

⁵¹ {Բառացիորեն՝ «Գրոն և փոթորիկ», «փոթորիկ ու ծգտում», պայմանականորեն թարգմանվում է որպես «փոթորիկ ու ճնշում, լարում»), 1760–1780 թթ. գերմանական գրականության ժամանակից և կրթության շարժում էր, որը մտնում էր բացիոնալիզմը և կիմվում էր անհատականության, ծայրանկյունի և ազատ արտահայտվելու սկզբունքների վրա – Մ. Շ.}:

նականներն ունեցան մի վիթխարի ավանդ մայրենի դպրության մեջ, այն է՝ հունական սքոլաստիկայի ու փիլիսոփայության փոխադաս-վաստումը հայկական հողի վրա: Վաղ շրջանի հայ մեծագույն փիլի-սոփաները կամ կասկածվում էին քաղկեդոնականությանը հարելու մեջ, ինչպես օրինակ, Հովհաննես Օձնեցին, կամ իրականում քաղկե-դոնական էին, ինչպես՝ Կարինի (այժմ՝ Էրզրում) եպիսկոպոս քաղկե-դոնական Թեոդորը, ով անվանվում է փիլիսոփաների առաջնորդ («փիլիսոփայապետն») (տե՛ս Моисей Каланкатуыйский, II, 46, изд. Эмман, стр. 212 = թարգմ. Բ. Պատկանովի, էջ 214): Քաղկեդոնական-ները Հայաստանում, ըստ երևույթին, ունեցել են այն նույն դերը, որն Ասորիքում և Պարսկաստանում սովորաբար վերագրվում է նեստոր-ականներին⁵²: Սակայն հայ գիտական կյանքի համար հայ քաղկե-դոնականների այս բեղուն գործունեությունը կարող է վերաբերել ավելի վաղ ժամանակներին, երբ նրանք իրենց օտար չէին զգում Հայաստանում, այլ իրենք իրենց հայ էին համարում: Հայրենիքում քաղկեդոնականության պարտությունից հետո հայ քաղկեդոնական-ները, որոնք բավական սերտ հարաբերություններ ունեին հույների հետ, սկսեցին ներթափանցել նրանց մեջ ու հունականացվել, և հայ-րենի երկրում նրանց սկսեցին հայերեն անվանել «հոռոմներ», այ-սինքն՝ հույներ կամ հոռոմեացիներ:

Հայ քաղկեդոնականները մյուս հավատակիցների հետ հավա-սար իրավունքներով շարունակում էին հանդես գալ հունական վան-քերում, ինչպես օրինակ՝ Աթոսի վաղ շրջանի ճգնավորների թվում

⁵² Մեստորականների ունեցած նշանակությունը, սակայն, այս տոմսով ես չափազանց-վում է, օրինակ, երբ նեստորական եկեղեցին հռչակվում է Ասուրալոք Ասիայի և Հնար-վոր Արևելքի ժողովուրդների մեջ քրիստոնեական մշակույթի և քաղաքակրթության տարածող (« la dispensatrice », J. Labourt, *Le christianisme dans l'empire perse*, p. 351): Ասուրալոք Ասիայի ժողովուրդների շարքում չի կարելի անտեսել վրացիներին ու եսյերին, որոնք ի դեպ, իրենց քրիստոնեական կրթության համար սարսուղանք են ցուցաբերում նեստորականությանը, որքան այլ դավանաոճներին:

վկայված հայ քաղկեդոնական Հովսեփի վանականը, ով Աթոսի վանքի հայտնի գործիչ Եվթիմիոս Կրտսերի (մից. 898 թ.) ընկերն էր: Բաբստը՝ հիշյալ Եվթիմիոսի *Հարթի* հեղինակը, նրա մասին մեծ համակրանքով է խոսում, թեև թվում է, որ այս վարքագիրն առհասարակ հայերի հանդեպ որոշակի կանխակալ վերաբերմունք է ունեցել⁵³: Ավելի հաճախ [29] հայ քաղկեդոնականները հանդես են եկել Պաղեստինում: Այսպես՝ մեկ տասնյակի հասնող վկայություններից հիշատակենք հետևյալ՝ առավել քիչ հայտնի օրինակը. Հոզիվում, դաստելով շիրմաքարերի արձանագրություններից, «եղբայրների» շարքում կային նաև հայեր. Ἀρμένιος πρεσβύτερος (Κλεοπα Κικιτιδης, Τὰ κατὰ τὴν λαῶνας καὶ τὸν χεῖμαρρον τοῦ Χουζιβᾶ κτλ., *Исрусалим*, 1901, стр. 71) և *Ιωάννης μοναχός Ἀρμένιος* (sic, стр. 76).

Հայր Կղեոսյան՝ Հոզիվի մասին աշխատության հեղինակը, իրավամբ նկատում է (էջ 82), որ այս ուղղափառ վանքում տարբեր ազգության վանականները, այդ թվում իհարկե, նաև հայ քաղկեդոնականները, ունեին սեփական եկեղեցիները և յուրաքանչյուրն իր ծառայությունը կատարում էր մայրենի լեզվով: Ոչ միայն Հայաստանում քաղկեդոնականության պարտության սկզբնական շրջանում, այլ նաև այսօր էլ՝ Եփրատի ավազանում՝ Դիարբեքիից ոչ հեռու գտնվող Ակն քաղաքում, հայ քաղկեդոնականները եկեղեցական ծեսերը կատարում են մայրենի լեզվով⁵⁴: Սա նոր երևույթ չէ. այս ավանդույթը

⁵³ Vie et office de Saint Euthyme le Jeune, texte grec publié par le R. P. Louis Petit, Paris 1904, Biblioth. Hagiographique orientale éditée par Leon Clugnet, p. 29-30. 'Ισοτήφ... ἦν γὰρ οὐ κριπτός τις καὶ ὑφάλος, κἄν ἀπὸ Ἀρμενίων τὸ γένος κατήγετο, ἀλλ' ἀπόνηρος ἄμα καὶ ἀπ' αὐτοῦ τὸν τρόπον καὶ ἄβολος, οἷον τὸν πνευματικὸν ὁ λόγος αἰνέτεται («Հովսեփի ... նա ծածկամիտ ու կսակամելի մեկը չէր, թեև կաշիական ծագում ուներ, բայց անբնաս էր. և բնավորությամբ միևնույն ժամանակ հեշտ ու դժվար էր. ինչպես ուսվում է ներքոգող ճատում» - թարգմ. Մ. Շ.):

⁵⁴ Ինճիճևան Ղ., Աշխարհագրագիտ., I, 1806, էջ 303 և հջրդ., Ճանիկևան Յ. Լ., Տնայթինք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 56: Ինճիճյանը ձևերի տավ ունեցել է կուրսական եկեղեցական նրբկրի գիրքը, որն օգտագործվում է այժմյան հայ քաղկեդոնականների կողմից և, որը թարգմանվել էր Կոստանդնուպոլսում «ի ՉԼուն», այսինքն՝ հավանաբար հայկական թվականություն «530 թ.» (1081 թ. Բ.Ե.), ինչպես իրավացիաբեև նմադրում էր Ինճիճ-

գալիս է միջին դարերից: ԺԱ դարի վերջում Նիկոն Սևեոնցին հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում հայ քաղկեդոնականների, մենակյաց *ծաթերի* կամ *ծեթերի* մասին, որոնք կենցաղավարում էին Ասորիքի Սև լեռան վանքերում:

Հետագայում *ծաթ* (*ծայթ*) կամ *ծադ* անվանումով հայերի մասին ինչ-ինչ տեղեկություններ են հայտնում նաև հայերը: Սակայն *ծաթ*-հայերը քաղկեդոնականներ էին, իսկ նրանց մասին տեղեկացնող (30) հայերը՝ ազգային եկեղեցու հետևորդներ, որոնք ավելի շատ հետաքրքրված էին *ծաթերի* մեղսալից կամ պատահական ծագմամբ, այլ ոչ թե իրական փաստարկներով և հարցի բուն էությամբ:

1410 թ. Մխիթար Ապարանեցին հիշատակում է *ծաթ* հայերի (*ծաթ հայք*) մասին, որոնք լինելով ծագումով հայ՝ գրում և խոսում էին հայերեն, սակայն ընդունել էին հույների դավանանքն ու բոլոր օրենքները և ամեն ինչում հնազանդ էին հույներին: Նա նրանց անվանում է *ծայթ*, ինչն, ըստ Մխիթարյանների ստուգաբանության, նշանակում է «անկատար», «թերի», քանի որ նրանք իբր թե միության մեջ էին նույնպես *ծայթ* կոչվող այն հույների հետ, որոնք հետևում էին Կեսարիայի եպիսկոպոս ոմն Անդրեասի աղանդին (Ինճիճեան

յանը (նշվ. աշխ., էջ 305): Հետաքրքրական է, որ Աննում, նայ լատինոհոնականների նախնադրությամբ ասորող մոսուլմանները՝ թրքացած նույնը, դեռևս պահպանում էին նայկական ազգանունները (նույն տեղում), այսինքն *mutatis mutandis* («փոխելով փոփոխելին» – Մ. Շ.), ստացվում է նույն այն պատկերը, որով նրկու-ներն հարյուր տարի ներկայանում էր Տայք-Կղարքի ազգությամբ վրացի բնակչությանը. բոլրացած վրացի մոսուլմանների նախնադրությամբ դեռևս զոյատևում էին քրիստոնեական վրացական բնակավայրերը: Հետաքրքրական կլիներ պարզել, թե արդյոք Աննի թրքացած նայ մոսուլմանները ժամանակին եղել են հայ ազգային նկեղնու հետևորդներ, թե՛ հայ քաղկեդոնականներ: Այստեղ ես չեմ շոշափում Ինճիճյանի այն կարծիքը, որ հնում նայերի քաղկեդոնական լինելը բացառապես նույնների քաղաքական ճնշումների կամ էլ հունարևոն դավանանքն ընդունելու միջոցով նույնների մեծարմանն արժանանալու առանձին անհատների փառասիրության հետևանք էր (նշվ. աշխ., էջ 304): Այս ստվերային նրկայների անկախությունը ես չեմ բացառում, սակայն տվյալ պատկերն ինձ հետաքրքրում է նայերի այն հատվածը, որն անկեղծորեն և ինքնակամ դարձավ քաղկեդոնական, ինչն ավելի էին ավանդույթներ ուներ և պայմանավորված էր ավելի բարդ պատմամշակութային պատճառներով, քան Բյուզանդիայի քաղաքական ճնշումը կամ նայերի միջից առանձին բանասերիկուների ու փառասերների ջանքերը:

Ղ., Աշխարհագրութիւն, I, 1806, էջ 303, Յ. Կ. Ճանիկեան, Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 9):

ԺԳ դարում փորձ է արվում ձերբագատվել հին հայ քաղկեդոնականության վերապրուկից՝ ի դեմս *ծաթերի*⁵⁵ նրանց նույնացնելով Հայաստանի՝ հյուսիս-արևելքում բնակվող արվանական ցեղի՝ *ծովդերի* հետ⁵⁶: Մխիթար Այրիվանեցին (հրատ. Էմին, էջ 54, հրատ. Պատկանով, էջ 69 = Brosset, Hist. Chron. De Mkhithar, p. 83) 821 թ. ներքո գրում է. «Յաուրս տէր Դաթի Փարսման քահանայ Կակաղեցի (հրատ. Պատկանով՝ Փարսման) որոշեալ ի Հայոց՝ ի Վիրս դարձոյց զԾոնդէացիսն, այս է *Ծաղն*, որ կան այժմ ի հոռոմս»:

Գուցե և *ծաթերի* նույնացումը *ծովդերի* հետ ավելի ուշ հավելում է և չի պատկանում Մխիթար Այրիվանեցուն: Հատկանշական է, որ *ծաթերին* որպես օտար ներկայացնելու ազգային եկեղեցու հետևորդ հայերին բնորոշ միտումը կարծես թե արտացոլված է նաև Ժ դարի մի աղբյուրի մեջ, այն է՝ Ուխտանեսի *Հայոց պատմություն*-ը: Ուխտանեսն իր աշխատության 3-րդ գլխում (I, 1, Ուխտանեսն եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Էջմիածին, 1871, էջ 14) խոստանում է ներկայացնել *ծաթ* կոչվող ժողովրդի մկրտության պատմությունը: Ցավոք Ուխտանեսի *Պատմության* այդ հատվածը չի պահպանվել, որն, ի դեպ, նույնպես հետաքրքրական է⁵⁷: Բայց, եթե արդեն Ժ դարում Ուխտանեսը գրում է այն ազգի պատմությունը, որն իրապես *ծաթ* էր կոչվում, ապա միանգամայն հանելուկային է թվում Մխիթարի (ով, իհարկե, քաջատեղյակ էր Ուխտանեսի *Պատմությանը*) երկում *ծաթերի* մասին նշված հավելումը:

⁵⁵ Ss'u Brosset, Mél. asiatiques, VI, p. 21-22.

⁵⁶ *զ Ծոնդէացիսն*-ի փոխարեն կարդա՝ *ծովդէացիսն*.

⁵⁷ Երոսանն համարում էր, որ ձմեռգրի տվյալ հատվածը ոչնչացրել են հայ լուսավորչականները, ևունական դավանանքի նկատմամբ ունեցած թշնամական վերաբերմունքի պատճառով, տն՝ս « Études sur l'historien arménien Oukhtanes », X-e s. (Mél. asiatiques, VI, p. 22):

[31] Հիշեցնենք, որ այդ հավելման նպատակն է եղել *ծաթերին* ներկայացնել որպես հայերից տարբեր ուրիշ մի ազգ: Դրա համար հավելման հեղինակից պահանջվում էր միայն հղել Ուխտանեսի աշխատությանը, որտեղ *ծաթերը*, որոնց նվիրված էր մի ամբողջ գիրք. ներկայացվում են որպես հայերին և վրացիներին համարժեք հատուկ մի ժողովուրդ, թեև այդպիսի ազգի կամ ցեղի մասին ոչ ոք չգիտեր⁵⁸: Այդ իսկ պատճառով ինձ թվում է, որ Ուխտանեսի երկում խոսքը ոչ թե *ծաթերի*, այլ *ծովդերի* մասին է⁵⁹: Ինչ վերաբերում է Ուխտանեսի գրվածքում *ծաթ* ընթերցմանը, որպես այս ժողովրդի անվանում, ապա մեր ունեցած տվյալներով այն կարելի է հասկանալ որպես նոր ուղղում՝ հիմնված ավելի ուշ ժամանակներում *ծաթերին ծովդերի* հետ նույնացման փորձի վրա: Հիշենք, որ այդ փորձն առաջին անգամ ի հայտ է գալիս ԺԲ դարում Մխիթար Այրիվանեցու աշխատության մեջ:

Ամեն դեպքում մեր *ծաթ* կամ *ծայթ* քաղկեդոնականներն աղվանական ցեղի և առհասարակ հյուսիս-արևելքի հետ առնչություն չու-

⁵⁸ Տայիվանսի ազգույն կոչված «Գանձամակ»-ում հիշատակված է նաև *Սայթունի* ռոմեր (Սոփերք Տայիվանսի, VI, էջ 36, Մայթիունիք), սակայն նմանատիպ ցուցանվելու ևս չենք տեսնում: Օրինակ. այդ նույն հուշարձանում №61, իսկ ըստ Լջմիսածնի մի ձևագրի իմ հրատարակած մեկ այլ ցուցակում, № 71-ի տակ հանդիպում ենք *Դաշտիարինք* (Մով. Տայի, (=Écrits arméniens - G.S.), VI, էջ 35) կամ *Դաշտիարունք* (վաղադանի առակների ժողովածու, III, էջ 58) ավելի ճիշտ կլիներ *Դաշտիարանք*, մինչդեռ *Դաշտիարան* իրականում միայն կոչում է, որ նշանակում է «Դաշտի տիրակալ» (տե՛ս Յոս. Երեմ. Օրդ.):

⁵⁹ Ըստ ավանդական տրամադրության՝ *ծովդերը* հայատունի եյուսիս-արևելքում ստորոգյալ է: Այս տարածաշրջանը համարատեսխանում է վրացի միսյոնիկների գործունեության տեղանքին, որի մասին հիշատակում է Մխիթարը: Ըստ հավանական է, որ այս ժողովրդի մասին էր գրում նաև Ուխտանեսը, ով քաջ ծանոթ էր հայ-վրացական եկեղեցական հարաբերություններին: Սակայն հավանական է նաև, որ *ծովդերն* ասում էին հարավում՝ Տիգրիսի վերին հոսանքի մոտ, Միջագետքի ենագոյն շրջանի Զաբդիլկենի սահմաններում (Karl Güterbock, Römisch-Armenien und die Römischen Satrapien im vierten bis sechsten Jahrhundert, Königsbergi. Pr., 1900, S. 6): Տիգրիսի կղզիներից մեկի՝ Բեթ-Զավդայ ասորական անվանումը, ըստ երևույթին, վերոնշյալ աշխարհագրական նքրի արտացոլումն է: Ըստ երևույթին, այս նույն բառն առկա է նաև Բեթ-Զավդայ նախնազգի տնվանման մեջ (G. Hoffman, Auszüge aus syrischen Akten Persischer Märtyrer, S. 23):

նեն, իսկ Միջագետքի ազգաբնակչության հետ, եթե այդպիսին ընդունենք *ծովդերին*, ապա ավելի հեշտ կլիներ նրանց նույնացնել աշխարհագրական տեղանքի ու թերևս նաև ստուգաբանական առումով: Փաստացի, սակայն, այդ նույնացումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե *ծովդերին* ընկալվեն որպես գտարյուն հայկական ցեղկամ հնուց հայացված մի ժողովուրդ: Հարցն այն է, որ մեզ հետաքրքրող *ժայթերը* միանշանակ հայեր են, որոնք հայտնի էին Ասորիքի հարևան Հարավային Հայաստանում և հենց Ասորիքում:

Ծայթերին մասամբ ճանաչում էին Հայաստանում դեռևս ԺԱ–ԺԲ դարերում: Հայ քաղկեդոնականների հակառակորդ Պողոս Տարոնացին, առարկելով քաղկեդոնական Թեոփիստեին, գրում է. [32] «...յատուրան Յոհաննիսի Հայոց կաթուղիկոսի յորժամ զժողովն արար ի Դուին և զհայք դարձոյց ի Քաղկեդոնէ, և հաստատեաց զհայս յառաջին յողղափառութիւն և նորոգեաց զՆիկիական կանոնսն: Եւ որք ի հոռոմոց աշխարհէն էին ի Հայոց յազգէս, ի նոյնն մնացին, հոռոմոց կարգօք՝ և կրօնիւք, և եղեն ընդունողք խմորոյ և ջրոյ: Արդ՝ այդպէս է ծայթն...⁶⁰ Դու՛ք, որ հայոց սիրտն էիք՝ գտաք ահա մեղկ հաւատ մը ու սիրեցիք զայն... Եւ ահա Ծայթերը դո՛ւք եք, դո՛ւք, որ հայալեզու էք թէև, բայց Հոռոմ կանուանէք ձեզ: Տե՛ս այդ Առօտը (Աջո՛տ) պատուական մարդ մըն է. ան կը սերի մեծ ու փառաւոր տոհմէ մը ու երեւելի իշխան մըն է ինք: Բայց՝ ա՛ն ալ, մեծ իշխանութեան մը տէր ըլլալով հանդերձ, ի վիճակի չէ՛ ուղիղ հաւատի բերելու այս խոզագաւառը»⁶¹:

⁶⁰ {Պողոս Տարոնացի - Թոսոյ նրանելայն Պօլոսի Տարօնացոյ Զաղթող Ախոյնան Վարդապետի. (Ննդէմ Թեոփիստ. եռում Փիլիսոփային, Է. Պոլիս, 1752, էջ 267: Մինչև այսօր մնջբերումը կուտարված է Պողոս Տարոնացու *Թղթից*, իսկ բազմակետից ենտո՝ Կարուպետ Տիր-Մկրտչյանի սլավոնականներին նվիրված աշխատությունից, տես K. Ter-Mkrtschian. Die Paulikianer, S. 74–75 {նման. Պատվիկանք Բիզանդական կայսրության մեջ և մերձատր ենթոմածոյին երևոյթնիր հոյտատանի մեջ, գեյմ. թարգմ. Ա. Աբելյանի, Երուսաղէմ, 1938, էջ 115–116 – Մ. Շ.}:

⁶¹ {Ն. Մաթն այս կատվածը թարգմանել է Պողոս Տարոնացու *Թղթի* և Է. Տիր-Մկրտչյանի աշխատության վերոնշյալ երեսներում լույս տեսնելիս – Մ. Շ.}:

Այս առարկությունը պայմանավորված էր քաղկեդոնական Թեոփիստեի խիստ հետաքրքրական այն հայտարարությամբ, ըստ որի *ծարթերը* զբաղեցրել են իրենց տեղը տասներկու ցեղերի շարքում և սերում են Սահակի, Մեսրոպի ու Ներսես Մեծի աշակերտներից: Պողոս Տարոնացին չի ընդունում, որ *ծարթերը* կարող էին լինել Սահակի, Մեսրոպի ու Ներսեսի աշակերտները, վկայակոչելով այն հանգամանքը, որ վերոնշյալ վարդապետներն արդեն մահացած էին Քաղկեդոնի ժողովի ժամանակ:⁶² Այդուհանդերձ, Թեոփիստեն կկարողանար ապացուցել, որ *ծարթ* քաղկեդոնականները եղել են Սահակի, Մեսրոպի ու Ներսեսի աշակերտները, եթե ունենար փաստեր այն մասին, որ նրանց քաղկեդոնականությունը ծնվել էր Հայ Եկեղեցու վերոնշյալ հայրերի ուսուցչական գործունեությամբ նախապատրաստված հողի վրա:

Ամեն դեպքում, ԺԱ-ԺԲ դարերում ապրած հայ հակաքաղկեդոնականի վկայությունը ևս հաստատում է, որ *ծարթերը* հայ քաղկեդոնականներ են եղել: Վերջիններս, սակայն, պատմությանը հայտնի են միայն Հարավային Հայաստանում, որտեղ, ինչպես տեսանք նաև Ալևում, ցայսօր⁶³ գոյություն ունեն: Նույնն են վկայում նաև Նիկոն Սելեռնցու տեղեկությունները:

Նշված հայ քաղկեդոնականներին առնչվող Նիկոնի վկայությունները մասամբ հրատարակված են, սակայն դրանք վերցված են Անտիոքի պատրիարք Մակարիոսի աշխատություններից, ով մեծապես օգտվել է Նիկոնի գրվածքներից:⁶⁴

⁶² Նույն տեղում:

⁶³ {«Ցայսօր»-ը վերաբերում է Ն. Մաթի ժամանակին, որովհետև Հայոց ցեղասպանությունից հետո Տայքի հայ բնակչության մասին խոսելը ժամանակավրեպ է – Մ. Ե.}:

⁶⁴ Աստատածատուր Նուսր. «Ժամանակագրական պատմութիւն Երուսաղէմի», Երուսաղէմ, 1890, 1, էջ 97–98:

Արևելյան քրիստոնեության վերաբերյալ արժեքավոր տեղեկություններով հարուստ Նիկոնի *Տակոսիկոնի* հունարեն բնագիրը, ցավոք, առ այսօր հրատարակված չէ, և ստիպված ենք օգտվել սլավոներեն թարգմանությունից: *Պանդեկոնների ու Տակոսիկոնի* սլավոներեն տեքստերը [33] հրատարակվել են 1795 թ. Պոչևանյում: Ես օգտվել եմ Կայսերական հանրային գրադարանի 1397 թ. ձեռագրից (П = Погодин 33)⁶⁵:

Նիկոն Սևեոնցու երկի 35-րդ գլխում երեք փաստաթուղթ կա *ծաթերի*⁶⁶՝ հայ քաղկեդոնականների մասին. 1) Աստիոքի պատրիարքի ուղերձի (բևեոս) կրկնօրինակը (ուուուս)՝ ուղղված Երուսաղեմի պատրիարք Եվթիմիոսին, 2) նույն պատրիարքին ուղղված ուղերձի պատճենը՝ ուղարկված Սբ. Սիմեոն Հրաշագործի վանքից, 3) Նիկոնի թուղթը հայր Գերասիմին՝ ևս ուղարկված Երուսաղեմ: Նիկոնը մեկ առ մեկ թվարկում է այս փաստաթղթերն իբերներին նվիրված գլխի (35-րդ) նախաբանում:

Աստիոքի պատրիարքի ուղերձում կարդում ենք (П, сур. 544¹–545²).

«Ոմանք ամեն կերպ (бжеко) հարձակվում են նրանց (*ծաթերի*, հայճրի) վրա, բարին աստղ սատանայի դրդմամբ (оу добоуеиасиуиго еба), պախարակում են (окаягыжыъ П, окаягыоу Т) որպես ոչ ուղղափառների և վիրավորում են նրանց ամեն ձևով: Մինչդեռ նրանք ընդունված են եղել (иж ҃со т.кокии оуиуи ебж) մեր նախորդ պատրիարքների կողմից, և նրանցից ոմանք իբրև եղբայրներ անդամակցել են

⁶⁵ «Т» տառով ևս նշում են որոշ տարրնթերցումներ, վերցված կամ Թ. Ա. Տուստոյի հավաքածուի մի ձևագրից, այժմ՝ Կայսերական հանրային գրադարան (Է, II, II. 41): {Տարկ է նշվ, որ Ն. Մատի մեջբերած Նիկոն Սևեոնցու գրվածքի լեզուն կարծես թե եին պավոներենի ու եին ռուսերենի խառնուրդ է, որը թերևս սլավոնապարզված է Ն. Մատի կողմից օգտագործված ոչ շատ հայտնի մի ձևագրով: Այն պարունակում է Նիկոնի աշխատության մեկ այլ տարբերակ, որը թերևս խմբագրվել է ռուս եղիմակի կամ գրչի կողմից. ինչը, թվում է, որ Մատին էլ հաճախ տարակուսանք է սրտոնստում որոշ հատվածների ստույգ իմաստը հասկանալու համար, ինչպես կոտեսներ ստորև մեջբերված բառակապակցի ծավալուն և առանց թարգմանության ներկայացված հատվածում – Մ. Ծ.}:

(ԿՄԻՏԵՆԻ) Սբ. Սիմեոնի պատվական մենաստանին, որտեղ նրանք ծառայում և հաղորդվում են ամենասուրբ խորհուրդներին ուղղափառների հետ միասին: Եվ հնագույն ժամանակներից մինչ օրս նրանց դավանանքի առնչությամբ չի առաջացել և ոչ մի կասկած (и ниже от древнихъ лѣтъ (545) даже донынѣ всъимъ небые о семъ рече):

Սակայն դա բավարար չէր հայ քաղկեդոնականների դեմ զրպարտիչ մեղադրանքները դադարեցնելու համար: Պետրոսը՝ «Հրաշալեռան՝ Սբ. Սիմեոն Հրաշագործի պատվական մենաստանի վերջին մենակյացը, երեցը, առաջնորդը և վարդապետը», ստիպված էր *ծաթերի* վերաբերյալ նույնը վկայել Երուսաղեմի պատրիարք Եվթիմիոսի առջև (гл. 35, П, стр. 546⁶⁶):

«Ոմանք բարին ատող մեր թշնամու պատրանքների պատճառով հարձակվում են նրանց վրա, պախարակում (обязывая П. обличивша Т) որպես ոչ ուղղափառների և ամեն կերպ վիրավորում են (осплевывая), իսկ նրանք, սրբազան հա՛յր, ընդունված են եղել (пріимъши ехъ) նախորդ սուրբ այրերի և սրբազան պատրիարքների կողմից: Եվ նրանցից ոմանք [34] ներառվել են (включиши ехъ) մեր վանքի եղբայրների շարքերում, և մեր սուրբ այրերը կարգադրել են, որ նրանք, իբրև ուղղափառներ, սպասավորեն և ամեն ինչում հաղորդակցվեն մեզ հետ և ներգրավվեն մեր մեջ:⁶⁷ Եվ եթե նրանք զգուշորեն փորձված չլինեին (опитано быша), և չհաստատվեր, որ ուղղափառ հավատքի

⁶⁶ Այն վերնագրված է հետևյալ կերպ. Когобидишасомъ и сягомъ ншшмъ елдишъ, богосотреномъ патриархъ ерѣականскомъ. пришедиши въ мѣстохѣ архіереѣ. и причѣта ерѣзничьими. члди и рши твон (Այն աստվածը կարելի է թուրգմանել մոտավորապես հետևյալ կերպ. «Առ Սատվածակերպ և Սուրբ Տեր մեր՝ տառիարքին Երուսաղեմի Անտիոքից եկած առաջնորդներից. ... ձեր նրկյաններից ու ծառաներից» – Մ. Ը.):

⁶⁷ и ерѣжиги и ерѣничьити ерѣ нши въ ерѣмъ отъ ерѣтѣхъ ерѣрѣа о перѣ. и ерѣдъ ерѣтѣа побелѣни быша яко прѣбо(5462)ілабни (II, стр. 546¹-546²).

ճշմարիտ դավանորդներ են (որպես մաքրույթ-բյուրե), ապա նրանց չէին ընդունի»:

Հայ քաղկեդոնականների դեմ բանասարկություններն այնքան զորավոր էին, որ Նիկոնը իրեն բարոյապես պարտավորված համարեց հատուկ, ավելի հիմնավոր ուղերձով դիմել Երուսաղեմի արքահայր Գերասիմին. «иже да прочьтетъж⁶⁸ посьбъ съ двема ппѣакемѣ⁶⁹ патриар-хобемѣ же и обитѣмъ екаѣтаго чюдотворѣца емеонѣ» (заглавие 36-й главы, II, стр. 546²):

«Իմ սիրելի հոգևոր զավակ,- գրում է Նիկոնը արքահայր Գերասիմին (րև. 36, II, стр. 547¹ и сл.), - ես լսել եմ ինչ-որ մեկից, որ ոմանք, անգիտության մեջ գտնվելով և առաջնորդվելով սատանայի դրդմամբ, խոսքերով վիրավորում են *ծարձեր* անվանվող (глаголемыи чл҃тны) մեր եղբայրներին»:

Ապա Նիկոնը խոսում է այն մասին, որ հաևուն սիրո պետք է արմատախիլ անել սատանայական խորամանկությունն ու բանասարկությունը: Նա ևս մեկ անգամ հաստատում է այդ հայերի իրապես ուղղադավան լինելը:

«Այս մեր եղբայրները, որ *ծարձ* են անվանվում, որտեղ էլ որ հայտնվում կամ բնակվում են (и в коемѣ мого живучѣ мьстѣ), ամենուրեք փորձության են ենթարկվում՝ Քրիստոսի շնորհով անբիծ մնալով իրենց հավատի մեջ (объжждѣ испытавши оубѣтѣхомѣ ихъ благоумѣемѣ христовомѣ безъ порока къ такобыхъ, бѣ яже о бѣрѣ такожде и о бѣрѣхъ и о ехминцѣхъ, стр. 549², 13–23)⁷⁰:

Նիկոնի հակիրճ հաղորդումից, սակայն, պարզ է դառնում, թե հատկապես ինչն էր դավանակից հայերի նկատմամբ հույների վրդովմունքի պատճառը: Հենց նույն հանգամանքով էր պայմանա-

⁶⁸ прочтѣны еудетѣ Г.

⁶⁹ поиминцѣмѣ Г.

⁷⁰ SIn նաև էջ 552¹, 6–13: о бѣже много испытавѣ еже поимѣ за брѣтѣя нашѣ ел чл҃тны: не оубѣтѣмѣ шгѣжеже яко ошч҃голи отъ древишѣ яви яко великѣишѣ ошч҃еца нашѣхъ Феодосѣа и Главы:

վորված որոշ հույների անբարյացակամ վերաբերմունքը նաև ուղղափառ վրացիների հակդեպ. նրանք պահպանում էին իրենց մայրենի լեզուն:

«Կարդայով մեր մեծն հայր Սաբբասի (գրածները),- գրում է Նիկոնը (550¹, 13 Եղ.),- կտեսնեք, որ նրանք (հայերը) առնչվել են մեծագույնին: Եվ [35] աստվածավերտ եկեղեցում սրբի կողմից հրահանգված էր (въ кого изъданы [в саврокозданни Т] цркви пожеланою отъ свѣтго) իրենց ծիսակարգը կատարել հայերենով (армені)скою речію пѣти чтебъ (кни), իսկ հույներին՝ առանձին երգել (гречески же оубо пѣти): Ինչպես և այստեղ (մեզ մոտ, հայերը) մեր եղբայրները երգում են հայերենով, իսկ հույները՝ կրկին առանձին, տարբեր դասերում, եթե չունեն երկու եկեղեցի»⁷¹ (въ разлучныхъ же мѣстахъ за еже неимѣти двѣ цркви): Հունարենով կատարում են միայն «Երեքսրբյան» փառաբանությւնը՝ «Սուրբ Աստված»-ը, ինչպես կտակել էր մեր սուրբ հայր Սաբբասը՝ «еже разлучае насъ ради» Պետրոս Թափիչի (ԳևաՖետու, Ֆուլլոն – Մ. Շ.) կատարած կասկածելի հավելման պատճառով (рди мѣстѣхъ и црквахъ)⁷²: Ընթերցելով նաև մեր մեծ հայր Թեոդոսի *Վարքը*՝ կիմանաք, որ

⁷¹ {Իմա՝ երեք ծիսակատարությունը կատարվում է միևնույն նկնիցում – Մ. Շ.}:

⁷² Սուրբ Սաբբասի *Վարք*-ի համապատասխան հատվածը (գլ. XXXII, J. B. Cotelerius Ecclesiae Graecae monumenta, P., 1686, III, p. 264) մեջբերում է նաև Ստ. Իորջիան (Stephanus Borgia, De cruce Vaticana ex dono Iustini Augusti in parasceve maioris hebdomadae publicae venerationi exhiberi solita commentarius, cui accedit ritus salutationis crucis in ecclesia Antiochena Syrorum servatus, R., 1779, LV). «Cyrillus Scythopolitanus in vita S. Sabae testatur, Armenis, qui in eiusdem S. Sabae Laura in Palaestina cum Graecis monachis versabantur, permissum fuisse, ut psalmodium et liturgiam Armenico Sermone peragerent, in Trishagium Graeca lingua canerent, ne Fullonis additamentum usurparent»: Դատկելով *Վարք*-ի իրական տեքստից՝ հայերի կողմից *Երեքսրբյան* փառաբանության *Սուրբ Աստված*-ի կատարումը հունարենով աստվածային սուրբ կրոնավորի նորբնութայնություն էր: Այդ նորանմոծությունն իրականացվել էր այն բունից հետո, երբ «նրանցից ոմանք (հայերը) սկսեցին» կամ, ինչպես զգված է սլավոնական թարգմանության մեջ «տունձգություններ ինչ տնում *Երեքսրբյան*-ը կատարելու դեմ» ըստ Պետրոս ԳևաՖետուի (*Մր. Սաբբաս Օձյալի Վարքը* կազմված Մր. Կյուրղե Մկրտապոլսեցու կողմից, հին տասերն թարգմանությամբ (հունարեն բնագրով), Երաստարակել է Ի. Պոմյալովսկի, Ս. Պետ., 1890, էջ 152 {=Житие св. Савы Освященнаго, составленное св. Кириллом Скифопольским в древнерусском переводе, Помяловский И. – Մ. Շ.}):

նրանք (հայերը) համատեղ ապրում էին իր հետ. իրենց ծիսակարգը եկեղեցում կատարում էին մասնավորապես հայերենով: Եվ հարկ է, որ մենք էլ (ДОБРАТЫ И, ДОБРАЕТО Т) նմանվենք այդ երկու մեծ լուսատուներին: Իսկ այն, որ (А ЖЕ) մեր մեծ հայրերի՝ Սաբբասի ու Թեոդոսիոսի կողմից հրահանգված էր մտնել հունական եկեղեցի և հաղորդակցվել աստվածային խորհուրդներին, ապա դա, ըստ երևույթին (ЖЕ КИМТОСА), կատարվել է (Ե՛) հոգևորականության նոսրացման պատճառով (БЛАЖИ ОУКЪБЛАЖИ), քանի որ սուրբ հայրերը խիստ մտահոգված էին (СЛАВНО МОГО ИМЪХ) հոգևորականության հարցերով, որովհետև երբեմն բազմաթիվ եղբայրություններում (БЖ МОЖЕ СЕБОЖ) ունենում էին միայն մեկ հոգևորական (ОПРЕДЕЛЪХЪ ЕДИНОГО БЛАЖЕННИКА ИМЪТИ) կամ էլ առհասարակ ոչ ոք չէր գալիս, քանի որ գիտեին հոգևորականության բեռի ու խնդիրների (И БЛАЖ) մասին: Այս են վկայում ինչպես Սաբբասի, այնպես էլ՝ ճգնակեցական կենցաղավարության հիմնադիր Ռաբբոմիոսի *Վարքերը*:

Ի պաշտպանություն հայ քաղկեդոնականների՝ Նիկոնը մատնանշում է նրանց օգտակար գործունեությունը որպես հակաճառողների (552², 15-553¹, 11):

«Հենց որ մեր այս եղբայրակիցների մեջ հայտնվում է [36] աստվածային բանականությամբ օժտված մեկը, մեր հայրերն ու պատրիարքներն իսկույն, Աստծո օգնությամբ, նրան պայքարի են դուրս բերում թշնամու դեմ (ПЕЧЪ ИМАТЬ С БОГОМЪ НА ОПАЧЕНОЕ СПРОТЪИМОУХЪ), երբ ժողովում հայ հերետիկոսների դեմ ինչ-որ խնդիրներ են առաջանում, որովհետև քաջատեղյակ են նրանց լեզվին և գրվածքներին: Դեռ վերջերս (ЖЕ ЖЕ И ЖЕ) երանելի պատրիարքների օրոք այնպես պատահեց (БЛА), որ նրանցից ոմանք՝ բավականին փոքրաթիվ մի խումբ, ժողովի ժամանակ հերետիկոսներին (հայերին) չթույլատրեցին ան-

գամ (отпика) բերանը բացել և որևէ խոսք արտաբերել ուղղադավան-
ների դեմ, թեև հերետիկոս հայերի թիվը զգալիորեն մեծ էր»:

Նիկոն Սկեռնցին տեղեկություններ է հաղորդում նաև *ծաթերի*
ծագման մասին: Դրանց մի մասը վերաբերում է հնուց հայերի մեջ
ընդհանրապես ուղղադավանության գոյությանը: Նա տալիս է նաև
այդ երևույթի ուղղակիորեն պատմական բացատրությունը՝ մասամբ
ըստ հայտնի կաղապարի, կատարելով սակայն նոր մանրամասնում,
այն է՝ հայր Թեոդոսիոսի ու հայր Սաբբասի դերակատարությունը
հայերի պարագայում ցորենը որոմեներից մաքրելու գործում (стр.
552¹,¹³-552²,¹⁴):

’егда и прѣже стѣи великыи иже въ халкидои: съворѣ еретикы
армены ѡажчѣ и проклатѣ началствоу жижѣ илѣ, потомже пакы
тѣи ѡпомѣ свѣтило прѣдреченыи мѣ деодосѣу же и сѣбѣ: поден-
завши мѣ, и патрѣам ѡ чистыѣ пиеница разлжчнбши мѣ, и право-
славныи мѣ смѣ братѣамъ нашии мѣ и подоби мѣ и хѣ ѡстакши мѣ,
и съединени мѣ къ събориѣ (552²) и цркви съ православныи мѣ, и не
црктеса нигде же ѡко ѡ теи съгрѣшнша еѣ како бѣ любо реши.
или поиѣ еѣ распрѣ, или къ съимнца хѣ. ѡко же иѣци ѡ наипѣхъ
многажи пострадаша. иже изначала ѡ вжтѣкннхѣ ѡцѣ добрѣи-
ченше, послаѣ же къ распрѣ: и съимница оуцратии мѣ:

Առավել արժեքավոր է ոչ վաղ անցյալում Սև լեռան վրա
բնակվող հայ քաղկեդոնականների վերաբերյալ (стр. 549,²³-550¹,¹³)
Նիկոնի հաղորդած տեղեկությունը:

«Նրանց մետրոպոլիտը (*նստում է) Միջագետք երկրի իրենց
թեմում (иго митрополитѣ рѣбѣлѣ и хѣ и страны междорѣчнѣ), որտեղ նրանք
ապրում են վաղ ժամանակներից (отѣ прѣвѣи хѣ мѣ): Սակայն
հեթանոս ազգերի ներխուժման պատճառով նրանցից ոմանք
սփովեցին (рѣточнѣи бѣшиѣ) տարբեր երկրներում: Նրանց մետրոպո-
լիտը ձեռնադրվում է (и жѣ обѣче яко же рѣхѣ митрополитѣ и хѣ) Աստիոքի

պատրիարքի կողմից, քանի որ այդ աթոռն⁷³ ամբողջ Արևելքինն է: Նրանց հոգևորականությունը և ամբողջ դրվածքը (« *и все церковное дело*») օրինական են ու ճիշտ և Քրիստոսի շնորհով վեր որևէ ծաղրից (անպատվությունից)»:

[37] *Ծայթեր* կամ *ծաղեր*⁷⁴, ինա՛ ծայտեր, ծայթեր կամ ծայղեր անվանվող հայ քաղկեդոնականների միջագետքյան բնակատեղիի առկայությունը մեր ուշադրությունը բևեռում է խմբերից երրորդի վրա. հայ քաղկեդոնականների այդ խմբերը կազմավորվել էին իրենց հայրենիքում հենարանը կորցնելու արդյունքում: Սրանք ասորի քաղկեդոնականներին միացած հայ քաղկեդոնականներն էին: Միջագետքի քաղկեդոնականներից են, ըստ երևույթին, նաև Հոգիվի շիրիմների արձանագրություններում հիշատակված Մարկեղոս Միջագետքցին ու Եղիա Միջագետքցին (Κροισα, ս. շ., սրբ. 75. Παπαδογ:ιο-Κεραμεως, ս. շ., սրբ. 219, 93 և 220): Միջագետքի հետևողա՞ծ հայ քաղկեդոնականության կապի մասին վկայում է Խառանի եպիսկոպոս Թեոդոր Աբուքուրայի առաքելական հայտնի ուղևորությունը Հայաստան:

Հետաքրքրական է ևս մեկ՝ դեռևս չօգտագործված, տեղեկություն Հայաստանի քաղկեդոնականների վերաբերյալ: Հովհան Եփեսացու *Պատմության* ասորական տեքստում միաբնակներ Սիմեոն և Սերգիյը ճգնավորների մասին գլխում պատմվում է (Land, Anecdota Syriaca, II, p. 57 = լատ. թարգմ.՝ Van Duvin et Land, Ioannis etc., p. 38), որ Սերգիյին քաղկեդոնականներն ստիպողաբար «կապանքներ հագցրին» և «ուղարկեցին նրան միայնակացների մի վանք Հայաստա-

⁷³ {Սյսինբն՝ առարելական աթոռներից մեկն է – Մ. Շ.}:

⁷⁴ {*Ալլոսեուալչ ասուալչ բարուալչ բարոսեուալչ պոու* {սյսինբն՝ «մեր հոգևոր եղբայրների մասին, որոնք *ծայթ* են անվանվում» – Մ. Շ.} (35-րդ գլխի վերնագիրը է, II, սրբ. 544¹), *ալուալչ բարուալչ ասուպ բարոսեուալչ պոու* {«մեզանում աշխա *ծայթ* անվանվող մեր նյուպրովիցների վարարկրյալ» – Մ. Շ.} (36-րդ գլուխ, II, սրբ. 544¹):

սում, որը կոչվում է Ատ(թ)րիզ⁷⁵: Քրիստոնյայի համար ավելի լավ կլիներ գերի պահվել բանտարկյալների տան հորում, բայց ոչ այնտեղ: Ում ուղարկում էին այնտեղ, նա ամբողջովին հուսահատության էր մատնվում: Իրենց մոտ արտաքսվածի հետ վարվում էին անվասիման չար դաժանությամբ, քանի որ նրանք (հայերը) շատ նախանձախնդիր էին հերետիկոսական (քաղկեդոնականության) հարցերում և արդարացի էին համարում հավատացյալներին տանջելը, ու որպես դահիճ հանդես էին գալիս ոչ թե մեկը, երկուսը, կամ հարյուրը, այլ նրանցից յուրաքանչյուրը հերթով քարշ էր տալիս և իր կողմից տանջանքների ենթարկում, իսկ նրանց (դահիճների) թիվը մոտ երեք հարյուր էր»:

.. Թե ինչու էին հայ քաղկեդոնականները, որոնց մասին գրում է Նիկոնը, անվանվում *ծայթեր* կամ *ծայթեր*, հայտնի չէ: Անվան էթնիկական ծագման մասին այն ենթադրությունը, որը կապված է Միջագետքի *ծովդերի* հետ, կարող է ունենալ, ինչպես վերը նշվեց, ինչ-որ դրական արդյունքներ: Առավել քիչ խոստումնալից է բառի հայերեն ստուգաբանությունը, որը պաշտպանում է Կարապետ Տեր-Մկրտչյանը (նշվ. աշխ., էջ 77), ըստ որի հայերեն *ծայթ*-ը նշանակում է «անկատար», «բծավոր», որը ոչ քաղկեդոնական հայերի կողմից ծաղրաբար տրվել է հայ քաղկեդոնականներին: Նախ, հայերենում նման բառի գոյությունը դեռևս ապացուցված չէ. Մխիթարյանները «Բառգիրք»-ում այն [38] վկայակոչում են նշված իմաստով՝ հիմնվելով հենց այն հղումների վրա, որոնցում այդ բառը կիրառված է մեզ հետաքրքրող հայ քաղկեդոնականների առնչությամբ⁷⁶: Երկրորդ՝

⁷⁵ {Միզուցն սա Ատ(թ)րշն (իմմո. նաև՝ Ատ(թ)րշա, Ատշ(թ)ուս, Ատ(թ)շայն, Ատ(թ)շն, Ատ(թ)րշն}, գյուղն է Արևմտյան Հայաստանում, Դիարբեքի Նուհանգի Սիլվանի գավառակում, տե՛ս Թ՝. Հախոբյան, Ստ. Մևիթ-Բախշյան, Տ. Լարսենդյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևան, 1986, էջ 373 – Մ. Ե.}:

⁷⁶ Մխիթարյանները շփոթմամբ ավելացրել են նո՛ս *ծայցանացիք* տեքստին: Վերջինս ստուգաբանումս պետք է որ նշանակի *սիրոնացի*: Ասորիներից թարգմանված իսլամական

դժվար է պատկերացնել, որ հայ քաղկեդոնականներն ընդունել են հայ հակաքաղկեդոնականների կողմից իրենց ծաղրաբար վերագրված անվանումն այն դեպքում, երբ Սև Լեռան վրա հենց իրենք իրենց էին այդպես անվանում, քանի որ նրանց այդպես էին կոչում նաև բարեկամ հույները:

Վերջապես պետք է հաշվի առնել, որ Նիկոն Սկետնցու *Տակտիկոն* ում *ժայթերը* հանդես են գալիս որպես ճգնավոր անապատականներ: Եվթիմեոս Երուսաղեմացուն ուղղված Անտիոքի պատրիարքի՝ *ժայթերի* վերաբերյալ գրված ընդհանրական թղթում հայ քաղկեդոնականների մասին խոսվում է որպես Սև Լեռան մենակյացների.⁷⁷⁻⁷⁸⁻⁷⁹

ՏԱՄԱՄԱՅՒՆ ԵՑ ԱՅՈՒ ԱԷՏՕՐԱՆ ԺՐՄԵՆՈՒՄԻ ԻՒՔՈՒՄԱՒ
 ԹԵՔՄԵ ԱՄԵԼՈՒՒՔԱՆ ԺՐՄԵՆԵՍՔԱՄ ՏՕՄՄՅԵՆ, ԵՍՅ՝ ՏՒՄՅՕՐՄԻՔԵ ՋԻՈՒՄԻ ԱՒ
 ԵԶՅ՝ ԱՄԼՒՔՏԵՅՕՐՄԻ ԵՍՅ՝ ՍՐՈՒՅՕՐՈՒՄԻՔԵ

(стр. 545').

Ծայրերին որպես «ճգնավորներ» է բնութագրում նաև Պետրոսը՝ Աստվածային Հրաշալեռան Ար. Սիմեոն վանքի առաջնորդը՝ Երուսաղեմի նույն պատրիարքին ուղղված թղթում (гл. 35, П, стр. 546'):

ՏԱՄԱՄԱՆԷ ԻՒՔՈՒՔ
 ՍՐՈՒՄԵ ԵՒ ՈՍԱՄԱ ՏՕՄՄՅԵՆ ՕՒ ԵՍՅ՝ ՏԱՄԱՄԱՅՒՆ ԱՄԵԼՈՒՒՔԱՆ ԱՏՕՄՄՅԵՆ ԵՍՅ՝
 ԻՒՔՒՄԵ ՋԻՈՒՄԻՔԵ ՏՒՄՅՕՐՄԻՔԱՄ ԱՒ ԵԶՅ՝ ԱՄԼՒՔՏԵՅՕՐՄԻ ՍՐՈՒՅՕՐՈՒՄԻՔԱՄ

80

Ենչզույն բնագրերում Սիդոնն անվանվում է *Սայդան*։ Սայդոնը (سيدا) ասորական բառ է։ Սակայն հայկական *ժայթանացի* բառը կիրառվում է «հերեոսիկոս» իմաստով։ Գուցն ուշադիր մենք գործ ունենք *ղայթանացի*-ի փոխարեն սխալմամբ գործածված *ժայթանացի* բառի հետ, որը նշանակում է *ղայցյանիտներ* (ղայց) կամ բարդածաններ։ Ամեն դեպքում մեր *ժայթերի հետ* այդ ամենը որևէ առնչություն չունի։

⁷⁷ ԱՏՕՐԱՆ Է.

⁷⁸ ՕՒՄԵԼՈՒՒՔԱՄ Է.

⁷⁹ ԵԶՅ՝ ԱՄԼՒՔՏԵՅՕՐՄԻ Է.

⁸⁰ ՕՒՄՅ՝ ԱՄԼՒՔՈՒՔ ԱՄԵԼՈՒՒՔԱՆ ԱՏՕՄՄՅԵՆ Է.

Հավանական է նաև, որ *ծայթ* կամ *ծայթթ* բառով անվանվում էին մենակյաց հայ քաղկեդոնականները⁸¹:

[39] Բոլոր դեպքերում, Միջագետքում ասորի քաղկեդոնականների հետ շփվող հայերը, որպես քաղկեդոնականներ, կարող էին անվանվել միայն *մելքիտներ*: «Մելքիտներ» անվանումը, եթե ոչ ավելի վաղ, ապա գոնե Ժ դարում հայտնի էր նաև Հյուսիսում՝ Ասորիքի սահմաններից դուրս: Ժ դարի վրաց կաթողիկոս Արսենիոսը հայտնում է (Жордания Т., Хрон., I, стр. 315—316), որ պարսից արքա Պերոզը հայերին առաջարկում էր կա՛մ «ասորիների դավանանքներից ընտրել ցանկացած մեկը, բացի մելքիտների դավանանքից (ծջւթօսն), որոնք ըստ դավանանքի հույներ են, կա՛մ էլ՝ լքել հայրեկիքը»:

Բուն Հայաստանում հայ քաղկեդոնականները, ըստ երևույթին, ի սկզբանե ունեցել են ստույգ տարածքային տեղակայություն: Հասկապես այն շրջանները, որոնցում ուժեղ էր բյուզանդական քաղաքական ու մշակութային ազդեցությունը կա՛մ մեծամասամբ, կա՛մ էլ ամբողջովին կարող էին բնակեցված լինել քաղկեդոնականներով: Այս ազդեցության կրողները, սակայն, կարող էին լինել ոչ միայն հույները, այլ նաև ասորի քաղկեդոնականները և ամբողջապես քաղկեդոնականացված վրացիները:

⁸¹ Այլ իսկ սրտածառով է, որ մտածեցի այս եսլիտկան տնրմինը բուցատրել ասորիքնի ստուգաբանությամբ կաուվլած «մննուկաց լինել» (ՁԵ) բայի հետ: Պրոֆ. Վ. Դ. Միխրնովն իր գնկոյցի ժամանակ հուշեց, որ այս տնրմինը հնարավոր է եւրմմատնել արաբիքնն գահիդ (𐩣𐩢𐩨)՝ «ճգնավոր» բառի ետ: Ել ջանի որ հայնքննում «գ»-ն եւճճայն փոխարինվում է «ց»-ով, ինչպես օրինակ՝ *մարգարան-մարցղոսն*, իսկ «ն»-ն բանավոր խոսքում անհետանում է, ուստի հնչյունաբանական տեսանկյունից դրանում *ծայթթ* բառն ընդունելի միաճգումայն եւարտիոր է: Ամեն դեպքում ստուգաբանություններից որևէ մեկն ընդունելուց առաջ ցանկալի է վերջնականապես ստեմանել բառի իրական իմաստը: Եթև պարզվի, որ դրա իրական իմաստն է «քաղկեդոնական» կամ «կույսերական» (բյուզանդական) քրիստոնյա ըստ դավանանքի, ապա այս կզրի եւտար անհրաժեշտ կլինի լինարել մեկ այլ բուցատրություն:

Հայ քաղկեդոնականները հեռացան իրենց արյունակից եղբայրներից նշված երեք ուղղություններով, երբ նրանց գործունեությունը հայրենիքում պարտության մատնվեց, սակայն, ըստ երևույթին, ոչ բոլորը հեռացան: Հայ քաղկեդոնականները դեռ երկար գոյատևեցին բուն Հայաստանում, անգամ կենտրոնական մասերում, և նույնիսկ հետագայում՝ Հայաստանում ազգային եկեղեցու վերջնական ձևավորվելուց հետո նրանք իսպառ չանհետացան:

Երբ քաղկեդոնականություն դավանող երկրները, լինեին դրանք հույները կամ վրացիները, տիրում էին Հայաստանին, հասկանալի է, որ հայ քաղկեդոնականների նշանակությունը մեծանում էր: Ժամանակի ընթացքում, իհարկե, հարկ կլինի պարզել, թե ավելի ուշ շրջանի՝ ԺԲ-ԺԳ դարերի հայ քաղկեդոնականները որքանով են պահպանել տեղական հայ քաղկեդոնականությանը բնորոշ գծերը, արդյոք նրանք հանդիսացել են հնագույն հայ քաղկեդոնականների ավանդույթների շարունակողները, թե ոչ, որքանով են նրանց շարքերը համալրվել նոր անդամներով, ովքեր այս կամ այն պատճառով հեռացել էին Հայ ազգային եկեղեցուց: Անտարակույս, մեզ քիչ հետաքրքրող այդպիսի անջատողական երևույթները, մեծ նշանակություն են ունեցել: Ջաքարիա ամիրսպասալարի և Իվանե աթաբեկի օրոք, վրացիների իշխանության ժամանակաշրջանում, Հայ ազգային եկեղեցու ժողովներում նգովքի են արժանացել եկեղեցական գործերում «վրացիների ու հույների բոլոր համախոհները» (Ստ. Օրբելյան, II, հրատ. Կ. Շահնազարեանց, էջ 203): Խոսքը հավանաբար վերաբերում է ոչ թե հայ քաղկեդոնական դավանակիցներին, որոնք այդ ժամանակ նույնիսկ հայ չէին համարվում, այլ ոմանց՝ ազգային եկեղեցու հայ անդամներից: Առայժմ բավարար կլինի և այն, որ շնդունվի հայ քաղկեդոնականների գոյությունն [40] այդ ժամանակաշրջանում, ընդ որում, բավական մեծ թվով: Վրացերենով պահպանվել է մի փաս-

տաթուղթ, որն առաջին անգամ հրատարակվել է Բակրաձեի կողմից (Археологическое путешествие по Гурии и Абхазии, СПб., 1878, стр. 81): Սա ակնհայտորեն քաղկեդոնական եպիսկոպոսների կամ հովիվների մի ցուցակ է, որոնք ենթակա էին վրաց կաթողիկոսին: Դրանում հիշատակվում են նաև բուն Հայաստանում տեղակայված թեմեր, ինչպես օրինակ՝ Անիի, Կարսի, Ալաշկերտի, որոնցից յուրաքանչյուրի սահմանները նշված են: Այս շրջաններում, թեև հազվադեպ, առ այսօր էլ հանդիպում են վրացական եկեղեցիների, ավելի ստույգ՝ վանքերի ավերակներ: Այդ իսկ պատճառով չի կարելի բավարարվել այն ենթադրությամբ, թե իբր այդ քաղկեդոնական թեմերը կարող էին գոյություն ունենալ բացառապես վրացիների համար: Այդ շրջաններում վրաց բնակչության առկայությունը քիչ հավանական է, համենայն դեպս, եթե անգամ եղել է, ապա ոչ մեծ քանակով: Պետք է ընդունել, թերևս, որ Հայաստանի քաղկեդոնական թեմերը բաղկացած էին նախ և առաջ հայ քաղկեդոնականներից: Հայ քաղկեդոնականները, անկասկած, եկեղեցիներ են ունեցել նաև Անի քաղաքում: Այսպես, Ախուրյան գետի ափին կառուցված Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որի որմի վրա առկա են վրացերեն ու հունարեն արձանագրություններ, կառուցվել է հայ քաղկեդոնականի կողմից. այս մասին վկայում է եկեղեցին կառուցող Տիգրան Հոնենցի՝ 1215 թ. հարավային պատի վրա գտնվող հայերեն արձանագրությունը, որում հիշատակված տաճարը զարդարող սրբապատկերներն անվանված են «խատի» («խատերով»)՝⁸² ուղղափառ վրացական եզրով: Տիգրան Հոնենցը, այդ ժամանակ արդեն չէր կարող լինել ազգային եկեղեցու անդամ: Ժ դարում Վահան կաթողիկոսը, ով փորձեց հայ եկեղեցի

⁸² «խատ» բառը սրբապատկեր իմաստով կիրառում է նաև հայ պատմագիր Ստեփանոս Օրբելյանը (Խրատ. Կ. Շահնագարևանց, II, էջ 126, շ), յուրյց այստեղ խոսքը վերաբերում է վրաց արքա Դավթին, որը դնում է հրաշափառ սրբապատկեր («խատ»), կենտարս խաչ և Ավետարան՝ առաջարկելով վրաց իշխաններին ներդնել [*դրանց վրա]:

ներմուծել «վրացական», այսինքն՝ քաղկեդոնական սրբապատկերներ, զրկվեց կաթողիկոսական աթոռից և ստիպված եղավ փախչել Վասպուրական:

Հայ քաղկեդոնականները Հայաստանում նույնպես սկսեցին հորջորջվել այն օտար ազգի անունով, որի եկեղեցուն հարում էին: Երբ Իվանե Երկայնաբազունը ընդունեց քաղկեդոնականությունը, նրա մասին ասում էին, որ նա վրացի դարձավ: Հաճախ քաղկեդոնական մի խմբի անվանումը յուրացվում էր մեկ այլ խմբի կողմից: Այս առումով ամենաբնորոշ օրինակը *հոռոմ* կամ *հույն* բառի կիրառումն է Անիի տաճարի կառուցման թվականի մեջ: Տաճարի կառուցման մասին հայերեն արձանագրությունն [41] սկսվում է հետևյալ թվագրումով. «450 թ. ըստ Հայոց թվականի և 219 թ.⁸³ ըստ հունականի (հոռոմոց)»: Մինչ այժմ պարզված չէ, թե որն է այդ «հունական թվագրությունը»⁸⁴, ընդ որում հույների փոխարեն այստեղ պետք է հասկանալ վրացիներին, որպես քաղկեդոնականների. վրացական տարեգրության 219 թ. միանգամայն համապատասխանում է հայկական 450 տարեթվին, որ է՝ Ք. հ. 1000 թ.:

Անհաջողությունների պատճառով շատ հայ քաղկեդոնականներ քնականաբար ստիպված էին Հայաստանից հեռանալ հարազատ

⁸³ «Ի ՆԾ Թ՝ Հայոց ՄԺԹ Թ(ուին) Հոռոմոց», Շիրակ. Տնդագրություն պատկերացոյց, Եւտրեմոս Կ. Ղևտնդ Վ. Մ. Ալիշան, Վնննոիկ, 1881, էջ 67, Brosset, Les ruines d'Ani, p. 23, s. (մամտ. աղյուսակ № XLII, որը կրկնվում է Ալիշանի նրկում. նշվ. աշխ., էջ 71):

⁸⁴ {Այս թվականը, որը տարակուսանք է առաջացրել Ն. Մառի մոտ և որին նա անդրադարձել է նաև հետագայում (*Н. Я. Марр*, Аги: кинжняя история города и раскопки на месте городаица, Ленинград-Москва, 1934, стр. 121)} առաջարկվելով իր տեսակետը, մանրամասնորեն քննարկվել և լուծում է ստացել հետագա հետազոտողների կողմից (տնյ մատնագրապես՝ Դիվան նայ վիմագրության, սրակ I, Անի քաղաք, կազմեց Ն. Ա. Օրբելի, Երևան, 1966, էջ 34 հջող., Ն. Ալիմեան, Անիի Մայր նկեղեցայ եւ Միջնաբերդի նկեղեցայ արձանագրություններու մասին, - ՀԱ, 1932, էջ 539-541, Ս. Ավագյան, Անիի Մայր տաճարի շինարարական արձանագրության տարեթվերը,- ԼՀԳ, 1979, № 11, էջ 70-77, K. Basmadjian, Les inscriptions arméniennes d'Ani, de Bagnair et de Marmachen. Paris, vol. 27, 1930, էջ. Բասմաջյան, Անիի արձանագրութանց աթթի,- ՀԱ, 1932, էջ 537, Мурадян П., Кавказский культурный мур, стр. 151 հջող., հմմտ. նստ Ռ. Վարդանյան, Հայոց տնագրույցը (4-18-րդ դարեր), Երևան, 1999) - Մ. Շ.:

դավանակիցների մոտ: Եվ եթե այս կամ այն դավանակից խումբը հանդիպում էր փորձանքների՝ ցիրուցան լինելով տարբեր երկրներում, ինչպես օրինակ, Նիկոն Սևեոնցու վկայությամբ, Միջագետքի քաղկեդոնականների պարագայում, ապա այդ խմբի հայ քաղկեդոնականները կիսում էին նույն ճակատագիրը: Եվ առհասարակ մենք արդեն գիտենք, որ հայ քաղկեդոնականներից ոմանք վրացիների հետ հեռացել են դեպի հեռավոր Արևմուտք՝ Բուլղարիա, ոմանք էլ՝ հույների հետ՝ Պաղեստին, իսկ ասորիների հետ շփվողները՝ նբանց հետ կարող էին տեղափոխվել մեկ այլ հեռավոր երկիր: Հնարավոր է, որ հայրենի հողից կտրված հայ քաղկեդոնականներն ուղղորդվում էին դեպի Հոռոմ, և առհասարակ, դեպի կաթոլիկ եկեղեցի: Հետաքրքրական կլիներ իմանալ, թե արդյոք կաթոլիկներին միացած առաջին հայերը քաղկեդոնականներ էին: Անշուշտ, քաղկեդոնականությունը նրանց շատ ավելի էր մերձեցնում կաթոլիկ եկեղեցու հետ, քան հակոբիկյաններին, նեստորականներին և նույնիսկ Հայոց ազգային եկեղեցու ներկայացուցիչներին, որը միանշանակ հակաքաղկեդոնական էր:

Ես անհրաժեշտ համարեցի ներկայացնել վերոնշյալ բոլոր տվյալները նախքան քրիստոնյաների՝ մոնղոլերենում «արքաուն»-ի կամ «էրկեուն»-ի անվան բացատրություն տալը: Դեռևս 1872 թ. Վ. Վ. Գրիգորևը, ի հավելումս Ա. Ա. Բոբրովսկիովի «Грамоты вдовы Дарма-баловой и Буяигу-хана» (Труды Вост. отд. Имп. русс., археол. общества, ч. XVI, стр. 24) հոդվածի գրում էր. «Խնդրո առարկա, ինչպես նաև Բույանտու-խանի, շնորհագրերի մեջ մոնղոլերենում *էրկեուն*-ը *էրկեուն* բառի (եզակի թիվ) հոգնակի ձևն է, իսկ այս անվանումով մոնղոլների մեջ հայտնի էին «քրիստոնյաները»՝ առաջին հերթին նրանց առավել մոտ նեստորական դավանանքի հետևորդները, ապա և՛ առհասարակ քրիստոնյաները: Սա վկայված է ԺԳ դարի

հայ հեղինակ Ստեփանոս Օրբելյանի ստույգ վկայությամբ, ով խոսելով մոնղոլական կայսր Մանգու-խանի մասին, թե նա սիրում էր քրիստոնյաներին, նշում է. «Իսկ քրիստոնյաներին մոնղոլներն [42] անվանում են *Արխասյուն*» (տե՛ս St.-Martin, Mémoires sur l'Arménie, II, p. 133)»:

Նշված շնորհագրերից մեկը՝ Դարմա-Բալովայինը, թվագրվում է 1309 թ., մյուսը՝ Բույատվու-խանինը, 1314 թ. (նշվ. աշխ., էջ 7): Գրիգորը վկայակոչում է ևս երկու տեղեկություն *էրկէունների* մասին՝ երկուսն էլ «Յուանի հարստության պատմություն»-ից (նշվ. աշխ., էջ 25): Դրանցից մեկում ասվում է. «Ըստ 1272 թ. կայսերական հրամանագրի, այն հոգևոր անձինք՝ բուդոյայականներից, դառսներից և *էրկէուններից* (ye-li-ko-wan), որոնք թողել են կուսակրոնությունը և այլևս չեն կատարում իրենց կրոնական պարտականությունները, պետք է հավասար համարվեն (հասարակ) ժողովրդին» (այսինքն՝ հարկեր վճարեն ու պարտավորություններ ստանձնեն), իսկ մյուսում, թե. «1282 թ. նոր հրամանագրի համաձայն հաստատվել է, որ Խոսիում բուդոյիստական, դաոսյան ու *էրկէունյան* հոգևոր մարդիկ, որոնք ամուսնացել են ու երեխաներ ունեցել, պետք է (հասարակ) ժողովրդի հետ հավասար հարկեր վճարեն»:

«Ավևարկներ մոնղոլ-չինական վիմագրության» («Notes d'épigraphie mongole-chinoise») աշխատության մեջ (Journal Asiatique, 1896, VIII, p. 403-416) Գ. Դևերիան *արքսունների* մասին վկայությունների մի ամբողջական շարք է հավաքել կայսերական հրամանագրերից. դրանք վերաբերում են 1264 թ. (երկու) 1270 թ., 1276 թ., 1282 թ. (երեք), 1292 թ., 1309 թ., 1312 թ. և 1314 թ.: Վերջին հրամանագրի տվյալները մեզ արդեն հայտնի են Գրիգորի հոդվածից: Բոլոր այս հրամանագրերում խոսվում է *արքսունների*՝ հարկերից ազատվելու կամ հակառակը՝ հարկ վճարելու և պարտավորություն-

ներ ստանձնելու մասին: Շատ հաճախ այս հրահանգներում խոսքը վերաբերում է հոգևոր անձանց, մասնավորապես, քրիստոնյա (*արքսունների*) հոգևորականներին: Սակայն Դևերիան ամենուր *արքսուն* բառից հետո զգուշաբար չակերտների մեջ ավելացնում է «*prêtres chrétiens*» («քրիստոնյա քահանաներ»): Առհասարակ համատեքստից իսկապես պարզ է, որ խոսքը հոգևոր անձանց մասին է, հնարավոր է՝ քահանաների, գուցե և՛ աբեղաների, և *արքսուն* բառի կիրառումը մատնանշում է, ըստ երևույթին, միայն քրիստոնեական դավանանքը: Սակայն Դևերիան հրամանագրերում առկա «*Արքսուն*»-ը համառորեն զուգորդում է «քրիստոնյա հոգևորականներ» բառերով, որպեսզի ընթերցողին նախապատրաստի իր ստուգաբանական բացատրությանը: Իր ներմուծած այդ հավելումը, նա ներկայացնում է նույնիսկ այն ժամանակ, երբ հազիվ թե խոսքը ուղղակիորեն վերաբերում է հոգևորականներին, օրինակ՝ մեզ հետաքրքրող բառը պարունակող հնագույն՝ 1262 թ. հրամանագրում, որտեղ խոսվում է զինվորական ծառայության համար մուսուլմանների, ույղուրների, *արքսունների* և *դանիչմնիների* ընտանիքներից զենք կրելու կարողություն ունեցող մարդկանց հավաքագրման մասին: Իրականում *դանիչմնի*-ը պարսկերենում նշանակում է «գիտնական», մասնավորապես «մոլլա», և հավանական է, որ այդպիսին է բառի իմաստը նաև կայսերական հրահանգներում, բայց դա դեռևս չի պարտադրում մուսուլմանների և ույղուրների հետ թվարկված *արքսուն* [43] բառը հասկանալ նորից որպես «քրիստոնյա քահանաներ»:

Դևերիան հենց ինքը մեջբերում է (նշվ. աշխ., էջ 407, ծան. 2) Չունգխուեի (1330–1332 թթ.) թագավորության օրոք կազմված չինական մի գրվածքի հիշատակարանի կրճատված մի տեքստ, որում պարզ գրված է. «*Arkaon est le nom d'une religion*»⁸⁵: Մեզ հետաքրքրող

⁸⁵ {«*Արքսունը* մի կրոնի անվանում է» – Մ. Շ.}:

խնդրո առարկա բառի չինացիների կողմից ամենաուշ շրջանի կիրառումը, ըստ Է. Հ. Պարկերի, վերաբերում է 1329 թ. (China Review, XXIV, p. 157, տե՛ս նաև H. Cordier, Histoire générale de la Chine, p. 291). «1329 թ. 9-րդ լուսինն է. հրամայված է, որպեսզի բուդդիստական ծեսերը կատարվեն ուղուր հոգևորականների ու քրիստոնյաների (Yelikaun) կողմից»:

Մոնղոլերենում *քրիստոնյա* իմաստով *արքաունի* առկայությունը վկայված է նաև Առաջավոր Ասիայում, առաջին հերթին արաբ բանասերի բառարանում, որը հրատարակվել է Պլ. Մ. Մելիորանսկու կողմից (Зап. Вост. Отд., XV, стр. 75, 17 и 121): Ըստ այս գիտնական հրատարակչի (նշվ. աշխ., էջ 155)՝ սույն գրավոր հուշարձանը «հավանաբար գրվել է հյուսիսարևմտյան Պարսկաստանում, Հուլավյան խանության դարաշրջանում (1256–1344 թթ.)»:

Այս բառի պարսկերեն բացատրությունը կա Ռաշիդ-Էդդիսի (ալ-Դիսի) աշխատությունում, ինչպես դրա մասին նշել է դեռևս [*Ժան-Անտուան] Սեն-Մարտենը (Jean-Antoine Saint-Martin, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, 1819, II, p. 280, n. 16):

Այս նույն մոնղոլական *արքաուն* տերմինը հայտնի է նաև Թարիխի Ջահան Բուշայից, ինչպես նաև [*Աբրահամ Կոնստանտին] Դ'Օսոնի՝ «Մոնղոլների պատմության» (A. C. D'Ohsson, Histoire des mongols», Amsterdam, 1852, II, p. 264) մի մեջքերումից. 1. «Arcaoun», Ալա ալ-Դինը՝ այս պարսկական պատմության հեղինակը, 1252 թ. դեպքերի մասին խոսելիս հայտնում է, որ մոնղոլները քրիստոնյաներին *արքաուն* են անվանում: Այս տերմինի պարզաբանման համար մեջքերվում է նաև այն դեպքը, երբ Հուլավուն պաշարում է Բաղդադը և նամակ ուղարկում դատավորներին, շեյխերին, գիտնականներին ու *արքաուններին*՝ խոստանալով ողորմած լինել նրանց հանդեպ (Потанин Г. Н., Тангутско-Тибетская окраина Китая и центральная Монголия, СПб., 1893, т. II, стр. 347):

Ժ. Ա. Սեն-Մարտենի աշխատությունից⁶⁶ Գրիգորիի՝ միջնորդաբար կատարած մեջբերման մեջ, որ վերցված է [44] Ստեփանոս Օրբելյանի երկից (II, գլ. 6, հրատ. Կ. Շահնազարեանց, Փարիզ, 1859, էջ 154 = հրատ. Էմին, Մ., 1861, էջ 292), տառացիորեն ասվում է. «Մանգու-խանը շատ էր սիրում քրիստոնյաներին, որոնց անվանում էին նաև *արքաուններ* (տարընթերցում՝ *արքայուններ*)»:

Ստեփանոս Օրբելյանը մեկ այլ հատվածում ևս հիշատակում է այս բառը, ըստ երևույթին, իբրև առհասարակ քրիստոնյայի բնորոշում (Saint-Martin, Mémoires..., II, p. 134 = հրատ. Կ. Շահնազարեանց, Փարիզ, 1859, II, էջ 155 = հրատ. Էմին, Մ., 1861, էջ 299-300, հմմտ. Март Н., Новые материалы по армянской эпиграфике, № 5), որտեղ մեջբերվում են Սմբատ Օրբելյանի վերաբերյալ Մանգու-խանի խոսքերը. «Այս մի *արքաունին* մենք կպահենք մեզ համար և ոչ ոքի թույլ չենք տա իշխանություն ունենա նրա վրա»⁶⁷:

Սմբատն ազդեցիկ իշխան էր, աշխարհիկ մարդ, ով ստացել էր փայլուն կրթություն: Նա տիրապետում էր հինգ լեզուների՝ հայերեն, վրացերեն, ուլդուրերեն, պարսկերեն, մոնղոլերեն:

Այս բառը, ըստ երևույթին, բոլոր քրիստոնյաներին բնորոշելու համար օգտագործում է նաև ԺԳ դարի հայ պատմիչ Վարդանը (Մխիթ. հրատ., Վենետիկ, 1862, էջ 156 = հրատ. Էմին, Մ., 1861, էջ 205 = թարգմ. Էմին, Մ., 1861, էջ 191): «Երբ Հուլավուն մեզ տեսավ,-

⁶⁶ Հայ մատենագրության մեջ այս բառի առկայության մասին միայն Սեն-Մարտենի վերոնշյալ գրքի միջոցով տեղյակ է նաև Հենրի Լորդին, Մարկո Պոլոյի ճամփադրությունների նորագույն երատարակողը (The Book of Ser Marco Polo, L., 1903, vol. I, p. 290, int. 1): Հայր Պալատիկյն գիտեր այս բառի գոյության մասին Ստեփանոսի՝ Վարդան արտամարտի ժամանակվցի ամբուջանի աշխատությունից, սակայն նա առանձնացնում էր երկր տարբերակ «արխաուն»՝ Վարդանի նրկում, «արքաուն» Ստեփանոսի գովածքում և «արխայուն» (ark'ha-ioun)՝ Օրբելյանների [տան] Պատմության մեջ (Потанин Г. Н., Таурецко-Тибетская окраина Монголии, II, стр 347): Հավանաբար նա մոլորություն մեջ է ընկել միևնույն բառի նվազարված երկր տարբեր տառադարձությունների արտոճառով:

⁶⁷ Տե՛ս նաև նշվ. աշխ., II հրատ. Կ. Շահնազարեանց, էջ 159:

գրում է դեպի մոնղոլական արքունիք ճամփորդած Վարդանը,- մեզ թոյլ չտվեց ծնկի գալ («չոքել») և ըստ իրենց ավանդության մինչև գետին խոնարհվել, կարծես ասելով, թե՛ *«արքայունները երկրպագում են միայն Աստծուն»*: Վարդանի պատմության մեջ *արքայունները* հայտնվում են մի քանի անգամ՝ նույն այդ Հուլավոի հետ պատմագրի հանդիպման նկարագրության ժամանակ (Մխիթ. հրատ., Հաաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի, լուսարանեալ ի Վենետիկ, 1862, էջ 158 = թարգմ. Էմին, Մ., 1861, էջ 193):

«Ասցի, թե զինչ քրիստոնեայ կայ և արքաուն ընդ ծով և ընդ ցամաք, ամենոյ սիրտ հետ քեզ լա է և քեզ աղօթք են առնում: Հրամայեաց, թե հաւատալ եմ որ հէնց է. ապա յԱստուծոյ ճանապարհն չեն արքաունքն, ինձ ի՛նչ աղօթք առնեն, և թե առնեն՝ Աստուած ե՛րբ լսէ: Մէշում արքաունն զԱստուած յերկնից յերկիրս բերէ՛. չբերէ: Ասցէք որ յԱստուծոյ ճանապարհն կենան և աղօթք առնէն»:

Այստեղ ես չեմ քննելու այն հարցը, թե արդյոք այս գրույցը տեղի է ունեցել իրականում, թե այն պատմագրի՝ ուսուցողական նպատակով արված հորինվածք է՝ իր ժամանակակից քրիստոնյաներին մոնղոլ խանի բերանով հանդիմանելու համար: Մեզ համար արդեն բավարար է այն, որ *արքայունը* «քրիստոնյա» իմաստով օգտագործվում է Վարդանի երկում, քանի որ հենց սկզբում «քրիստոնյա» ու [45] «արքաուն» բառերը կողք կողքի ներկայացված են որպես հոմանիշներ՝ Միևնույն հասկացության նկարագրության համար երկու հոմանիշների զուգահեռ կիրառությունը սովորական երևույթ էր հայկական շարահյուսության մեջ⁸⁸:

⁸⁸ Թվում է, թե տվյալ եստվածում «արքաուն»-ը կարելի է մեկնաբանել որպես «վարդավետ», նկիզնցանհան ուսուցիչ իմաստով, ինչպիսին Վարդանն էր, սակայն դրան խանգարում է համատեքստը: Նուազու շարադրամբից պարզվում է, որ խանը, երբ Վարդանի հետ խոսում էր *արքայունների* մասին գբուցակցի կոչման մասին ոչինչ չգիտեր:

Հայ պատմիչները բոլորովին էլ չեն արժարժում, որ *արքաուն* տերմինը նշանակում էր «նեստորական», ինչը կարելի է եզրակացնել Գրիգորևի ասածից, տեսակետ, որը վաղուց ի վեր փորձում են տարածել նաև Արևմուտքի գիտնականները, ինչպես օրինակ՝ [Վան-Պիեռ Գիյոմ] Պոտիեն՝ քահանա Իոանի վերաբերյալ ստորև մեջբերված հոդվածում⁸⁹:

Նրանց վկայություններից երևում է, որ մոնղոլներն այդպես անվանում էին ընդհանրապես քրիստոնյաներին, սակայն ստուգաբանական բացատրություն նրանք չեն տալիս. արդյոք այն պատճառով, որ իրենք էլ չգիտեին, թե՞ որովհետև ժամանակի հայերին այն հասկանալի էր առանց բացատրության:

Սակայն մոնղոլագետները խոստովանում են, որ այս բառի մոնղոլերեն ստուգաբանություն գոյություն չունի: Մոնղոլերենում այն փոխառյալ բառ է⁹⁰ և փոխառված է [46] ոչ թե ասորիներից, համե-

⁸⁹ Նույն տեսակետին է հակված նաև Հենրի Կորդիեն (Henri Cordier, *The Book of Ser Marco Polo*, I, p. 290, int. 1): Նույնացնելով չինարեն *ելիքաուն*-ը (*Yelikhawen*) *արքաուն*-ի (*Arkhaun*) հետ՝ նա գրում է. «Մենք կարող ենք համարձակություն ունենալ առաջադրելու, որ *մարխա* (*Marha*), *սիլիկաան* (*Silikapan*) և *ելիքաուն* (*Yelikhawen*) բառերը համապատասխանաբար նշանակում են հայ, ասորի կամ հարևանիկյան և նևտոնյական եկեղեցիները»: Այն պատճառով, որ մեզ հասած հաշարժաններում այնքան շատ են նեստորականների վերաբերյալ տեղեկությունները, գիտնականներն, իմ կարծիքով, պետք է առավել զգույշ լինեն և այս շրջանների բոլոր քրիստոնեական երևույթները չվերագրել նեստորականներին միայն այն բանի համար, որ մեզ հայտնի աղբյուրների ազդեցության տակ մենք ճանաչում ենք կազմել բարձր. միզուցն չափազանցված կարծիք նեստորականների գործունեության վերաբերյալ: Համենայն դեպս, գաբմանալի է թվում այն ճապոնացիները, որով Ըառլ-Օդ Էոնեն վճռակաճորեն նեստորական է համարում կայսերական 1276 թ. հրահանգում հանդես եկող քրիստոնյա հոգևորականներին նրանց ամուսնացած լինելու պատճառով. «Այս ամուսնացած քահանաները վառաբար նեստորականներ են» (« Ces prêtres mariés sont sûrement des Nestoriens », *Journ. As.*, 1900, XV, p. 688):

⁹⁰ Հայտնի ճանապարհորդ Գ. Ն. Պոտանինը փորձում էր բացատրել տերմինը մոնղոլական հիմքի վրա՝ նույնացնելով այն մոնղոլական եմբիաթային եկրոսի՝ «Շրվն-մըր-գենի»-ի հետ, ինչպես նաև Վան-Խանի նկրոյ անվան՝ «Շրվն-բարս»-ի հետ, որը նախնախնի է Չինգիզ-Խանի մասին պատմող առաջնավան գրքերում և այլուր: Հիմնվելով որոշ պատմաբանների վրա՝ նա գալիս է այն եզրակացման, որ *արխուն* (*արխուն*, *Արախուն*) ևստույ, գուցե մինչդեռ իստական մի պաշտամունքի կենտրոն էր կամ որոշ առաջավանների եկրոս և դրա հետ կապված կրոնագնում է, որ շրջանառություն մեջ կույծ այդ «Շրվն» բառն օգտագործվում էր *Քրիստոս* անվան փոխարեն: Ըսկ կեսը

նայն դեպս մեզ հայտնի ասորիներից, քանզի ասորական բառամթերքի հիման վրա այն հնարավոր չէ մեկնաբանել:

Մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանում հայերն իրենց ընտանիքներով հաստատվում էին անգամ հեռավոր Չինաստանում: Անդրեաս անունով մի միևնորիտի (=«կրտսեր եղբայր» կամ ֆրանցիսկյան վանական – Մ. Շ.)՝ 1326 թ. գրված նամակից տեղեկանում ենք, որ այդ ժամանակ մի հարուստ հայուհի Կանտոնում կառուցել էր մեծ և գեղեցիկ, հավանաբար ծխական եկեղեցի, բայց շուտով այստեղ գործի մեջ խառնվում են կաթոլիկ միսիոներները⁹¹:

1375 թ.-ի Կատալոնական քարտեզը վկայում է, որ հայերն ունեցել են վանք Իսիկ-կուլ [*Նի] մոտ:

Պալլադիոս կարծում է, որ. «մոնղոլները Քրիստոսի անունը լիտուրգիան ևն *Էրկե-ուլ*» և էրիկոս կամ *Էրկեզոտ* անվան տակ պետք է հասկանալ «Քրիստոսի մարդիկ» (նշվ. աշխ., II, էջ 346–347, 135): Նույն տեղում Գ. Մ. Պոտանինը թյուրիմացաբար ներառում է նաև Մարկո Պոլոյի *արձուններին*, որոնք, ինչպես կոմսանկեր ատորև, իրականում և ոչ մի ընդհանրություն չունեն *Էրկեունների* կամ *արքաունների* հետ: Հստակաբար, մոնղոլագնաները մեզ հետաքրքրող քրիստոնեական տերմինի բաժնուղի բացատրության համար մոնղոլներինում չունեն բավարար նյութեր: Ինձ համար անձանթո ոլորտում սովյալ հարցին իրազեկ լինելու համար ես պարտական եմ իմ գիտնական գործընկերներին՝ Վ. Լ. Լյուովիչին ու Ա. Դ. Ռուդնին, ինչպես նաև շինագետ Գ. Ս. Պոսովին, ինչի համար էլ հայտնում եմ նրանց իմ խորին շնորհակալությունը:

⁹¹ Le Quien, Oriens Christ. III, 1358. Այստեղ Լուստոնը, իրականում Kuang tong-ը սխալմամբ գրված է Cayton (տե՛ս Neuman, Versuch einer Geschichte d. Arm. Liter., S. VII): Լը Քիննի առաջադրած լատիներեն բնագիրն ունի. «...Est quaedam magna civitas juxta mare oceanum, quae vocatur lingua persica Cayton, in qua civitate una dives domina Armenia ecclesiam erexit praeclaram satis et grandem, quam quidem de ipsius voluntate per archiepiscopum in cathedralem erectam cum competentibus dotibus, fratri Gerardo episcopo et fratribus qui cum eo erant donavit in vita et in morte reliquit; qui primus eandem cathedram suscepit. Mortuo autem dicto episcopo, ibique sepulto, voluit archiepiscopus in eadem ecclesia me facere successorem; sed huiusmodi locationi et successioni me non praebente assensum, ipsam contulit fratri Peregrino episcopo memorato qui illuc. habita opportunitate, se contulit et postquam paucis annis rexit eandem, anno Domini 1322, in crastino octavae Apostolorum Petri et Pauli (die 7 jul.) diem clausit extremum...

« Denique non longo elapso tempore post obitum fratris Peregrini, recepi decretum archiepiscopi de locatione nostra in memorata ecclesia cathedrali, cuius locationi assensum praebeui, causa rationali suadente: et nunc in loco vel ecclesia civitatis, nunc in eremitorio moram facio juxta meae libitum voluntatis etc. Sane in isto vasto imperio sunt gentes de omni natione quae sub coelo est, et de omni secta, et conceditur omnibus et singulis vivere secundum sectam suam»...

Այդ հայերն, ըստ երևույթին, առանձնացած չէին ասորական եկեղեցուց. 1) այդ երկրամասից մեզ հասած հայերի մասին առայժմ միակ վկայությունը 1323 թ., երկլեզու՝ հայերեն և ասորերեն արձանագրությունն է (տե՛ս Յար. Բոսր. Օրդ., տ. VIII, Եր. 344–349), 2) բուն ասորական՝ այսպես կոչված նեստորական արձանագրություններում հանդիպում են անունների հայկական տարբերակները, օրինակ՝ «Պողոս» (տե՛ս Ն.Մառ, նշվ. աշխ., էջ 348):

Հայերեն արձանագրության հնագրական ուսումնասիրությունն ի հայտ բերեց միանգամայն հազվագյուտ՝ արխայիկ մի առանձնահատկություն (նշվ. աշխ., էջ 345–346), որը հնարավոր է, որ վաղ դարաշրջանում Յոթնագետք (*Ստմիրեչին*) բերված հին գրի կրկնություն է: Քանի որ միսիոներները շարժվում էին առևտրական ճանապարհներով, ապա կարելի [47] է ենթադրել, որ դեպի Արևելք տանող այդ հեռավոր ճանապարհները վաղուց պետք է ծանոթ լինեին Հայաստանի առևտրականներին: Ես ամենևին չեմ ցանկանում կառչել հայ ժողովրդի վերաբերյալ այն թյուր պատկերացումից, թե նրանք բնութով առևտրական են, երբ իրականում հայության կորիզը մինչ օրս էլ հանդիսանում է գյուղական, գյուղատնտեսական բնակչությունը: Ընդհակառակը, պատմականորեն հայերի շրջանում ձևավորված առևտրական հակումները, իմ կարծիքով, ուղիղ համեմատական են նրանց ապագայնացմանը: Թերևս կարելի է պնդել, որ հնում առևտրական դասը ձևավորվել է այն հայերից, ովքեր հեռացել էին ազգային արմատներից՝ բռնելով ապագգայնացման ուղին, և այսպիսի կոսմոպոլիտ ուղղվածություն ունեցող առաջին հայերը, այդ ժամանակվա ավատատիրական հասարակարգում, ինչպիսին նաև Վրաստանն էր, կարող էին լինել միայն իրենց հայրենիքում ճնշվածներն առաջին հերթին՝ մանիքեական, պավլիկյան և քաղկեդոնական հայերը: Նման մոտեցումը մեզ կարող էր օգնել վերականգնելու դե-

այի Ռուսաստան՝ Վոլգա և դեպի Ազովի շրջակայքը, Բուլղարիա և Կիլիկիա հայերի ներգաղթի գործընթացների ժամանակագրությունը և կազմը, որոնք անկասկած նախորդել են Անիի անկմանը, որի հետ հիմնականում թյուրիմացաբար են կապվում: Պետք է հիշել, որ հայերի գաղթելու գործընթացը պայմանավորված էր ազգային-հասարակական հոգեբանությամբ, իսկ վերջինս էլ իր հերթին այդ ժամանակ պայմանավորված էր նախ և առաջ կրոնական պահանջներով: Հանուն կրոնական գաղափարների իրագործման՝ ամբողջովին զոհաբերվում էր ազգային շահը: Դեռևս Ղազար Փարպեցին (Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ Թուրթ առ Վահան Մամիկոնեան, Վենետիկ, 1873, էջ 141-142) բնորոշում է հարազատ հողին նվիրվածությունը, հայրենասիրությունն առանց տատանվելու կրոնական շահերից ավելի ցածր դասելու այս տրամադրվածությունը. «...այնուհետեւ կամ կեամք ծառայելով ճշմարիտ հաւատոյն Բրիստոսի»:

Մի բան ակնհայտ է, որ հայերի տեղաշարժերն ընթանում էին խոշոր առևտրական ճանապարհներով, այսպես՝ հյուսիսում Դերբենտի անցումով նկատվում է շարժ դեպի հյուսիս՝ մերձվոլգյան բուլղարների մոտ, դեպի արևմուտք՝ մինչև Ազովի ծով, ըստ երևույթին նաև արևելք՝ Չինաստան: Մոնղոլական դարաշրջանի ավելի ուշ ժամանակի վերաբերյալ Դևերիան փորձում է հիմնավորել, որ Սարայի միջոցով Չինաստան են եկել հունադավան քրիստոնյաներ: Հայքաղկեդոնականներն այս ճանապարհին [48] կարող էին ծանոթ լինել մոնղոլներից դեռ շատ առաջ, սակայն նրանց ոչինչ չէր խանգարում շարժվել նաև Պարսկաստանի միջով: Եթե պարսիկները, ինչպես գրում է այդ մասին նաև կաթողիկոս Արսենիոսը, չէին հանդուրժում հայ քաղկեդոնականներին իրենց հայատակության տակ գտնվող Հայաստանում, քաղկեդոնական Բյուզանդիայի հարևան լի-

նելու պատճառով, ապա նրանք կարող էին հայերին տրամադրել մեծ հնարավորություններ տեղաշարժվելու ոչ միայն դեպի արտերկիր՝ Չինաստան, այլև հենց Պարսկաստանի Արևելյան շրջաններ:

Ավելին՝ պարսից արքաներն իրենք կարող էին բռնի գործողություններ ձեռնարկել համառ քաղկեդոնականներին Հայաստանից և առհասարակ արևմտյան սահմաններից դեպի արևելք վտարելու համար, ինչպես որ նախկինում՝ բյուզանդական կայսրերը կայսրության կողմից հալածված հայ պավլիկյաններին պատրաստակամորեն բնակեցնում էին Թրակիայում՝ հյուսիսային բարբարոսների դեմ պայքարելու համար: Հետաքրքրական կլիներ իմանալ, թե ինչ դավանանք ունեին այն հայերը, որոնց Ջ դարի վերջին քառորդին Վըրկան աշխարհում հանդիպեց մարզպան Նշանակված Մմբատ Բազրատունին: Այս մասին դեռևս Է դարում հաղորդում է պատմիչ Սեբեոսը⁹²: Նույն իրադարձության մասին հիշատակում են նաև ավելի ուշ շրջանի հայ պատմիչներ Հովհան կաթողիկոսը (Դրասխանակերտցին – Մ. Շ.)⁹³, Ստեփանոս Տարոնեցին⁹⁴, Սամուել Անեցին⁹⁵, Մխի-

⁹² Պատմության Սևրժուխ նախկնաբնի ի Հնրակլէ, Կրատ. Բ. Պատկանով, Ս. Պետ., 1879, գլ. XIV, էջ 59-60, րու. *История императора Иракля, сочинение Епископа Себеоса, писателя VII века*, перев. с армянского Патканов К., СПб., 1862, стр. 65-66, ֆրանս. *Pseudo-Sebêos. Texte arménien traduit et annoté par Frédéric Macler*, Paris, 1904, p. 43:

⁹³ Յովհաննու Լեաթողիկոսի, նշլ. Կրատ., էջ 40-41 {«Ընդ որ գարնացնալ Խոսրովալ» յաւելո իմն Կառոյանայր Մմբատ յաչս նորա. և բազմօր ոմամքք ընծայական օժտոթևումքք գնաւ պատուաւիրնալ՝ տաչ մմաւ և գմարգարանութին շլիկանայ: Իսկ Մմբատայ երթնալ Կասանալ յաշխարհն յաջն՝ գտանէ անդ զգլերնալ ազգս ի Հայաստաննայց և բնակեցուցնողս ի Թուրքաստան կայմաւէ: մնծի անապատին, որ Սազաստան անուանի, զլնգու իրեանց մոսացնալ և դպրութիւն նուագնալ յոյժ: Որոց և տնեսալ զՄմբատ՝ յաւելո իմն խրախ լինէին, և ՚ի Կրամանէ նորուն դարձնալ աշակերտնալ ըստ Կայնրն հազարագս սիդորայիցն զլնգուն նորագլին. և ուսնալ գոյարութիւն Կայնրէն՝ Կասատաւէին ՚ի Կասատու: Եւ ապա զկրէց մմն ՚ի նոցունց իսկ՝ Աբնլ անուն, Կպիսկուարս նոցա Կրամայլ կազուցաննլ մնծի Կայրաւելոն մնրոյ Մովսնուի: Եւ այսպէս վիճակ մնծի արթոյ Սրբոյն Կրիգորի ՚ի Կնատուան երկրի գնոսաւ կուզմէ: մինչև ցայսօր ժամանակի» - Մ. Շ.}:

⁹⁴ {Մտնխանոսի Տարոնեցոյ Պատմութիւն, 1885, Ս. Պետ., էջ 85-86; էջ 85-86, րու. 'Всесоюзная история Степ'аноса Таронского, Асох'ика по прозванию, Н. Эмин, Москва, 1864, стр. 59-60 - Մ. Շ.}:

թար Այրիվանեցին⁹⁶ և Կիրակոս Գանձակեցին⁹⁷: Սահմանափակվեմ Հովհան կաթողիկոսի առավել հանգամանալից հաղորդմամբ, համաձայն որի Պարսից արքա Խոսրովը Սմբատ Բագրատունուն տալիս է. «...Վրկանի մարգպանությունը: Գնալով ու հասնելով այդ աշխարհը՝ Սմբատը այնտեղ գտնում է Հայաստանից գերված ժողովրդին, որ բնակվել էր Թուրքաստանի մեծ անապատում, որ Սագաստան էր կոչվում: Հայերն [՝այնտեղ] մոռացել էին իրենց լեզուն և հույժ նվազել էր դպրությունը: Տեսնելով Սմբատին՝ նրանք է՛լ ավելի են ուրախանում, և նրա հրամանով դարձյալ սովորելով հայերենի հնչյունների արտասանությունը՝ նրանք նորոգում են իրենց լեզուն և սովորելով հայերենի գրագրությունը՝ հաստատվում են իրենց հավատքի մեջ: Այնուհետև Սմբատը կարգադրում է մեր պատրիարք Մովսեսին նրանց միջից Աբել անունով մի քահանայի կարգել եպիսկոպոս⁹⁸: Եւ այսպիսով, նա ձևավորում է սուրբ Գրիգորի մեծ աթոռի մի թեմ, որը գոյություն ունի նաև մեր օրերում»⁹⁹:

Ժ դարում՝ Հովհան կաթողիկոսի գրելու ժամանակ, հայկական այս թեմը, ըստ երևույթին գոյություն ուներ Պարսկաստանի հյուսիսարևելքում, և այդ ժամանակ [49] հավանաբար, ենթակա էր Հայ ազգայն եկեղեցու առաջնորդին: Այդ ժամանակներում Հայոց եկեղեցին գոյություն ուներ նաև Խորասանում՝ դատելով Ջուղայում պահ-

⁹⁵ {Մամուլի քանանայի Անեցայ հասարմոնք ի գրոց պատմագրաց յաղագս գլխոի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ժայրարաղ արարեալ, Երատ. Ա. Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 77 - Մ. Շ.}:

⁹⁶ {Մխիթարայ Այրիվանեցոյ, Պատմութիւն Հայոց, ի լոյս բնձայնաց Մ. Լմին, Մոսկուա, 1860, էջ 49 - Մ. Շ.}:

⁹⁷ {Ելիրակոսի Վարդապետի Գանձակեցոյ համառոտ Պատմութիւն ի սրբոյն Գրիգորէ յառորս իր լուսաբանեալ, Վննեոիկ, 1865, էջը համապատասխանում է՝ 29: Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ, Երատ. Ոսկան Տէր-Գեորգեան Յովհաննիսեանց Երևանցի, Մոսկուա, 1858, էջ 29 - Մ. Շ.}:

⁹⁸ Ըստ Ստեփանոս Տալոնեցու՝ «վարդապետ»:

⁹⁹ {Հովհաննես Այաթոլիկոս Դրապանանկերեցի, Հայոց Պատմություն, Թարգմ. և ծնթ. Գ. Բ. Փոստոյանի, էջ 73 - Մ. Շ.}:

վող հայերեն մի ձեռագիր Ավետարանից¹⁰⁰: Այս մագաղաթյա երկաթագիր ձեռագիրը գրվել է հավանաբար մինչև Ժ դարը, որը հնագույնն է Ջուղայի հավաքածուի մեջ: Ձեռագիրը գրվել է Խորասանում և նորոգվել է մեկ կամ երկու անգամ:

Բայց Ձ դարում Հայաստանում ազգային եկեղեցական ուղղվածությունը դեռ նոր էր սկսում արտահայտվել: Վրկանի հայերը, ովքեր հայրենիքից վտարվել են դրանից շատ տարիներ առաջ, իհարկե, Հայ ազգային եկեղեցու անդամներ լինել չէին կարող: Սեբեոսը չի էլ խոսում այդ մասին: Վրկանի հայերի մասին ամենայն հավանականությամբ գոյություն է ունեցել հատուկ մի ավանդույթ, որից օգտվել են և՛ Սեբեոսը, և՛ ավելի ուշ շրջանի հայ պատմիչները՝ հաղորդելով որոշ տարբերվող մանրամասներ, հետևաբար Սեբեոսի երկը չի կարող այս հարցի համար սկզբնաղբյուր ծառայել (հմմտ. К. Патканов, История императора Иракта, стр. 201, прим. 149), բայց միևնույն ժամանակ նա ավելի վաղ և համեմատաբար քիչ կողմնակալ հեղինակ է և գրում է այսպես. «Այդ երկրում (Վրկանում) Հայաստանից գերված մի ցեղ կար՝ բնակեցված մեծ անապատի ստորոտում՝ Թուրքաստանի և Դելիաստանի կողմերում: (Այդ ցեղի մարդիկ) մոռացել էին իրենց լեզուն, դպրությունը պակասել էր (կամ Ս. Գրքի իմացության մեջ նրանք թուլացել էին) և քահանայական կարգը վերացել: Այնտեղ կային նաև կողրյաց ցեղեր՝ մեր տղամարդկանց կողմից գերված: Բիչ չէին (մարդիկ) նաև հունաց իշխանությունից և ասորական սահմաններից: Կողրյաց ցեղերն անհավատ էին: Բրիստոնյաների վրա մեծ լույս ծագեց, նրանք հաստատվեցին հավատի մեջ, սկսեցին ուսանել դպրություն (կամ Սուրբ Գիրք) և լեզու (Սուրբ Գրքի) և քահանայական պաշտոնում կարգեցին իրենցից ոմն երեցի, ում Աբել էին կո-

¹⁰⁰ Այս գրչագրի վերաբերյալ տեղեկության նամար պարտավան են և. Մմբատ Տեր-Ավետիսյանին:

չում»¹⁰¹: Սեբեոսի հաղորդածի մեջ կարևորն այն է, որ նա (50) խոսում է Հայաստանից վտարված հայերի, ինչպես նաև հունական իշխանության և ասորական սահմաններից տեղահանված քրիստոնյա բնակիչների մասին. արդյոք այդ քրիստոնյաները նույնպես հայեր էին, թե՛ հույներ կամ ասորիներ՝ միևնույն է: Ամենահավանական տարբերակն այն է, որ խոսքը միևնույն՝ քրիստոնեական եկեղեցու անդամների մասին է, մասնավորապես քաղկեդոնական եկեղեցու, որը Պարսկաստանի արևմտյան ծայրամասում քաղաքական առումով վտանգավոր էր համարվում:

Ամենայն հավանականությամբ հենց հայ քաղկեդոնականներն են եղել դեպի հեռավոր արևելյան երկրներ տեղաշարժվող հայերի առաջամարտիկների շարքում: Քանի դեռ հայ քաղկեդոնականները վերջնականապես չէին խզել կապերը հայրենիքի հետ, հենց նրանք կարող էին իրենց ազգակիցների համար միջևորդ լինել՝ Չինաստանը ճանաչելու գործում: Հավանաբար այսպիսի վաղ ծանոթության հիման վրա հայ պատմագրության մեջ առաջացել են Օրբելյան և Մամիկոնյան հայկական իշխանական տների՝ չիևական ծագման մասին առասպելները, որոնք թյուրիմացաբար ընկալվում էին որպես հավաստի պատմական տվյալներ (Brosset, *Hist. de la Sioumie*, I, p. 210. n. 9) Օրբելյանները և Մամիկոնյանները, եթե նույնիսկ ոչ հայկական, ապա անկասկած տեղական ծագում ունեն, իսկ նրանց չիևական ծագման մասին առասպելներն էլ ստեղծվել են Ը դարից ոչ շուտ:

¹⁰¹ «Լերջնրս իրաւորաբկված ֆրանսերեն թարգմանության մեջ կան մի շարք անճշտություններ, այսպիսի՝ ա) «ազգն գերևայք ի հայաստան երկրլ» Մակկնր դարձնել է « des captives arméniens » («մայ գերեվարվածները»): «Ազգ» բառի քնն եւս եւամատչանցված ւսծականը կոզնամիլ թվով է, որովհետև այն հարվարվաւն իմաստ ունի: Թերևս աւյն կարնիլ էր թարգմանել «ժողովորդ», բայց ոչ «ժողովարիներ», ինչպէս թարգմանել է Պատկանտլը, բ) «նստուցևազ» բաւր Մակկնր թարգմանել է « campé », գ) «այք գերնցան մերովրն ադամբքն» ընթնրցման դեպքում կիմք չիմ տեսնում այն հաւկանաւ աւյնպէս, ինչպէս աւաջայրիւմ է Մակկնրը. « qui avaient été faits prisonniers avec les nôtres », թևն Պատկանտլը ժամտնտիին կս աղղվես է թարգմանել: Նման թարգմանություն եւամար սրտհասում է ընդ հաւիղիլը:

Դրանք ձևավորվել են հունաբան շրջանակներում ստուգաբանություններին նախապատվություն տալու արդյունքում, այսինքն՝ իմ պատկերացմամբ կրկին հայ քաղկեդոնական գործունեության միջավայրում: Այս առասպելը հայտնի է նաև Մովսես Խորենացու *Աշխարհացոյցից* (իրատ. Պատականով, էջ 25, ռուս. թարգմ., էջ 84): ԺԳ դարի մեկ այլ՝ Վարդան (Արևելցու – Մ. Շ.) *Աշխարհացոյցի* մեջ ակնհայտ վկայություն է պահպանվել Միջին Ասիայի քրիստոնյաների մասին: Վարդանը նրանց անվանում է ուղղափառներ, ինչի հետևանքով էլ ենթադրվել է, և ես էլ կիսում էի այդ կարծիքը (Надгробный камень из Семиречия с армянско-сирийской надписью 1323 г., Зап. Вост. Отд., VIII, стр. 348–349), որ եթե հայ հեղինակը նրանց անվանում է ուղղափառներ, ապա նրանք նույնադավան են հայ-գրիգորյանների հետ: Բայց ինքը՝ Վարդանը, լեզվի սայթաքում է թույլ տալիս ասելով, որ այդ «ուղղափառներն» ունեին առանձնահատկություններ¹⁰²: Մյուս կողմից հնարավոր է, որ Վարդանը կրկնում է «ուղղափառ» բառ ինչ-որ աղբյուրից, որը կարող էր քաղկեդոնական լինել և այդ դեպքում այս տերմինը համարժեք կլիներ «քաղկեդոնականին»:

Եվ իսկապես, Միջին Ասիայում հայերի միավորումն ասորիների հետ, որը փաստվում է Յոթնագետքի (*Ստվիրեչիե*) [51] հուշարձանների վիմագիր արձանագրություններով, կասկած է հարուցում, որ այդ հայերը, ինչպես այժմ կոչում են «գրիգորյաններ»-ը, իրականում Հայ ազգային եկեղեցու անդամներ էին:

Պետք է նշել, որ յոթնագետքյան ասորական տապանաքարերի արձանագրություններում հանդիպում են հունաբանության որոշ հետքեր, որոնք կարող էին լինել նախկին դավանանքի մնացուկները:

¹⁰² Վարդանի մատնանշած առանձնահատկությունը՝ նրանց մոտ միայն Մատթեոսի Ավետարանի գոյությունը, ինքնին, իհարկև, ոչինչ չի հուշում: Հարկ է նշել, սակայն, որ հայ աշխարհագրագետը ընդունում է այդ «ուղղափառների» առանձնահատկությունը:

Այսպես՝ ուշագրավ է հունական անունների առկայությունը՝ Ալեքսանդր. Փեթրոնիա և այլն: Յուդիտա (N 50, II) անվան վերաբերյալ պրոֆ. Խվոլսոնը նկատում է, որ (նշվ. աշխ., էջ 134) «kommt im Westen als Name einiger Heiligen vor» («Արևմուտքում մի քանի սրբեր հանդես են գալիս այս անվամբ» – Մ. Շ.): Եվ իրոք, այս իգական անունը, ինչպես նաև արձանագրություններում առկա Կիրիակոսը (ϕακίος), որը պրոֆ. Խվոլսոնի կարծիքով հազվադեպ է ասորիների շրջանում. արևելյան քաղկեդոնականների մեջ ամենասովորական անուններն են: Այս բոլոր անունները թափանցել են նաև Հայ ազգային եկեղեցի և բավականին տարածված են, բացի Փեթրոնիայից, թեև վերջինիս հիշատակը և վարքը գոյություն ունի նաև հայերենով¹⁰³:

Մասնավորապես հատկանշական է Հիսուսի հունականացված ձևը՝ Իշուս (ϕαίς)՝ սպասվելիք Իշուկի (ϕαίς) փոխարեն (D. Chwolson, Syr.-nestor. Grabsinschriften, 1890. S. 27, N 50, 10): Պրոֆ. Խվոլսոնը մատնանշում է, որ հունական ձևը՝ (ϕαίς), հանդիպում է նաև ասորական գրականության մեջ (նույն տեղում, էջ 133), սակայն, եթե չեմ սխալվում, միայն ասորա-պաղեստինյան, և ամենևին ոչ նեստորական կամ նույնիսկ հակոբիկյան գրականության մեջ: Այդ ձևը գերիշխում է նաև հայերենում և իմ պատկերացմամբ ներմուծվել է հունասերների, եթե ոչ քաղկեդոնականների, ապա նրանց համախոհների կողմից¹⁰⁴:

¹⁰³ Ի դեպ, Լիբիակոս էր նաև այն եղիսկոպոսներից մեկի անունը. ով կարգվել էր Տայաստանում Գրիգոր Լուսավորչի ձեռամբ:

¹⁰⁴ Անվովս քաղկեդոնական միտվածությունից՝ նալեական նյութերի տվյալները կարող են նեշտացնել արձանագրության մեջ առկա անձնանունների ընկալումը. ու) *Շնիյաս* ասորերեն նշանակում է «առաքյալ», կայերեն «առաքյալ», այսինքն Ասարկ, սրբ կայերի մեջ տարածված անուններից է (տե՛ս D. Chwolson, op. cit., S. 134), բ) «Ճաչկ {Շեմե՛ն՝ Թերիթա – Մ Շ.) կենտոցի անունը մեկնաբանվում է որպես հունարեն ձոքաս, որը կայերենում համապատասխանում է Այծմանիկ անվանը, գ) տարաբնույթ ննթադրությունների առարկա դարձած (նշվ. աշխ., էջ 57–58) արձանագրության «Իվանիզ» անունը՝ N 27, 2, ներկայացնում է Իվան (նմաբոսյա. «Քոսոս». «Իոսանիզ») (ϕαίς) «Իոսանիկ»-ի փոխարեն, հմմտ. վրացերեն «Իվանիկա») անվան խոսակցական փո-

Պարսկական ծագում ունեցող «Շիրին» իգական անունը (նշվ. աշխ., էջ 82, N 49; 2), հնպատսխ.՝ «Շերին» մեզ համար հետաքրքրություն է ներկայացնում ոչ այնքան այն առումով, որ այն «ein bekannter persischer Frauennamen» («Տարածված պարսկական իգական անուն է» – Մ. Շ.) նշվ. աշխ., էջ 135), այլ որովհետև այդպես (Scherin) էր կոչվում մի «նշանավոր միանձնուհի», [52] վարքագրի խանդավառ բնորոշմամբ՝ «կանանց միջից օրինվածը»: Մեզ համար հետաքրքրական է հատկապես այն, որ այդ առթիվ նաև ասորերեն ձեռագրի լուսանցքում գրված է. «Բոլորի (կանանց) առջևից գնում է Մարիամը՝ Աստվածածինը» (Dr. Henrich Goussen, Martyrius-Sahdona's Leben und Werke nach einer syrischen Handschrift in Strassburg /E., Leipzig. 1897, S. 15 6,8¹⁰⁵): Ամենևին անհավանական չէ, որ այդ բնագրերը որոշ չափով արտահայտեին քաղկեդոնական դավանանքի ազդեցությունը:

Վ. Վ. Բարտոլդը՝ «Նախամոնղոլական շրջանի Թուրքեստանի քրիստոնեության վերաբերյալ» հոդվածում (Зап. Вост. Стр., VIII. стр. 10–11) մատնանշում է նաև ուղղափառ քաղկեդոնականների ներկայությունը մեզ հետաքրքրող շրջաններում. արաբների հաղթանակից հետո քաղկեդոնականները երկրորդ անգամ Միջին Ասիա մտնելու արտոնություն են ստանում: ԺԱ դարում Մերվում եղել է քաղկեդոնական մետրոպոլիս:

Ավելի ուշ ժամանակաշրջանի վերաբերյալ մոնղոլների միջավայրում քաղկեդոնականների դերի ուսումնասիրմամբ զբաղվում էր

դարշական ձևը «-իզ»-ով կամ «փկ»-ով կազմված: Հայոց մեջ հանդիպում է նաև «Լվանիկ» ձևը, ինչպես օրինակ 1344 թ. արձանագրություններից մեկում (Մ. Ջալալյան, «Ճանապարհորդությունն ի Մեծն Հայաստան», Ե. Բ, Տիգրիս, 1858, II, էջ 128):

¹⁰⁵ Ի դեպ, դսկտոր Գոսննի կողմից նկարագրված հուշարձանում հանդիպում է (էջ 11) Բարշաբա անունը, ինչի կետ էլ պետք է նույնացնել (ՀՀԷԷ) յոթնազևտրյան մի տեսակարարի արձանագրությունում նշված անունը (Chwolson, op. cit., S. 101, N^o XXI). Սա այն անունն է Բարշաբա («Bar-Schaba»), որի վերաբերյալ պրոֆ. Խվոլսոնը գրել է. «ist syrisch, kommt aber, glaube ich, sonst in der syrischen Literatur nicht vor» («[Անունն] ասորական է, սակայն կարծում եմ, որ ասորական գրականությունում մեզ այն որևէ տեղ չի հանդիպում» – Մ. Շ.), (նշվ. աշխ., էջ 133):

Դներին՝ «Notes d'épigraphie mongole-chinoise» (Journ. As., 1896, VIII, p. 425): Նա տեղյակ չէր, սակայն, Արևելքում ավանների, վրացիների և հայերի շրջանում քաղկեդոնականությանն առնչվող բարդ հարցին, իսկ հայ-քաղկեդոնականների մասին, իհարկե, է՛լ ավելի քիչ պատկերացում կարող էր ունենալ: Նա հավանաբար չգիտեր նույնիսկ այն, որ էթնիկական անվանումներն այստեղ հաճախ գործածվել են դավանաբանական իմաստով, մասնավորապես «հունական»-ը և մասամբ «վրացական»-ը՝ «քաղկեդոնական»-ի իմաստով: Այնուամենայնիվ, մեզ համար հետաքրքրական է Մոնղոլիայում և Չինաստանում քաղկեդոնականների, այդ թվում վրացիների և ավանների վերաբերյալ նրա հավաքած և առաջին անգամ մեկտեղած վկայությունների վերջնական արդյունքը: Դներինյի կարծիքով դրանք հստակ խոսում են ԺԳ-ԺԴ դարերում մոնղոլների միջավայրում հունադավան քրիստոնյաների ազդեցիկ խմբի գոյության մասին (Journ. As., 1896, VIII, p. 436):

Պարզվում է, որ քաղկեդոնականներն ավելի նշանակալի և ազդեցիկ էին մինչև ԺԳ դարի կեսերը, իսկ այդ ժամանակի մասին եվրոպացի ճանապարհորդները քիչ տեղեկություններ են հաղորդում: Այնուամենայնիվ, ճանապարհորդների վկայությունները Միջին Ասիայում քրիստոնեական դավանանքների վերաբերյալ ընդհանրապես պետք է ընդունվեն *cum grano salis*¹⁰⁶, քանի որ [53] արևելյան քրիստոնյաների տարբեր եկեղեցիների ներքին առանձնահատկությունները նրանց համար հիմնականում մատչելի չէին: Անգամ Շառլ-Օդ Բոնենը (Charles-Eudes Bonin), ով հակված էր մտածել, որ նեստորականները բացարձակապես գերակայում էին, չի բացառում, որ նույնիսկ Մարկո Պոլոն Չինաստանում «հունադավան ավաններին» համարել է նեստորականներ (Journ. As., 1900, XV, p. 589): Արևմտյան

¹⁰⁶ {«Ոյուշակի վերադասությունը» – Մ. Ե.}:

ճանապարհորդներն ավելի հեշտությամբ կարող էին սխալվել, քանի որ նրանց հայտնվելու ժամանակ արդեն այդ հեռավոր օտար երկրում տարբեր դավանանքները կարող էին խաչասերվել և միաձուլվել (տե՛ս Deveria, նշվ. աշխ., էջ 438), իսկ այդ դարաշրջանում գերագանցապես իշխող նեստորականությունն իհարկե չէր կարող նպաստել խնդրո առարկայի վերաբերյալ ստույգ պատմական պատկերացում կազմելուն: Նեստորականների նման գերակա իշխանության վերաբերյալ վկայություն չկա: Այդպիսի մի իրողություն ի հայտ է գալիս ԺԳ դարի կեսերին, երբ նեստորական պատրիարք Մակիկի մահից հետո 1266 թ. Բաղդադում նրա տեղը զբաղեցրեց Մար-Դենհան, հակոբիկյան և քաղկեդոնական (մելքիտական) հոգևորականությունն անցան նրա ենթակայության տակ: Նա իրավասու էր որոշելու հակոբիկյանների և քաղկեդոնականների դատական գործերը (խնդրի վերաբերյալ գրականությունը հղել է Դներիան, նշվ. աշխ., էջ 403-404): Հավանաբար այս իրադարձության հետ է առնչվում ԺԳ դարում Խորեզմի քրիստոնյաների՝ Աստիոքի պատրիարքին ենթարկվելը. կանխատեսելով հզորացող նեստորականությունից իրենց դավանանքին սպառնացող վտանգը, հնարավոր է, որ նրանց մի մասն ապաստան փնտրեք նույնադավան մետրոպոլիտության հետ ավելի սերտ միության մեջ: Խորեզմի քրիստոնյաների՝ Աստիոքի պատրիարքին ենթարկվելը հստակորեն մատնանշում է, ինչպես նկատել է Վ. Վ. Բարտալդը (նշվ. աշխ., էջ 19), որ նրանք քաղկեդոնականներ կամ հակոբիկյաններ էին: Պրոֆ. Բարտոլդի ներկայացրած հետաքրքրական մանրամասնումը (նույն տեղում) Բիրունիի աշխատությունից, թերևս նույնպես խոսում է Խորեզմի քրիստոնյաների քաղկեդոնական, ընդ որում հայ-վրացական ուղղության քաղկեդոնական լինելու մասին: Մատնանշելով, որ պրոֆ. Իսվոլսոնը «ենթադրում է այստեղ (օղուզների միջավայրում) նաև այլադավան քրիստոնյաների մասնակցությունը.

բաց՝ նեստորականներից», Վ. Վ. Բարտոլդը գրում է. «Եվ իսկապես, օղուզների միջավայր կարող էին թափանցել բյուզանդական միսիոներները, որոնք, ինչպես հայտնի է, գործում էին իրենց արևմտյան հարևանների՝ խազարների մեջ»: Բացի այդ պետք է հաշվի առնել օղուզների՝ Խորեզմի մոտ լինելը, որտեղ նույնպես ապրում էին ոչ նեստորական քրիստոնյաներ: Մայիսի 4-ին, ըստ Բիրունիի, Խորեզմի քրիստոնյաները, նշում էին «վարդերի տոնը» (եկեղեցի էին բերում թարմ վարդեր), ավանդության համաձայն այդ օրը Աստվածամայրը վարդ է նվիրել Հովհաննես Մկրտչի մորը»:

Հայ և վրաց վաղ եկեղեցիներում «վարդերի տոնի» գոյության վերաբերյալ կան որոշ փաստեր, [54] հատկապես այն ավանդության մասին, որը վկայակոչում է պրոֆեսոր Բարտոլդը Բիրունիի աշխատությունից¹⁰⁷:

¹⁰⁷ Անդեանյական եկեղեցում հայտնի է «ռոդիանոս»-ը (ροδιανός), այսինքն՝ «վարդերի փառատոն» («rosalia») (տոնինների մոտ), բայց այդպես անվանվում է նաև Հովհաննես Ստովածարանի տոնը. Բարսեղի Տոնացույցի համաձայն «այն գերեզմանը, որում թաղված է մեծ առաքյալ և ավետարանիչ Հովհաննեսը, մինչև վերափոխումը, ամեն տարի մայիս ամսվա 8-ին Սուրբ Հոգու կամբով հանկարծակի դուրս է հորպում և տարածում սուրբ վոշի (κόινον), որը տեղաբնիկներն (Եփեսասում) անվանում են մանանոս»: «Ոմանք կարծում են, որ մանանոս կոչվել է «ռոդիա» (ροδιε՛) վարդի յուղ, վարդի փոշի): Բայց այլոք ... առավել իրավացիորեն ընկալում էին տոնավաճառությունը գարնանային վարդերի օգտագործմամբ, ինչպես մեզ մոտ ծաղիկների կիրառումը Սբ. Երրորդության («Հոգևաբանություն» - Մ. Ե.) օրը, քանզի այդ տոնի՝ «ռոդիանոս» անվանումն օգտագործվում է նաև գարնան շրջանում նշվող այլ սրբերի տոների համար», օրինակ՝ մայիսի 9-ը Տիմոթևոս սրտորիտրի պարագայում, մայիսի 25-ը՝ Թևոդորոսի (Αρχιεπ. Σεργий, Полный Месяселос Востока, II, стр. 171-172): Հայ նախադասության մեջ, Ն. Մառք խոսելով Հովհաննես ավետարանչի վերափոխման կամ փոփոխման մասին, օգտագործում է «преложение» բառը, որն այսօր ռուսերենում հազվադեպ օգտագործվող աստվածաբանական կարգ է (ևունարեն μετοβολή, որի հայերեն նամարձկներն են՝ «փոփոխում», «փոխում», «շարժում», «փոխադրություն»): Այս բառի նախնական և երևանական իմաստն է հարդրության խորհրդի ընդմանակ գինու և հացի փոխակերպումը («փոխում») Զրիստոսի տրյան ու մարմնի: Մակարյն այն կարող է կիրառվել նաև, ինչպես ավելի դեպքում. Աստծո մոտ փոխադրված, վերափոխված, համարձակված ընտրյալ մարդկանց արտոմանը նկարագրելիս, ինչպես օրինակ դա կատարվեց Սուրբ մարգարեներ Եղիայի («Ես վերացաւ Եղիս շարժմամբ յերկինս» Դ Թագ. Բ 11) և Ենովթի («...զի փոխնաց զնո Աստուած» Ծննդ. Ե 24) հետ, որոնք, ի տարբերություն երկրային կյանքում մահ ճաշակված և գերեզման դրված Հովհաննես ավետարանչի, ողջ-ողջ նրկինք վերացան: Տերն այնքան սիրեց նրանց բոլորին, որ մարմնով Իր մոտ տարավ - Մ Ե.):

Նշված եկեղեցիներում «վարդերի տոներ» ոչ միայն գոյություն ունեն, այլև մեծ ժողովրդականություն էր վայելում: Վրացիներն այն անվանում էին *զահլոժա՝ «վարդոբա»*¹⁰⁸: Նրանք ունեին նաև այս տոնի անվամբ կոչված ամիս՝ *զահլոժոճոճ-տոտլի՝ վարդոբխաթոնէյ*, ինչպես ներկայումս կան ամասնուններ ըստ տոների, օրինակ՝ *մարխոբխաթոնէյ* (Յահոժոճոճտոտլի՝ «օգոստոս»), *գիրոգոբխաթոնէյ* (Ճահոժոճոճտոտլի՝ «նոյեմբեր»): Բառարանները «վարդոբխաթոնէյ»-ը մեկնաբանում են որպես «մայիս»: Կարելի է, իհարկե, վիճարկել, թե հնում Վրաստանում, ինչպես նաև Հայաստանում, գործում էր շարժական տոմար: Եվ իսկապես, հանդիպում են վկայություններ, առ այն, որ «վարդոբխաթոնէյ»-ը միշտ չէ, որ հեշտորեն կարելի է նույնացնել ներկա մայիս ամսվա հետ: Օրինակ՝ հին վրացական «Վարք սրբոց» ժողովածուում, որը կրում է հայկականի ազդեցության հետքեր, «վարդերի տոնի» մասին հիշատակվում է դեկտեմբերի 28-ի ընթերցումից առաջ դրված հավելման մեջ (Март Н., Агиограф. материалы по грузинским рукописям Ивсра, I, Зап. Вост. Отд. Имп. Русск. Археол. общ., XIII, стр. 49): Այս ժողովածուում դեկտեմբերի 28-ի տակ դրված է «Պետրոսի նահատակությունը», սակայն ակնհայտորեն գրչին արդեն հայտնի էր Պետրոսի և Պողոսի տոնի՝ հունիսի 29-ին նշելը, և այդ հանգամանքը նրան դրդել է կատարել հետևյալ հավելումը. «Հոռմում (նահատակված) Սուրբ Պետրոս և Պողոս առաքյալների հիշատակը (տոնվում է) «վարդերի տոնից» 8 օր առաջ»: Այս բնագրի համաձայն՝ «վարդերի տոնն» ընկնում է հուլիսի 7-ին, ինչպես նաև Հովհաննեսի «Նոմոկանոն»-ի վրացերեն թարգմանության մեջ (А. С. Хаханов, 1902, стр. 66), որտեղ հիշատակվում է երկու պահքերի մա-

¹⁰⁸ «Վարդի»՝ վարդն է, իսկ «օբա»-ն՝ հիմնականում գոյականացված բայերով պայուս-հայտված, վերագրված նախադրությունների, ինչպես նաև տոների անվանումների ամսանց է, օրինակ «մարխոբա»՝ Սուրբ Մարխարմի տոնը (Ննջումն Սատվածամար), «գիրոգոբա»՝ Սուրբ Գևորգի տոնը և այլն:

սին՝ «Քրիստոսի ծննդյան և սուրբ առաքյալների պահքը, որը վրացիներն անվանում են [55] «վարդերի տոնի» պահք»¹⁰⁹: Այս բնագրի համաձայն «վարդերի տոնը» պետք է լիներ հունիսին, երբ սկսվում է «առաքյալների պահքը». կամ Պետրոսի պահքը¹¹⁰: Արդյոք վրացիների մոտ «վարդերի տոնի» պահքը «առաքյալների պահքից» առանձնանում էր միշտ միայն անվանումով, թե բուն նշանակությամբ. այսինքն՝ արդյոք այստեղ տեղական եկեղեցական պահքի անվանումը հարմարեցված չէ որևէ այլ պահքի: Բանն այն է, որ վրացական «վարդերի տոնի» պահքի անվանումը համընկնում է հայկական «վարդերի տոնի» պահքի հետ կամ հայտնի հայկական տոնի՝ «Վարդավառ»-ի հետ¹¹¹: Ճիշտ է Հայոց եկեղեցում Վարդավառն ունի Պայծառակերպության տոնի խորհուրդը, սակայն ակնհայտ է, որ այստեղ նույնպես ունենք տեղական տոնական անվան հարմարեցում մեկ այլ տոնի հետ: Հենց սա էլ Վ. Վ. Բոլոտովի՝ Պայծառակերպության տոնի հայկական ծագման վերաբերյալ վարկածի ամենախոցելի կետն է: Այս տոնն Արևելյան ընդհանրական¹¹² եկեղեցում ընդհանուր է դառնում միայն Ը դարից սկսած¹¹³: *Պայծառակերպություն* կամ *Այլա-*

¹⁰⁹ Ա. Ս. Խախաուրի ճշգրիտ չէ թարգմանում. «Քրիստոսի ծննդյան և սուրբ առաքյալների [ամյար], որը վրացիներն անվանում են վարդերի ամիս»: Ընտրում ամսվա մասին խոսք չկա:

¹¹⁰ Մեզ զեմնում այս ամսամասնուտի շարաթարախքը կոչվում Եղիսիսն, որը, ինչպես և այլ եկեղեցիներում, սկսվում է *Տոգեզարտյան* կիրակիի հաջորդ օրը - Մ. Ե.}:

¹¹¹ Եզրի, որում ամեն դեպքում առկա է «վարդ»-ը, տարբեր մեկնաբանությունների վերաբերյալ տե՛ս Վ. Վ. Բոլոտով, նշվ. աշխ., էջ 619, նշ. 56:

¹¹² Ղուսիքենում զղտագործված է «каatholicескои» քառը, որի իմաստն է կա՛մ «կաթոլիկ», կա՛մ «ընդհանրական». երկուսն էլ անհասկանալի են այս համատեքստում. առաջինը՝ որովհետև խոսքն արևելյան եկեղեցիների. մասնաժողովրդին կախվական. իրարությունների մասին է, իսկ երկրորդը՝ «Արևելյան ընդհանրական եկեղեցում» արտահայտությունը ևս ինչ-որ առումով անհերթելի է. մենք նախընտրում ենք երկրորդ տարբերակը - Մ. Ե.):

¹¹³ Առնետարակ, Քրիստոնեական եկեղեցում Պայծառակերպություն տոնի ամսապայթան մասին թի՛ թև շատ վաղերակյան վկայությունների վերաբերյալ են: միայն Ե դարի կեսին (Архисп. Сергий, Полный Месясечеслов Востока. 1961, II, стр. 313): Այդ իսկ պատճառով անկիմն է հայկական ավանդությունն այն մասին, թև իբր Գրիգոր Լուսավորիչը Դ դարում հերձանասելան Վարդավառը փոխարինեց քրիստոնեական

կերպութիւն անվանումը հավանաբար հունաբանների կողմից ստեղծված նորաբանություն է, ովքեր էլ, պետք է կարծել, կարող էին հաստատել տոնը՝ հեթանոսական տարրերով հագեցած տեղական եկեղեցական տոնը փոխարինելու նպատակով: Այն հանգամանքը, որ ըստ Վ. Վ. Բոլոտովի և հայկական ավանդության համաձայն տոնի հեթանոսական նախատիպը գուտ հայկական է, իսկ ըստ Պ. Կարողեանի՝ բացառապես կապադովկիական (Պ. Կարոլիճի, Γ.σοςάριον συγκριτικὸν ἑλληνοκαπαδοκικῶν λέξεων, Ջյուրուխա, 1885, էջ 73, հջորդ.)՝ այս պահին մեզ չի հետաքրքրում: Կարևոր է հայ և վրաց վաղ եկեղեցիներում տեղական «վարդերի տոնի» գոյության բացահայտվող փաստը (հայ. «Վարդավառ», վրաց. «Վարդոբա»), որն ավելի ուշ Հայ ազգային եկեղեցում նույնացվել է Պայծառակերպության |*տոնի| հետ: Ներկայումս կապադովկիացիների կենսունակ ավանդույթներում, անկախ այն բանից, խոսում են նրանք հունարեն, թե թուրքերեն, մինչ օրս տոնվում է Βαρτουβάρ ազգային տոնը, [56] այսինքն՝ նույն Վարդավառը: Այն տոնվում է Ջատկից հետո 6-րդ կիրակին, և տոնակատարության մանրամասները շատ հարցերում կրկնում են հունիսի 24-ին տոնվող «այլ հույների» կողմից Հովհաննես Մկրտչին նվիրված ազգային տոնը (Պ. Կարոլիճի, նշվ. աշխ., էջ 72): Տոնակատարության հիմնական մասը գուշակությունն է: Հայերն ունեն նույն ծիսակարգը. նրանք սովորաբար այս տոնակատարություն-գուշակությունը կատարում են Համբարձման տոնին, ավելի ստույգ՝ Համբարձման նախօրեին (Պ. Կարոլիճի, նշվ. աշխ., էջ 73, Ազգագրական Հանդես, 1898, III, էջ 258-259, 1900, VI, էջ 370-371, 1903, X, էջ 266), բայց այս նույն տոնակատարությունը երբեմն անցկացվում է Վարդավառին (Ազգ. Հանդ., 1903, X, էջ 268): Հայկական այս տոնի և

Պայծառակերպության տոնով՝ տրանսլանսլով նույն անվանումը (Gius. Cappellèti. L'Armenia, III, p. 18):

Հովհաննես Մկրտչի հիշատակի՝ հնում ունեցած կապի մասին հստակ վկայում է այն, որ մինչև հիմա Վարդավառը կապված է ամենահեռավոր վայրերից դեպի Մշո Ս. Կարապետի վանք համաժողովրդական հայկական ուխտագնացության հետ: Կոստանդնուպոլսում ևս Վարդավառի տոնին հայերը «մեծ բազմությամբ հավաքվում են Սուրբ Կարապետի վանքում, որտեղ այդ օրն իրականացվում է աղավինների մեծ վաճառք. յուրաքանչյուրը գնում է հնարավորինս շատ և բաց է թողնում՝ չգիտակցելով այդ սովորույթի նշանակությունը: Այս ավանդույթի պատճառով թուրքերն այդ օրն անվանում են «աղավինների տոնի օր» (Cappelletti, նշվ. աշխ., III, էջ 19): Տարնում, ինչպես նաև Հայաստանի այլ շրջաններում (Cappelletti, նշվ. աշխ., էջ 18, Ազգ. Հանդ., 1897, III, էջ 277) բացի նրանից, որ աղավիններ են բաց թողնում, միմյանց վրա ջուր են ցողում. եկեղեցի են տանում վարդերի փնջեր և դնում Խորանի ստջն: Հայերն ունեն մի մեկնաբանություն, ըստ որի նախկինում տոնը նվիրված էր ջրհեղեղի հիշատակին, և որ աղավինն ու ջուրը խորհրդանշում են ջրհեղեղը և աղավնու՝ դեպի Նոյի տապան վերադարձը: Այս մեկնաբանության մեջ կարևորն այն է, որ նրա հիմքում ընկած է Վարդավառի վաղ եկեղեցու կողմից հարմարեցված լինելու մասին մեկ այլ միտք. որը տարբերվում է Պայծառակերպության հետ նույնացնելուց: Եկեղեցու կողմից վաղ շրջանում արված այս 'հարմարեցման' կապը Հովհաննես Կարապետի հիշատակի հետ կասկածի տեղիք չի տալիս՝ հաշվի առնելով այդ օրվա համաժողովրդական ուխտագնացությունը դեպի Սուրբ Կարապետի տաճար: Ջուրը և աղավինն կարող են խորհրդանշել հենց Հովհաննես Մկրտչին: Մասնավորապես աղավինների բաց թողնելը կարող է մատնանշել հրեշտակի կողմից Մարիամին անպտուղ եղիսաբեթի հղիության մասին ավետելը: Այս առումով հետաքրքրական է ուսաների՝ Ավետման տոնին թռչուններ բաց թողնե-

լու, մեր կարծիքով զուգահեռ սովորույթը: Մեր հարցի համար առավել հետաքրքրական և կարևոր է այն, որ Ջավախքում կամ Ջավախեթիում հայերի շրջանում ընդունված սովորույթի համաձայն անպտղություն ունեցողներն այս երկու՝ [57] Ավետման և Վարդավառի տոներին ուխտագնացություն են կատարում դեպի տեղական սրբատեղին՝ Սուրբ Գևորգի տաճար (Ազգ. Հանդ., 1896, I, էջ 372): Մի խոսքով, առկա՝ դեռևս միայն հայկական նյութը մեծապես նպաստում է, որպեսզի հայոց մոտ Վարդավառն ընկալվի որպես Հովհաննես Մկրտչի մորը՝ Եղիսաբեթին հղիանալու առթիվ ողջագուրվող Աստվածամոր տոն: Ամենայն հավանականությամբ հենց այդպիսին էր նաև վրացական Վարդոբա տոնը: Այն անցկացվում էր, ինչպես տեսանք մի շարք վրացական բնագրերից, թե՛ հունիսին և թե՛ հուլիսին, շարժական հայկական Վարդավառին համապատասխան, սակայն ըստ անշարժ օրացույցի՝ մայիս ամսին, ինչպես Խորեզմի քրիստոնյաների տոնը: Միևայական վանքի վրացական երգարաններում մեկ-երկու անգամ ինձ հանդիպել է նաև այս տոնի օրվա մատնանշումը հետևյալ ծանուցմամբ. «Աստվածամոր Վարդերի տոն (Վարդոբա)՝ մայիսի 15»: Հայոց վաղ եկեղեցում Հովհաննես Մկրտչի տոնը, ըստ Ազաթանգեղոսի (Тифл. изд., стр. 482), տոնվում էր տարեսկզբին, այսինքն՝ նավասարդի մեկին, ինչն անշարժ տոմարով համապատասխանում է օգոստոսի 11-ին: Դա Հովհաննես Մկրտչի մատունքների հիշատակի տոնն էր, սակայն կարող էր իր մեջ ներառել նաև նրա կյանքի տարբեր պահերի հիշատակը, այդ թվում՝ նրա ծնունդը¹¹⁴: Այսպիսով, վրացական «Աստվածամոր վարդերի տոն»-ը (ՅՅԻԿԻԿԻՅԵ

¹¹⁴ Հունիսի 24-ը որպես Հովհաննեսի ծննդյան օր չի ընդունվում հայ եկեղեցու կողմից, և ընդհանրապես, հենց Վ. Վ. Գուրտովի ուսումնասիրության համաձայն (նշվ. աշխ., էջ 608) այն ձևավորվել է Արևմուտքում: Հայկական ազգային եկեղեցում ներկայումս գործող օրացույցներում Հովհաննեսի ծնունդը նախատեսվում է 15-ին, հմարտիս. հունվարի 14-ին, ինչը կարելի է բացատրել հայկական առաջին ամսվա՝ նավասարդի հունվար ամսին փոխադրումով՝ որպես տարվա սկիզբ: Հովհաննես Մկրտչի եիշտուական այդ օրացույցներում նշվում է նաև սկիզբների սկզբին:

ճԹոտևո-ձժոժլոտևա) կատարվում էր մայիսի 15-ին, այսինքն Հովհաննես Մկրտչի հիշատակի օրից 3 ամիս առաջ, ուստի և դրա նմանությամբ հայկական եկեղեցական Վարդավառը կարող է ընդունվել որպես այն օրը, երբ Մարիամն իմացավ հրեշտակից. որ իր ազգական Եղիսաբեթը, ով անպտուղ էր հորջորջվում, ծեր հասակում հղիացել է որդով՝ Հովհաննես Մկրտչով, և արդեն վեցերորդ ամիսն էր, և սա շտապեց լեռնային երկիր՝ Հուդայի քաղաքը, մտավ Զաքարիայի տուն և ողջագուրվեց Եղիսաբեթի հետ (Ղուկ. Ա 36–40):

Ամեն դեպքում ակնհայտ է, որ ԺԳ դարի երկրորդ կեսին քաղկեդոնականները կորցնում են մեզ հետաքրքրող տարածքում իրենց ունեցած անկախ դիրքը, դատելով աղբյուրներից, ի դեպ՝ նեստորական: Մական նեստորականներին վստահելով՝ մենք պետք է հայտարարենք, [58] որ մինչև 1266 թ. քաղկեդոնականներն այնտեղ ունեին զգալի անկախություն:

Մեկ այլ համոզիչ առարկություն կա ընդդեմ այն բանի, որ մոնղոլական շրջանի նեստորականները եղել են Միջին Ասիայի հին քրիստոնյաների գործունեության ժառանգներն ու իրավահաջորդները: Հավանաբար նախկին քրիստոնյաների մշակութային գործունեության ապացույց են հանդիսանում հին թյուրքական՝ օրխունական և ույղուրական գրերը: Ույղուրականը, անկասկած, ընդհանրություններ ունի ասորերենի հետ, սակայն դժվար է ընդունել, որ դա նեստորականների ձեռքի գործն է: Տառերի բաղդատումը նույնպես ույղուրական և նեստորական գրերի միջև մասնավոր ընդհանրություն չի հաստատում¹¹⁵: Մյուս կողմից, եթե մոնղոլական դարաշրջանի նեստորականները լինեին տեղի քրիստոնյաների հին ավանդների պա-

¹¹⁵ « Wir können... mit Fug und Recht behaupten, dass jenes syrisch-nestorianische Alphabet, nach welchem die Schrift der Mongolen gebildet wurde, bisheutzutage noch nicht gefunden, respective nachgewiesen worden ist » (Fr. Müller, Zur Frage über den Ursprung der uigurisch-mongolisch-mandžuischen Schrift, Wiener Zeitung für d. Kunde des Morgenlandes, 1891, V, S. 184).

հապանները, ապա նույնադավան թյուրքերի լեզվի համար տապա-
նաքարերի արձանագրություններում կօգտագործեին ավելի կատար-
յալ ուղղության գրերը: Այդպիսին է նաև Վ. Վ. Ռադլովի՝ անձամբ
ինձ հայտնած կարծիքը: Նախ և առաջ, դրանց նեստորական ծագու-
մը կասկածելի է, ինչպես անձնական մի գրույցի ժամանակ իրավամբ
նկատել է Վ. Վ. Բարտոլդը, նշելով, որ ուղղության գիրն իրենից
ներկայացնում է կատարելագործված մի համակարգ, որում ձայնա-
վորները տողի վրա արտահայտվում են որոշակի նշաններով: Վեր-
ջին հանգամանքը հեշտությամբ կհաստատվի, եթե հաջողվի վերա-
կանգնել, որ միսիոներական գործունեության մեջ առհասարակ կամ
Միջին Ասիայի հայտնի շրջանում նեստորականներին նախորդել են
քաղկեդոնականները՝ ասորիներ և հայեր: Եթե առաջինները կարող
էին տալ այբուբենը, որն, ամենայն հավանականությամբ, տարբեր-
վում է նեստորականից, ապա երկրորդները՝ հայ քաղկեդոնականնե-
րը, կարող էին հուշել կատարելագործման միտքը՝ ներմուծել ձայնա-
վորների նշանները, որովհետև հայ քաղկեդոնականները, որքան էլ
որ շուտ հայտնված լինեին այնտեղ, արդեն ունեին կատարյալ՝ իր
մեջ ձայնավորներ ընդգրկող գիր:

Այսպիսով, հայերը և ասորիները, միմյանց հետ սերտ հարաբե-
րություններ ունենալով Միջին Ասիայում մոնղոլների օրոք, կարող
էին լինել ուղղափառ քաղկեդոնականների իրավահաջորիւները, գո-
նե այն միջազեռքյան ուղղափառ եկեղեցու ժառանգները, որի ան-
դամները հայտնի պարտությունից հետո, Նիկոն Սկեռնցու վկայու-
թյամբ, ցրվեցին տարբեր երկրներ: Իսկ դա իր հերթին մեզ կօգնե
[59] բացատրել մոնղոլների շրջանում «արքաուն» տերմինի ի հայտ
գալը՝ որպես քրիստոնյաների անվանում:

Այն կարող էր օգտակար լինել նաև, եթե նախապատմությունը
տրվեր նրա՝ *ἄρχων*-ից ծագմանը: Այս ստուգաբանությունն վրա Արևել-

յան բաժանմունքի նոյեմբերի 25-ի (1904) նիստի ընթացքում իմ ուշադրությունը հրավիրեց Վ. Դ. Սմիրնովը:

1897 թ. Փարիզում՝ Արևելագետների կոնգրեսում (*Actes du XI-me congrès etc., III-e sect., 1899, p. 156-157* = առանձնատիպ, էջ 14-15), կարդացած «*Les vers dits «Seldjouk» et le christianisme turc*» խորագրով գեկույցում պրոֆ. Սմիրնովը «ախունդ» կամ «ախուն» անվանումը, որով Պարսկաստանում և Միջին Ասիայում կոչում էին ուսուցչին, աստվածաբան գիտնականին, մուսուլմանների մոլլային, բխեցնում է հունարեն *ἄρχων* բառից (այս միտքը հետագայում առանց աղբյուրի մատնանշման կրկնել է Շառլ-Օդ Բոնեն՝ *Journ. As., 1900, XV, p. 588*): Հսկյունաբանորեն սա հնարավոր է, սակայն հայտնի չէ, թե որքանով այն պատմական հիմք ունի՝ կապված քրիստոնյա գնոստիկների կողմից «*ἄρχων*»-ի («պետ», «առաջնորդ» – Մ. Շ.) գործածման հետ, ինչպես ենթադրում է պրոֆ. Սմիրնովը: Իսկ մեզ համար էլ ավելի անհասկանալի է, թե ինչպես գնոստիկյան *ἄρχων* տերմինը՝ էոնի¹¹⁶ անվանումը, կարող էր Միջին Ասիայում ստանալ «արքաուն» ձևը և նշանակեր քրիստոնյա¹¹⁷: Եվ ո՛ւմ միջոցով: Ենթադրվում է՝ [60] մա-

¹¹⁶ {Էոնները գնոստիկյան ուսմունքի համաձայն «աստվածային էակներ» էին – Մ. Շ.):

¹¹⁷ Պրոֆ. Սմիրնովը «Արզոն» խորհրդավոր անվանման մեջ կալված է տեսնել «*ἄρχων*»-ը, որով մոնղոլները կոչել են նևստորակառն հերևտիկոսությանը եևտևոդ քրիստոնյաներին, ըստ որում, երկում է *Revue de l'Orient*-ում [G. Pautier, *Le pays de Tanduq et les descendants du prêtre Jean, 1862, p. 307-310*], լույս տևսած եոդվածը: Պոտինն՝ այդ եոդվածի հեղինակը, կրակարում սխտվել է այն կարգում, որ «արքաուն»-ը, որով մոնղոլներն անվանում էին քրիստոնյաներին, այլ ոչ թև բացառուկն նևստորակառններին, նույնացնում է «արզոն»-ի եևտ: Վերջինս եայտնի է Մարկո Պոլոյի ոչ եստակ մի ետորդումից (թարգմ. Ի. Ի. Մինլակի, Վ. Վ. Էտրտոյդի խմբագրույթյամբ, Մ. Պետ., էջ 97), որտեղ այն հենց ճանաչարեոյդի կողմից բացատրվում է որպես «խառնորդ» (H. Cordier, *The Book of Ser Marco Polo, I, p. 290-291*), ընդ որում հեթանոսների և Մոտամնոյին երկրազոդների խառնորդ (H. Cordier, նշվ. աշխ., էջ 284. And there is also here a class of people called *Argons*, which is as much as to say in French *Guasml*, or in other words sprung from different races: to wit, of the race of the idolaters of Tanduq and of that of the worshippers of Mahomet): Կորդիեն մատնանշում է նաև անրկայումս նույն իմաստով այդ բառի կիրառումն այդ տարածքներում (նշվ. աշխ., էջ 290, 291-292): Հնչյունալին առումով նույնպես եիմբ չկա «պլզոն»-ը «արքաուն»-ի եևտ նույնացնելու կամար, որում «առ»-ի երկնչյունալին տրտուսանույթյունը, եմրոս. «ևտ», կա ինչոկն կուերենում («արքաուն» կամարոյս. «արքայուն» կամ «արքավուն»), այնպես էլ արտ-

նիքեականների միջոցով, սակայն նրանց համար «արխոններ»-ը մշտապես համարվել են չար էակներ (Flugel, Mani, seine Lehre և այլն, էջ 242): Ի դեպ, թե՛ մանիքեականության և թե՛ գնոստիկության մեջ հայերն աշխույժ մասնակցություն են ցուցաբերել, և պարզելու համար այն ուղին, որով հունական ծագման գնոստիկյան եզրը կարող էր թափանցել Արևելք, պետք է ուշադրություն դարձնել Հայաստանի վրա: Է դարում Հայաստանում սկիզբ է առնում պավլիկյան շարժումը՝ մանիքեականությունից սերված, որն անցնելով ողջ արևմտյան եվրոպական աշխարհը, թափանցեց նախ և առաջ Բուլղարիա: Մեր հարցի համար առավել հետաքրքրական կարող է լինել գնոստիկյան մեկ այլ ուսմունք՝ արխոնտիկների հերետիկոսությունը: Ուսմունքը գոյություն է ունեցել Դ դարում: Ոմանք այն համարում են օֆիտների մի ճյուղը, որը թափանցել է դեպի Հեռավոր արևելք՝ Հնդկաստան: «Արխոնտիկներ»-ն իրենց մականունն ստացել են այն պատճառով, որ նրանք գնոստիկ էակներին անվանում էին արխոններ, որոնք նրանց ուսմունքի համաձայն, ղեկավարում էին տարբեր երկինքները: Հենց Դ դարում այս ուսմունքը ներթափանցեց Մեծ և Փոքր Հայք: Այս ուսմունքի մոլեռանդ քարոզողներից մեկը՝ Եվտակտը, ծագումով Սատաղից (Ճորոխի վերին մասում) էր՝ Փոքր Հայքից: Այս կրոնական ուսմունքը միավորում էր հայերին և ասորիներին, սակայն Պաղես-

բերեն տառադարձության մեջ երկար ծայնավորներ՝ ա և ու (𐭠𐭮𐭥 արքաուն), ինչպես նաև մոնղոլներնում (երխոնն): Նախքան կորդինեն, դեռևս Շաղ-Օղ Բոնեն անհրաժեշտ էր համարում ընդունել «արզոն» բառի յուրահատուկ ծագումը (Journ. As., XV, p. 588): Նկատի ունենալով այս ամենը անհրաժեշտ էր վարուց վերջնականապես համաձայնել վարդապետ Պալադիայի աշարույջ կարծիքի հետ, որը վկայակոչված է նաև ֆրանսիացի աշխարհագրագետ կորդինի կողմից անգլերեն տեքստում (Elucidations of Marco Polo's in North China drawn from Chinese sources, 1875) «Argons»: Չի կարելի կարծել, որ Մարկո Պոլոն գործածել է մոնղոլական «Էրբոնն»-ը, որով մոնղոլներն անվանում էին քրիստոնյաներին, և այդ անվան տակ հասկացել է ենթադասների և մուսուլմանների խառնուրդ, նա քաջաձանդո էր Չինաստանի քրիստոնյաներին և ինտրոկն չէր կարող չիմանալ մոնղոլների մեջ տարածված նրանց անվանումը» (Комментарий архимандрита Палладия Кафарова на Путешествие Марко Поло в Северному Китаю с предисловием Н. И. Веселовского, СПб., 1902, стр. 27).

տինի ասորիների հետ, որտեղ և այն ծագել է (Епифаний. Против ересей, XL, стр. 291–299): Այդ գնոստիկները, սակայն, կոչվում էին ոչ թե արխոններ, այլ արխոնտիկներ, և հայտնի չէ, թե արդյոք այդպես էին անվանվում նրանց աշխարհիկ ղեկավարները, գլուխները:

Առավել հետևողական և համոզիչ է թվում Դներիայի տեսակետը: Մի կողմից նա փորձում է, ինչպես տեսանք, հաստատել, որ արքսոն նշանակում է «քրիստոնյա հոգևորական», իսկ նյուս կողմից հունարեն բնագրերում փնտրում է «*ἄρχων*» բառի համար համապատասխան իմաստ, սակայն առանց որևէ արդյունքի¹¹⁸: Բացի այդ, Դներիան [61] ամենևին չի պատասխանում այն հարցին, թե ինչ ճանապարհով հունարեն *ἄρχων*-ը, որի իմաստը հունական եկեղեցական տերմինաբանության մեջ դեռևս պարզաբանված չէ, մոնոլոների մեջ դաբձավ քրիստոնյաների կամ, ինչպես փորձում է հաստատել (էջ 397, ծնթ. 2), քրիստոնյա հոգևորականների անվանում, ընդ որում, այն դարձել է «արքսոն» կամ նույնիսկ «արկսոն»: Բավարար չէ միայն եևթադրել, որ մոնոլոները փոխառել են այն հույներից կամ հունադավան քրիստոնյաներից (Ուշվ. աշխ., էջ 436–437): Զգալով

¹¹⁸ Այն, որ *ἄρχων* բառը կրթման վերաբերել է եպիսկոպոսներին, քաջ եպյունի է տեսնոց Մոփոլիկեսի բառարանի, որին քննախնայարար եղում է Դներիան (էջ 438): Դեռևս հյուսիսնեպո եպիսկոպոսին անվանում է *πίστας*, *ἄρχων* էν τῆ ἐκκλησίᾳ (սուլապլ' նկեղեցու առաջնորդը) (κατὰ Κέλσον, VIII=Ընդդիմ կելասոս. գլխը Ը): Սրանից, սակայն, ամենևին չի կարելի եզրակացնել, որ այն անկախարար նշանակել է եպիսկոպոս: Ըստ գիտակցելով դա՝ Դներիան եւրոց է բարձրագնում, թե արդյոք *ἄρχων*-ը չէր նշանակում հատուկ պարտականություն ստանձնած «հոգևորական» կամ տաճարում հատուկ եկեղեցական արարողություն գլխավորող անձ: Այս առումով հազվապես կոչում է *Պաշտոնների բաշխման մասշտաբ* (Εὐλόγιον τὸ μέγα, Վենետիկ, 1854, էջ 682), որտեղ եկեղեցական պաշտոնները բաժանվում են *ὀφείκια*-ի {պարժամկատարներ} – Մ. Շ.: և *ἀρχονταξία*-ի {առաջնորդողներ} – Մ. Շ.: Տեսարար է, որ Դներիան իր տեսակետի հաստատման համար կառչեր նաև նրանից, որ *Մնացորդաց* գրքում (Բ Մնաց. ԼԵ 25) *ἄρχοντες* բառը, որը խոսեղեցական հայերենում փոխանցվել է որպես «վշխանք», իսկ [**Մնացորդաց* գրքի] հին հայերեն թարգմանություն մեջ թարգմանված է «երզիք» «երզիներ»: {Թերևս Ն. Մամն այստեղ «խոսեղեցական» ասելով նկատի ունի «աշխարհագրագ» եզրը: Տարի է նշել նաև, որ այստեղ սխալմունք չիա այն տոմսով, որ իրավաբանում *Մնացորդաց* գրքի դասական կայերենն ունի «վշխանք», իսկ որոշ արդի կայերեն (հիմնականում արևմտահայերեն) թարգմանություններում առկա են «երզիք» կամ «երզիներ» բառերը – Մ. Շ.):

մոնղոլական «արքաուն» եզրի և եկեղեցական իմաստ ունեցող հուսարեն *օրչօն*-ի միջև եղած կապի թույլ լինելը՝ Դևերիան փորձում է հիմնավորել այն տարբեր կողմնակի նկատառումներով, իբր այդպես կոչվում էին քրիստոնյա քահանաները կամ որովհետև նրանք իրենց հավատակիցների նկատմամբ որոշ աշխարհիկ իշխանություն ունեին (էջ 437–438), կամ էլ՝ որովհետև նրանք որպես «տիրոջ բժիշկներ» ազդեցություն էին ձեռք բերում (էջ 401, ծնթ. 3): Ավելի վճռական է Շառլ-Օդ Բոնենը (նշվ. աշխ., էջ 588)՝ ընդունելով արքաունի նույնացումը «*օրչօն*»-ի հետ՝ «այնպես, ինչպես սահմանում է պ-ն Դևերիան», նա հասկանում է այն որպես նեստորական հոգևորականների անվանում: Սակայն նեստորականներին այդ բառն ամենևին հայտնի չէ որպես հոգևորականների անվանում: Այն գոյություն ունի ասորերենում, բայց «իշխան», «ղեկավար» և այլ իմաստներով: Բացի այդ ասորերեն «արկունա» (ܐܪܟܘܢܐ) ընթերցումը համապատասխանում է «արկուն»-ին (ܐܪܟܘܢ), բայց ոչ «արքաուն»-ին¹¹⁹:

Բայց եթե Մոնղոլիայում և Չինաստանում «արքաուն»-ը «քրիստոնյա» իմաստն ստացել է միայն ավելի ուշ, իսկ սկզբնական շրջանում նշանակել է «իշխող դեմք», բնականաբար հոգևոր իմաստով, ապա նրա նույնացումը «*օրչօն*»-ի հետ կարելի է ընդունել «հոգևոր ուսուցիչ», «քահանա» նշանակությամբ՝ նաև հայկական նյութի հիման վրա: «*Արչօն*»-ը հայերենում հաճախ փոխանցվում է «պետ» բառով և հայերեն այս համարժեքն իրապես գործածվում է «ուսուցիչ», «գիտնական աստվածաբան» և այլ իմաստներով «վարդապետ» բարդ բառի մեջ: Նախկինում հայկական եկեղեցում վարդապետներն ունեցել են անկախ դիրք և մեծ ազդեցություն (Тексты и

¹¹⁹ Այսպեսինում նույնպես եահնդիսում է միայն ܐܪܟܘܢ «արկուն», այլ ոչ թե «արկաուն» ܐܪܟܘܢ ձևը, ինչպես օրինակ Գրիգոր Լուսավորչի վկայարանության մեջ (Март Н., Крещение Армян, грузин, абхазов и аланов св. Григорием, Зап. Вост. Стд., XVI, стр. 198), ինչպես նաև ܟܢܒ ܐܠܡܚܘܠ (Studia Sinaica, VIII, 2, 23, Կ 11, et pass.), որտեղ բարդ գործածվում է որպես Մատանայելի մակդիր:

разыскания по армяно-грузинской филологии, кн. V, стр. 34–36): Հայ եկեղեցու պատմությունը վկայում է [62] վարդապետների իրավունքների աստիճանաբար սահմանափակման մասին: Ամենայն հավանականությամբ վարդապետները հանդիսանում էին վաղ քրիստոնեական եկեղեցական համակարգի վերապրուկը: Այս դեպքում թերևս հենց «վարդապետ» բառը կարելի է ընդունել որպես հունարեն *ἀρχων* տերմինի ազգայնացված տարբերակը:

Հունարեն բառը կարող էր պահպանվել միայն հունասեր շրջանակներում, որոնք մեծավ մասամբ բաղկացած էին իմ կողմից խնդրո առարկա քաղկեդոնականներից: Այսպես կբացատրվեր նաև «արքաուն» ձևի ծագումը *ἀρχων*-ից հմպտսխ.՝ արքունից (հնում հունարեն «չ»-ն հայերենում տառադարձվում էր «ք» հնչյունով): Բանն այն է, որ «ա»-ն հայ հունաբանները տառադարձում էին երկու տառով «ով», օրինակ՝ *Θωμάς*-ը և *Ἰωσήφ*-ը հմպտսխ.՝ «Թովմաս»՝ կարդացվում է «Թոմաս», «Յովսէփ»՝ կարդացվում է «Յոսէփ»: Հետագայում «վ» տառի գոտ ուղղագրական նշանակությունը մոռացվեց և այն ոչ միայն գրում, այլև կարդում էին, ինչպես՝ «Թովմաս», «Յովսէփ» (այստեղից Հովսէփյան ազգանունը): Բացի այդ, հայերենում «օ» հնչյունը տառադարձվում էր նաև «աւ»-ով: Հենց հունաբանների կողմից կատարելագործված հայերենին բնորոշ այս երկբարբառի տառադարձման շնորհիվ էլ *ἀρχων*-ից կարող էր ծագել «արքովն» ձևը, հմպտսխ. «արքաուն», որից ստացվել է մոնղոլերեն «արքաուն»-ը:

Ինքնին հասկանալի է, որ նման բացատրության դեպքում պետք է ընդունել, որ այս բառն այդ երկրամասեր է թափանցել մոնղոլներից շատ առաջ, ովքեր, այդ դեպքում այն փոխառել են ուրիշներից, օրինակ ուրդուրներից, այլ ոչ թե ուղղակիորեն հայերից կամ ասորիներից:

Մյուս կողմից, բացառապես հիմնվելով ավելի ուշ շրջանի երևույթի՝ ասորա-հայկական քաղկեդոնականության վրա, մենք կարող ենք տալ մեկ այլ բացատրություն:

Ասորի քաղկեդոնականներն այդ ժամանակ կոչվում էին մելքիստներ: Մենք արդեն գիտենք վրաց կաթողիկոս Արսենիոսի վկայությունից, որ այդ եզրը հայտնի էր նաև Վրաստանում: Հայաստանում նույնպես առկա է այդ եզրի թարգմանությունը մի գրավոր հուշարձանում: Սուրբ հողում հայկական վանքերը նկարագրող Անաստաս վարդապետի ուշ շրջանի մի հավելման մեջ ասվում է («Բազմավէպ», 1882, էջ 26 = Archives de l'Orient Latin, 1884, p. 399 = Աստուածատուր Եպս. Տէր-Յովհաննէսեանց, Ժամանակագրական պատմութիւն Ա. Երուսաղէմի, հտ. Ա, 1890, էջ 96), որ հայ-քաղկեդոնականները զրկանքներ են կրել Սուրբ քաղաքում, և անգամ, մինչև Երուսաղէմում արաբների հայտնվելը, այստեղ թույլատրվել է ապրել միայն կայսերական դավանանքին հետևող քրիստոնյաներին («որք ողջ ունին գդաւանութիւն [63] թագաւորին»), այսինքն՝ մելքիստներին: Ասորերենում «մելքիտ» բառը (ܡܠܟܝܬܝܘܬܐ) հիմնականում նշանակում է թագավորական¹²⁰:

Դեռևս Լակրոզը «արքաուններ» բառը թարգմանում էր ուրպես «արքայականներ»: Այս բառը հավանաբար նույն իմաստով են հասկացել նաև Մխիթարյանները՝ *Հայկազեան Բառգրքում* բացատրելով որպես «թագաւորազն», այսինքն՝ թագավորական ծագում ունեցող: «Արքաուն»-ը հմպտսխ.՝ *արքայուն* կամ *արքաունն*, հայերենում իսկապես կարող է մեկնարանվել որպես *արքայական*, հմպտսխ.՝ *արքաների* իմաստով: *Արքա* բառը հայերենում նշանակում է «թագավոր»,

¹²⁰ Այս մեկնաբանությունը (տե՛ս Stephanus Borgia, De cruce Vaticana, 1779, p. 136, n. b) ընդունում է նաև Պ. Կ. Կոկովցովը, այս եւրոպի վերաբերյալ տե՛ս S. Նևայկինի «Ամմարական լեզուներ և ժողովուրդներ» աշխատասիրության ռուսերեն մշակման (ՄՅՍԿԻՄ, 1903, էջ 152) 205-րդ ծանոթադրություն համադրատախտան հատվածը:

իսկ *-ուն* հմպտսխ.՝ *-ունի* վերջածանցը ածականների և ազգանունների վերջավորություն է, ինչպես հունարենում *-ւոզ* կամ *-ւոզոս*: Եթե *արքունի* զուգահեռ ձևի մեջ հիմնական «ա» տառը սղվում է, ապա սա խոսակցական, համեմատաբար ավելի ուշ երևույթ է, դատելով այն փաստից, որ «արքա»-ից կազմված ավելի հին բառերում այլ վերջածանցներից առաջ նույն այդ «ա»-ն որպես կանոն պահպանվում է, օրինակ՝ արքայենի, հմպտսխ.՝ «արքանի»՝ «թագավորական», «արքայիկ», հմպտսխ.՝ «արքաիկ» - «василиск» («թագավորական օձ»), «արքայություն» հմպտսխ.՝ «արքաություն», «թագավորություն» և այլն: Մյուս կողմից՝ «արքաուն» ձևի մեջ երևում է միանգամայն օրինաչափ, պարզ երևույթ՝ արմատական «ի» տառի սղվելը («արքաունի», տե՛ս Н. Марр, Грам. древне-арм. языка, § 62, в, 1), շտապեմ ասել՝ եթե իհարկե այս բառն իսկապես հայերեն է:

Նախկինում «արքաուն» բառի համընկնումը հայերեն «արքաունի» թագավորական բառի հետ կարող էր թվալ միայն պատահական, ինչպես և նկատել է Բրոսսեն (*Hist. de la Sioumie par Stephanos Orbelian*, 1864, II, p. 230, n. 2):

Սակայն մեր ներկայիս մեկնաբանությամբ «արքաունի»՝ «թագավորական» բառը կարող է լինել հայերեն, որը հոմանիշ է «մելքիտ»-ին, այսինքն՝ «քաղկեդոնական»-ին: Այս դեպքում, պետք է, որ ընդունեինք, որ մոնղոլները, փոխառելով այդ բառն իրենց մեջ ապրող հայ-քաղկեդոնականներից, այնուհետև սկսել են այդպես կոչել առհասարակ բոլոր քրիստոնյաներին:

Որպեսզի ենթադրվող բացատրությունն առավել հավաստի լինի, ցանկալի կլիներ ունենալ փաստացի մի վկայություն, որը հաստատեր, թե այդ բառն իսկապես կիրառվել է հայերի մեջ: Սակայն հաշվի առնելով այն, որ ոչ միայն հայ-քաղկեդոնականների, այն էլ ասորամետ խմբի, ասորյա կյանքը, այլև ընդհանրապես նրանց մա-

սին հիշողությունը հնարավորինս ոչնչացվել կամ լավագույն դեպքում ստվերվել է, պետք է խոստովանել, որ նման ապացույց հնարավոր կլինե՞ր գտնել միայն երջանիկ պատահականությամբ: (64) Այնուամենայնիվ, ցանկալի վկայությունները կարծես թե գտնվել են, նախ և առաջ երկու վիմագիր արձանագրություններում:

Իրապես, հայկական մի գրությունից ինձ հայտնի է «արքայուն» բառի գործածության մի դեպք, որը պահպանել է Մուրավյովը¹²¹ ուսերեն թարգմանության մեջ (Грузия и Армения, СПб., 1848, II, стр. 275). «Ես՝ Բագրատս, Ջարուպա Արքայունովի որդին, կառուցեցի այս դարպասները Սուրբ Գրիգորի վանք մտնելու համար, ամին...»¹²²: Կարելի է ենթադրել, որ Սուրբ Գրիգոր անվամբ վանքը ճանապարհին կանգնեցված՝ դարպասներից այն կողմ գտնվող Տիգրան Հոնենցի կառուցած քաղկեդոնական տաճարն է (տե՛ս վերը, էջ [40]): Արդյոք պատահական է, որ քաղկեդոնական վանքի մուտքի համար դարպասներ կառուցող Բագրատը կոչվում է «արքայուն»:

Մյուս օրինակն առկա է Կարմիր վանք կոչվող բնակավայրում Ախուրյանի աջ ափին, Անիի մոտակայքում¹²³: Այստեղ՝ վանքի եկեղեցիներից մեկի ԺԳ դարի 70-ական թվականների հայերեն նվիրատվական արձանագրության մեջ հիշատակվում է «արքաուն Սարգիսը»։ Նա պետք է սպասավորեր տարին չորս օր: Հիմա դժվար է ասել,

¹²¹ {Անդրյեյ Նիկոլայի Մուրավյով, ավելի մանրամասն տե՛ս *Նկրածություն* – Մ. Ե.}:

¹²² Այս արձանագրության մասին այլևս ոչ որ չի հետզոդում, եսվամբար Մուրավյովի այցելությունից ետոտ այն ոչնչացել է: Պետք է կարծել, որ նա, ով ընթերցել է [Բագրատ-նագրությունը] ռուս ճանապարհորդի համար, շփոթել է «Ց» և «Յ» տառերը, ինչը շատ հավանական է, և այդ պատճառով էլ «Արքայունով»-ի փոխարեն Մուրավյովի գրքում կարդում ենք «Արքագունով»: Իր ներթին Ալիշանը (Շիրակ, էջ 59) «Արքագունով»-ը կարդացել է «Արագաճունի»: Գրոսսեն (Ruines d'Ani, I, p. 11) Մուրավյովի ընթերցածն ավելի ճիշտ է վերադասարկել Arcatzoun-ի, սակայն նետևյալ նկատումով: L'inscription, telle qu'on l'a dictée au voyageur, paraît fautive, car il n'existe aucun nom propre ni de famille, en arménien, semblable à ceux qu'il allègue»: Նույնիսկ մենք՝ զետոնականներս, սրտաբատ ենք որպես առասպել ընդունել այն, ինչը չգլտնեք կամ չենք եսակամում:

¹²³ Ալիշանը (էջ 170) շփոթում է Ախուրյանի աջ ափին գտնվող այդ Կարմիր վանքը ծալկոդմում՝ Անիից բովակում ետու գտնվող մեկ ուրիշի ետ:

թե արդյոք այդ վանքը «արքաունական» էր. այսինքն՝ ըստ առաջարկվող բացատրության՝ մելքիտական, հայ-քաղկեդոնական, թե՛ արձանագրությունը վկայում է հայկական ազգային եկեղեցու անդամների՝ իրենց մահացած քաղկեդոնական հարսագատի հանդեպ ունեցած հոգատարության մասին: Հայտնի է, որ այդ ժամանակաշրջանում եղել են դեպքեր, երբ նույնիսկ եղբայրները հետևում էին տարբեր դավանանքների: Այսպես՝ Թամարի թագավորության օրոք Երկայնաբազուկների (ՅՅՅՅՅՅՅՅՅ) հայկական իշխանական տնից Ջաբարեն հայկական ազգային եկեղեցու անդամ էր, իսկ Իվանեն՝ քաղկեդոնական, սակայն վրացամետ խմբի քաղկեդոնական: Իհարկե, նաև այստեղ «արքաուն»-ի մեկնաբանությունը «մելքիտ» իմաստով, այսինքն՝ ասորամետ խմբավորման քաղկեդոնական, լոկ ենթադրություն է. սակայն արձանագրության մեջ կա մի վերապահում. որը կարծես թե հաստատում է այս վարկածը: [65] 1892 թ. ամռանը ես տեղում ստուգել եմ այդ արձանագրությունը: Այն նվիրատվական մի գրություն է: Պատվիրատուներն են համարվում Ուքան Քորիադի-նը և նրա եղբայր Պ[...]-յական Վախրադինը. Սարգսի որդիները և Ուքանի հարսը՝ Դապտա-խաթունը: Նրանք գնել էին վանքը բոլոր հողերով, կառուցել տաճար և շնորհել անշարժ կալվածքներ: «Որպես վարձատրություն սրա դիմաց,- գրում են պատվիրատուները,- հայր. (առաջնորդ) Սարգիսը և մյուս եղբայրները յուրաքանչյուր շաբաթ (պատարագ) սահմանեցին երեք խորաններում մեր հոր՝ Սարգսի համար, և մի՞ թե նա մերը չէ, թող ծառայեն նույնիսկ չորս օր արքաուն Սարգսին: Ով որ դեմ կլինի մեր շնորհատվություններին, թող դատվի մեր Քրիստոսի (Տիրոջ) կողմից: Գրիչ՝ Մխիթարիչ»: Հարցն այն է, թե արդյոք այդ տարօրինակ, անսովոր վերապահումը («մի՞ թե նա մերը չէ, թող ծառայեն») վերաբերում է վանքին, թե անձին, մասնավորապես՝ արքաուն Սարգսին: Վերջին դեպքում նկատողությունը

միանգամայն տեղին կլիներ, եթե այդ վանքը լիներ հակաքաղկեդոնական, այսինքն ազգային-հայկական. «միթե այն մերը չէ: Թող ծառայեն Սարգիսին չորս օր, նույնիսկ եթե նա արքատուն է (քաղկեդոնական)»: ¹²⁴

Կարմիր վանքի արձանագրության մեջ հիշատակված Սարգիսը, եթե իսկապես լիներ ասորական ուղղության քաղկեդոնական, ապա նրա հարավային ծագմանը միանգամայն համահունչ կլինեին նրա ազգականների մուսուլմանական անունները (Ուքան Քորիադին, Պ[...]ապկան Վախրադին, Դապտա-խաթուն): Այս առումով հետաքրքրական է, որ Աղթամարի վանքի վերաբերյալ 1326 թ. գրված մի հիշատակարանի մեջ որպես նվիրատուներ հանդես են գալիս Սեֆեդին Արքայունը և Խեդենեկ Արքայունը (Թովմա Արծրունի, հրատ.

¹²⁴ {Արձանագրությունը հետագայում վերանայել է եենց Ն. Մտարը, ով Անիի պեղումների ժամանակ գտնել էր նույն «արքատուն Սարգիսին» վկայակոչող մեկ այլ հիշատակում, որի եիման վրա էլ նրան հաջողվել էր վերականգնել և ավելի ստույգ ընթերցել վերանշված Լուրմիր վանքի աղճատված արձանագրությունը, մասնավորապես անունները թվարկելիս: Հստակաձև թուսերնեով երկու անգամ երատարակել է Պ. Մուրադյանը և մեկնարանել այն. «Во время XI-й аннийской кампании Н. Я. Марр откопал надпись о постройке колокольни, где упомянут тот же Саргис («фигурные буквы») ...»ին խորանին պատարագն գթրիտոս մ...ն Սարգիս և Սթթ և Սարգիս արքատուն...» – «взамен определили служители (сей церкви...) придела совершать литургию Христову... (на пользу Саргису и Стни и аркауну Саргису...)» ([Н. Марр], От редактора, стр. XIII). На этой основе Н. Я. Марру удалось восстановить искаженный текст кармирванкской надписи: Եւ նթթ ևւ մնր չէ > նւ իթթ ևւ մնր չէ > նւ Սթթ ևւ Մնրչն (resp. Մնրչէ). Теперь перевод этой сложной, но ценной упоминанием «аркауна», надписи таков: «...Отец Саргис и остальные братья взамен определили (чтобы) каждую субботу 3 придела нашему отцу Саргису и Стни и Мерчно совершали литургию и 4 дня аркауну Саргису. Кто будет противиться нашим пожалованиям, да будет судим Христом нашим (Господом). Писец Мхитар» (ср. Н. Марр, От редактора, стр. XIV; ср. Н. Марр, Ани: книжная история и раскопки на месте городища, – Т-Р, 1913, XIII, стр. 35). При переиздании «Аркауна...» Н. Я. Марра необходимо внести эту поправку, поскольку сам автор работы спустя семь лет писал: «Эта, как теперь выясняется, фантастическая фраза, увы, была переведена и истолкована», со ссылкой: Марр, Аркаун, монгольское название христиан..., 1905, стр. 65», ևն ն Մурадян, Неопубликованная статья, стр. 56-57 (=Մурадян, Кавказский культурный мир, стр. 290-292) այսինքն «Եւ նթթ ևւ մնր չէ» բառակապակցության փոխարեն պետք է կարդալ. «ևւ Սթթ, ևւ Մնրչն (հնմուտիս Մնրչէ)», որոնց համար «յուրարանյուր շարաթ պատարագ ստեմանեցին երկը խորաններում» – Մ. Շ.):

Պատկանով, էջ 321)¹²⁵: Այդ անունները սերտորեն կապված են Աղթամարի կաթողիկոսների ճակատագրերի հետ, որոնց պատմությունը բավական անորոշ է, իսկ ԺԴ դարում՝ ընդհանրապես պարզ չէ: Հավաստիորեն հայտնի է միայն, որ Աղթամարի կաթողիկոսությունը միառժամանակ թիրախ է հանդիսացել հայ կաթողիկոսների և վարդապետների լուրջ՝ «անլուծանելի» նզովքների համար, բայց պատճառը պարզ չէ: Արդյո՞ք խնդիրն այն էր, որ Աղթամարի կաթողիկոսությունը չէր ենթարկվում համայն հայության կաթողիկոսներին: Ես ընդամենը բարձրացնում եմ հարցը՝ ամենին չցանկանալով պատմության մութ էջերը ծառայեցնել հոգուտ իմ տեսության: Բավական է փաստել, որ հարավային Հայաստանում՝ Վասպուրականում, «արքայուն» բառը հայտնի է եղել, գոնե ազգանվան իմաստով և այդ դեպքում հնարավոր է քաղկեդոնական նախնիներից ժառանգած լինելը: Հետաքրքրական զուգահեռ կա արաբական անվանումներով այս ազնվական [66] հայ *սարքսունների* և Պարսկաստանի Արզուն խանի կողմից 1288 թ. Նիկողայոս IV պապի մոտ ուղարկված պատվիրակության անդամներից մեկի անվան հետ: Այդ անունը Սաբադին Արքաուն է (Henri Cordier, The Book of Ser Marco-Polo, I, p. 290, fn. 1): Historia Tartarorum ecclesiastica-ի (Helmstadii 1741, p. 75) հեղինակ Հ. Պոլսենը ներկայացնում է մյուս անդամների անունները. Բարսունան՝ ույղուրական մի վանական, ով նշանակվել էր եպիսկոպոս իր եկեղեցու նեստորական պատրիարք Յահբալահայի կողմից, Թոմա Անֆուզացին և թարգմանիչ Ուզուետը: Վերջին երկուսը մասնակցել էին նաև առաջին պատվիրակությանը, որն ուղարկվել էր երեք տարի առաջ Մանգու խանի կողմից Ոսորիոս IV պապի մոտ: Սաբադին Արքաունը (Archaon) ազնվական էր: Հնարավոր է, որ նա նույնպես հայկական ծագում ուներ, ինչպես Աղթամարի 1326 թ. հիշատակարանի

¹²⁵ Իմ ուշադրությունից լրիվաբար այս հատվածի համար պարտավոր եմ Ն. Արմենյան:

մեջ հիշատակված հայ իշխանները՝ «արքաունները»: Սաբադին անունն¹²⁶ ամենայն հավանականությամբ, նույնն է ինչ արաբական Սահմադիները: Այդ անունը շատ տարածված էր հայերի մոտ, ոչունը արտասանում էին այն առանց «հ»-ի՝ Սամադին (տե՛ս Н. Марр, Новые материалы по армянской эпиграфике, 1893 = Зап. Вост. Отд., VIII, стр. 84): Նրա դավանանքի մասին որոշ վստահությամբ կարելի է ասել, որ նա ո՛չ նեստորական էր և ո՛չ էլ, իհարկե, հակոբիկյան: Հենց դա էլ կարող էր հեշտացնել նրա հարումը կաթոլիկ եկեղեցուն: Նա միակն էր իր ընկերներից, ով արժանացավ «մեղքերի թողությամբ առաքելական օրհնությանը» (Paulsen, Historia Tartarorum ecclesiastica, p. 77): Պապը՝ դիմելով նրան գրում է. (նշվ. աշխ., էջ 91) «*laetantes in Domino, quod sis fidei catholicae lumine illustratus*»¹²⁷: Միանգամայն հնարավոր է, որ Սաբադինը, հմպտսխ.՝ Սամադինը, քաղկեդոնական էր և նրա անվանը կցված Archacon-ը այդ հանգամանքի արտացոլումն է՝ կապված արքաուն բառի վերոնշյալ իմաստի հետ¹²⁸: Ուշագրավ է նաև այն, որ նույնիսկ Յահբալսահա III պապի՝ հավատի քարոզչության մեջ հիմնավորվում է հունական, հետևաբար քաղկեդոնական դավանանքի առանձնահատկությունները և ոչ թե նեստորական մուլտրության: Շարուն սրանից եզրակացնում է, որ պապը հստակորեն տեղեկացված չէր մոնղոլների շրջանում քրիստոնեական դավանանքի մասին¹²⁹: Բայց հնարավոր [67] է, որ պապն ավելի քաջատեղյակ էր

¹²⁶ Հմմտ. նաև Saabedin տարբերակը, տե՛ս Chabot, Histoire de Mar Jabalaha III Patriarche des Nestoriens (1281-1317) et du moine Rabbin Cauma, Paris, 1895, p. 237:

¹²⁷ {«Ի Տնր որպիսացողները, նրանք են, ովքեր իջակալոր են կաթոլիկ եպիսկոպի լույսով» - թարգմ. Մ. Շ.):

¹²⁸ Այս դեպքում չի կարելի բախարսթիլ բառի «քրիստոնյա» ընդհանուր իմաստով, ինչովնա անում է Շարուն (նշվ. աշխ., էջ 207), քանի որ դեպքումայստե՛ս մյուս քրիստոնյա անդամներն այդ անունը չեն կրում:

¹²⁹ Նույն տեղում, էջ 195. « Cette profession de foi est la même qui avait été rédigée par Clément IV pour être transmise à l'empereur Michel VIII Paléologue. Elle vise surtout les erreurs des Grecs et n'insiste en aucune façon sur les dogmes rejetés par les Nestoriens. On voit par là que le pape n'était pas très exactement informé de l'état de la religion chrétienne chez les Mongols »:

հարցին, քան «մոնղոլական նեստորականության» վերաբերյալ բացառապես միակողմանի պատկերացում ունեցող մերօրյա գիտնականները, որոնց կարծիքն ամբողջապես կիսում է նաև ինքը՝ Շաբուն:

Մինչդեռ այս բոլոր *արքայունները*, նույնիսկ նրանք, ովքեր անկասկած հայ *արքայուններ* էին, կարող էին ի հայտ գալ մոնղոլների ազդեցությամբ. նրանք մոնղոլական դարաշրջանից են: Այդուհանդերձ, հետաքրքրական է և հազիվ թե պատահական այն, որ «արքայուն» եզրը հաստկապես հայտնի է հայերի մեջ, անգամ զուտ մականվան տեսքով:

Այսպիսով, իմ զեկույցը հանգում է հետևյալ եզրակացություններին՝ չհավակնելով դրանց բոլորի բավարար ապացուցված լինելուն, երբեմն ուրվագծելով ճանապարհը կամ պարզապես կատարելով հարցադրումներ, որպեսզի հրավիրենք մասնագետների ուշադրությունը հայ-քաղկեդոնական բարձր մշակութային-պատմական ժառանգության ուսումնասիրման և այն ամենի ուղղությամբ, ինչը կարող է լույս սփռել այդ հարցի վրա.

1) Քաղկեդոնականությունը Հայաստանում եղել է հաստատուն, խորր և լայն արմատներ ունեցող առաջադեմ կրոնա-մշակութային շարժում, որը որոշ ժամանակ բավական արգասաբեր է եղել հայերի ազգային մտավոր կյանքի վերելքի գործում:

2) Հակաքաղկեդոնականության հաղթանակից հետո հայ քաղկեդոնականներն սկսեցին անհետանալ ապագա այնպե՛ս անհետնալիս թաց արդյունքում՝ նախապես տարրալուծվելով քաղկեդոնականների երեք հիմնական խմբերի մեջ՝ վրացական (վրացիների), հունական (հույների) և ասորական (մելքիտների), որոնք, հնարավոր է, կոչվել են *արքայուններ*:

3) Վրացականացված Տայք-Կղարջքից՝ Տառ-Կլարջետիից հայ-քաղկեդոնական Գրիգոր Բակուրյանը ԺԱ դարում Բուլղարիայում

հիմնեց վրացական Պետրիցոնի վանքը, ընդ որում հարց է ծագում, թե արդյոք հույների կողմից վանքին պաշտոնապես տրված չէր արտոնությունների լիազորություն՝ տեղի պավլիկյանների դեմ պայքարելու նպատակով:

4) Պետք է ընդունել առհասարակ հայ քաղկեդոնականների՝ այդ թվում նաև հունամետ խմբի հայ քաղկեդոնականների, Բյուզանդական կայսրության պետական և եկեղեցական կյանքում ունեցած կարևոր մասնակցության բաժինը:

5) Հայ քաղկեդոնականների՝ *սրբաունների* գաղութը, ոչոնք ապրել են նույն [68] կյանքով, ինչ և ասորական մելքիտները, Ը դարից գոյություն է ունեցել Միջին Ասիայում, և հավանաբար ձեռք նրանցից մոնղոլները ԺԳ դարում ուղղակիորեն կամ անուղղակիորեն յուրացրել են սրբաուն եզրը, եթե նույնիսկ նրա ստուգաբանությունը կապված է *օրջոն*-ի հետ:

Ն. Ման

NICOLAS YAKOVLÉVITCH MARR

**ARK'AUN,
L'APPELLATION MONGOLE DES
CHRÉTIENS EN CONNEXION AVEC
LE PROBLÈME DES CHALCÉDONITES
ARMÉNIENS**



ARK'AUN,
L'APPELLATION MONGOLE DES CHRÉTIENS EN
CONNEXION AVEC LE PROBLÈME DES
CHALCÉDONITES ARMÉNIENS¹

« Si quelqu'un se flatte de savoir quelque chose,
il ne sait encore rien comme on doit le savoir »

I Cor. 8, 2

